

ՈՒՍՈՒՄՆ
ՏՐԸՄԸՐԸՆՈՒԹԵԱՆ

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ Ի ԳԱՂՂԻԵՐԵՆԻ
ՄԵԼԻՔՈՆ Պ. ՊՕՂՈՍ ՓԱՓԱԶԵԱՆՑ

ՀԱՒԱՆՈՒԹԵԱՄԲ

ԱԶԳԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ



Ի ՏԳԱՐԱՆԻ

ՆՈՒՄԵՐՆԵՐԸ ԱՓՈՒՈՑ Ծ. ՅԱՆՎԱԿԱՆՑ

ՅԵՐՈՒՍԱԿԻՄ

1869



Manuscript of the Armenian Bible

ՈՒՍՈՒՄՆ

1896

ՏՐԱՄԱՐԱՆՈՒԹԵԱՆ

1880

1880

ՈՒՍՈՒՄՆ
ՏՐԸՄԵԲԸՆՈՒԹԵԱՆ

ԹԱՐԳՄԱՆԵԱՅ Ի ԳԱՂՂԻԲԵՐԵՆԻ
ՄԵԼՔՈՆ Պ. ՊՕՂՈՍ ՓԱՓԱԶԵԱՆՑ

ՀԱՒԱՆՈՒԹԵԱՄԲ
ԱԶԳԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ



Ի ՏՊԱՐԱՆԻ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՒՈՅ Ս. ՅԱԿՈՎԲԵԱՆՑ
ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

-1869-

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ԳԷՈՐԳԱՅ

ՍՐԲԱԶԱՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀՐԱՄԱՆԱԻ

ՍՐԲՈՅ ԵՐԿԻՍԱՆՂԷՄԻ ՊԱՏՐԻԱՐԲ

Տ. Տ. ԵՍԱՅԵԱՅ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՒ Ի ՏԵՂԱՊԱՀՈՒԹԵԱՆ


ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ Կ. ՊՕԼՍՈՅ

Տ. ԱՐԻՍՏՈԿԼԵՍԻ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Handwritten: A I / 15088

Handwritten: 88



Արդէն յայտնի է որ 1867—64 կեդրոնական վարչաւթեան ղուտումնական խորհուրդը ազգային վարժարանաց ընդհանուր բարեկարգութեան կանոնադիր մը, ուսմանց ցուցակ մը (փրօկրամ) եւ օրագրութեանց զատճենք մը դատարաստած եւ հրատարակած է : ղուտմանց ցուցակին համեմատ բովիմը գլխոցական կարէւոր դասագրքեր աչ դատարաստած կամ դատարաստել տուած եւ վաւերացուցած է , (տես նոյն խորհրդոյն օւղեկագրին 70դ. էրեսց, որ 1865 ազրիլի վերը իբրեւ առաջին երկամեայ համարատուութիւն հրատարակուեցան,) որոնցմէ մեկ բանին արդէն ի շոյս ընծայուած են : Այն դասագրոց կարդը կը գտնուի նաեւ սոյն Տրամարանութիւնս աչ , որուն գաղցիերէն բնագիրը եւ Սիլիակին (Աքքէր) արձանիբը եւ գաղցիական վարժարանաց մէջ գտած ընդունելութիւնց ուշագրութեան տանելոյ իշեաչ խորհուրդը, իմաստ յարմար գտաւ մեր ազգային վարժարանաց մէջ եւս մտցնել ու , եւ այս մէլնտոյ ուսուցանելու արամարանութիւնց : ղուտի յիշեաչ խորհրդի հաւաանութեամբը սոյն Տրամարանութիւնս յանձնեցի այն առէն իմ սիրելի եջքօրս ի թարգմանութիւն, որ այժմ ի շոյս կ'ընծայուի Ս. Երուսաղեմի Առաբելչական Աթոնոյ տղարանին մէջ յօլուտ Հայ մանկուոյն, որուն Հառաչագ խնութիւնց ի սրտէ կը ցանկամբ :

Հ Կ Ս ի 1869

Կ. Տօլի :


Ս. Գ. Գ. ՓԵՓԵԶԵՆԵՑ



ԱԶԳԱՍԻՐ ՏԷՐ

Առաւմտական խորհրդոյ հաւանութիւնն ստացող ներկայ Տրամաբանութիւնն զապցիւնն շնորհ թարգմանեց ձեռնորդիցի սիրելի երբօրս յանձնարարութեամբս շոր կց վարձամ հարկիչ Չէր վ սեմութեան անուանց իբրեւ Ասենազեոսի նոյն արդիւնատար խորհրդոյն, որ տասն եւ չորս ամսոյ միջոցի մէջ ազգային ջարձարանաց բարեկարգութեանց եւ յառաջագիմութեանց համար ամեն շանք եւ ջոհոցութիւն յանձն առաւ, եւ յարասեւ աշխատութեամբ, այնպիսի գիւտարին ձեռնարկութեան մը մէջ, յաջողեցաւ ջանացան օգտաւետ միջոցներ ձարեց դաստիարակութեան եւ ուսմանց ծաւալմանց համար, եւ անոնց զմեական կերպարանափոխութեան սերմերը ցանել, որոց արդիւնատարութիւնը հետզհետեւ շտապի պիտի բլլայ, եւ մեծ դաստիարակներէ թէ նոյն դատարարման խորհրդոյն եւ թէ Չէր վ սեմութեան, որ անոր ատենադէտութիւնը ջարեցիք թիտ արժանատար կերպիւ :

Ընդունեցէք ուրեմն, վ սեմափայլ Տէր, այս գոյցն հաւերիս հետ եւ իմ խորին յարգանացս հաւաստիքը :



ՈՒՍՈՒՄՆ

ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԵԱՆ

ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ ամբողջ Փիլիսոփայութիւնն չէ :

Փիլիսոփայութիւնը, ընդհանուր ամամբ եւ բառական նշանակութեամբ, մարդկային բանալարութեան վերաբերեալ ուսումները կը բովանդակէ, այն ումն ուսումները որոնք Մտտեաճգիտութեան ուսումէ սկսեալ մինչեւ աննշմարելի հիւլէից ուսմանը կը հասնին, և ումն գիտութիւնք իսկ, առանց դուրս հանելու քանակագիտութիւնը, բնագիտութիւնը և բնական պատմութիւնը, փիլիսոփայութեամբ կը գտնեն իրենց գոյութեան եղանակը, բարգաւաճման միջոցները և ճշմարտութեան սպացոյցը :

Գտնական փիլիսոփայութիւնը, կարելոր եղածին չափ սահմանափակեալ ալ

ըղալով, կը պարունակէ դարձեալ Ռնա
կան աստուածաբանութիւնը, Հոգեբա
նութիւնը՝ կամ ուսումն մարդկային հո
գւոյ, Տրամաբանութիւնը՝ կամ ուսումն
օրինաց խորհելոյ և ուսումնական եղանա
կաց, Վարդականը՝ կամ ուսումն մարդ
կային պարտուց և իրաւանց :

Վասական փիլիսոփայութիւնը, իւր
բանաւոր և կանոնաւոր ընթացքովը, նախ
Հոգեբանութեանէն կ'ըստիսի, որ կը սահ
մանէ հոգին և անոր կարողութեանց բը
նութիւնը, զօրութիւնը կ'որոշէ : յետոյ
Տրամաբանութեամբ կը սորվեցընէ թէ
հոգւոյն կարողութիւնները բանավարու
թեան միջոցաւ ինչպէս պիտի պարապին
ճշմարտութեան ուսմանը : Վսանկով փի
լիսոփայութիւնը Ռնական աստուածա
բանութեան մէջ աւելի ապահովապէս
կը մատչի Վստուծոյ գոյութեան, ստոր
գելեակաց առնչական բարձր խնդրոց . և
Վարդականին մէջ ալ մարդուս և ընկե
րութեան պարտքերը կը բննէ :

Հոս հիմա կը դնեմք դասական փի
լիսոփայութեան չորս մասանց վրայ կա
րեւորագոյն երեւցած տեղեկութիւններ :

Գ Լ Ո Ի Խ Ա .

Տրամաբանութեան նպատակը, ուրիշ զխոռոչ
Քեանց հետ անոր ունեցած վերաբերու-
թիւնները :

Տրամաբանութեան նպատակն է ա-
ռաջնորդել մարդս՝ ՚ի ճանաչումն և ՚ի
կիրառութիւնն ճշմարտութեան :

Տրամաբանութեան նեցուկը Բանալ-
բանութիւնն է (բեղժն) :

Բանալարութիւնը՝ մարդուս եւ
մարդկութեան սեպհական եղած մտաւոր
և բարոյական զօրութիւնն է :

Սարդկութեան մէջ բանալարու-
թիւնը ճշմարտին, բարւոյն և գեղեցկին
զօրութիւնն է, որոնց գաղափարը և ըզ-
գացմունքը նախապէս ընդունուած և հա-
ւատարմապէս աւանդուած՝ թէ՛ մտա-
ւորական և թէ՛ բարոյական դատման ան-
փոփոխ կանոն են, կամ ուրիշ անունով
հասարակաց զգացում և մարդկային գի-
տակցութիւն ըսուածն է :

Իւրաքանչիւր անհատի մէջ՝ բանա-
լարութիւնը հասարակ զգայարանաց և

մարդկային գիտակցութեան մէկ մասն է . այս գիտակցութեամբ մասնաւոր բարի զգացմունքը և անհատական գիտակցութիւնը առաջ կուգան :

Մարդու կարողութեանց և գործողութեանց մտաւոր և ազատ կանոնովն , այսինքն բանավարութեամբ մարդս անասունէն կը տարբերի : Անասնոց մէջ բնական ազգմունք մը միայն կ'երեւայ , որնոր իւրաքանչիւր տեսակին՝ իւր բնութեանը համեմատ ըրած գործողութեանց կոյր կանոնն է :

Տրամաբանութիւնը միւս գիտութեանց հետ վերաբերութիւն ունի :

Վիպո-լիւնը դրական ծանօթութեանց կանոնաւոր հաւարածոյ մ' է , որոնց նպատակն է հաստատել ճշմարտութիւնը եղելութեանց բնութեանը և օրինաց վրայ , թէ՛ նիւթական կարգէն ըլլան և թէ աննիւթ :

Վիտութիւնք տարբեր տարբեր բաժանմունք ունին , բնական , չափաբերական և բարոյական :

Բնական գիպո-լիւնաց առարկայ են նիւ-

Թական էակներն և կենդանի էակաց նիւ-
Թական մասերը, ինչպէս են՝ բնագիտու-
Թիւն, բնալուծութիւն, բուսաբանու-
Թիւն, կենդանաբանութիւն, և անդամա-
զննութիւն :

Չափաբերական կամ ճիշդ գիտութեանց ա-
ռարկայ են՝ չափի, քանակութեան, տա-
լածման, զօրութեանց դադարափարները և
վերաբերութիւնները, ինչպէս են՝ թուա-
բանութիւն, գրահաշիւ, երկրաչափու-
Թիւն, մեքենաբանութիւն և այլն, մէկ
խօսքով քանակագիտութիւն (Մաթիմատիկայ) :

Իսկ Բարոյական գիտութիւնք կը ճառեն
Մատուծոյ, մարդուս, ընկերականութեան
և բնութեան վրայ, երկու տեսութեամբ
նկատելով, իմացականութեամբ և գիտա-
կցութեամբ : (Տես գլուխ ԺԲ :)

Մասնկով գիտութիւնը, ինչ վերա-
բերութեամբ ալ որ մտածուի, ճշմար-
տութիւնը կը հաստատէ . իսկ տրամաբա-
նութիւնը կ'առաջնորդէ մարդս ճշմար-
տութիւնը ճանչելու . ուրեմն տրամաբա-
նութիւնը գիտութեանց հետ սերտ վե-
րաբերութիւններ ունի, երկուքին զե-
րար լծորդողը ճշմարտութիւնն է, և ինչ

վերաբերու թիւն որ միջնորդը և վախճա-
նը ունին, նոյնն ալ ասոնք ունին :

Այսպէս տրամաբանութիւնը ֆիզի-
զական և բնական գիտութեանց փոխ
կուտայ իւր գիտողութեան, փորձի և
դաստիարակութեան եղանակները : Նիշդ
գիտութեանց ալ փոխ կուտայ իւր մա-
կաբերութեան, սահմանի, եւ ենթադ-
րութեան եղանակները և այլն : Իսկ բա-
րոյական գիտութեանց փոխ կուտայ
իւր այս կամ այն եղանակները խնդրոյն
տեսակին նայելով, յաջորդաբար գործա-
ծելով մերթ փորձառական եղանակը և
մերթ բանաւոր եղանակը : Թո՛ղ որ տրա-
մաբանութիւնը շատ օգնած է մարդու օ-
ջանիցը ի գիւտ և յապացուցութիւն ճշ-
մարտութեան, անի այս ջանքը կ'ուղղէ
այն կիրառութեանց մէջ, զորոնք պէտք
է ընել թէ՛ մտաւորաբար արուեստիւ և
թէ՛ բարոյականաբար վարքով :

Արտեւոք գիտութեան մը կիրառու-
թիւնը, տեսականի մը գործնականն է :

Արուեստը երկու կը բաժնուի, ազա-
րական և Ռգիւնական :

Ազգաբանակիան կ'ըլլայ արուեստը , երբ պէտք եղած աշխատութեան մը համար հանձար և ձեռք միաբան կը գործեն , ինչպէս՝ նկարչութիւն , քանդակագործութիւն և վիրաբուժութիւն :

Մէտէնակիան կ'ըլլայ արուեստը , երբ ձեռքը հանձարէն աւելի կը յոգնի , երբ գործնականը տեսականէն աւելի է , ինչպէս են՝ որմնադրութիւն , հիւսնութիւն , ատաղձագործութիւն , և այլն :

Տրամաբանութիւնն ալ թէ՛ գիտութիւն և թէ՛ արուեստ է :

Տրամաբանութիւնն գիտութիւն կ'ըլլայ , երբ մարդուս կարողութիւնները կը ճանչնայ և կը վերլուծէ , երբ գաղափարները կը սահմանէ և կարգի մը կը դնէ , երբ կը վիճէ և կ'ընտրէ մեթոսները :

Արուեստ կ'ըլլայ երբ իւր տեսականը պատճառաբանութեանց պայմաններուն , տրամախոհութեան և ապացուցութեան կը պատշաճեցրնէ :

Ուրեմն տրամաբանութիւնն ալ երկու կերպ է , բնական և արտօտաբան , կամ մանաւանդ ժիլիսոփայական :

Ինչպիսիք անուս անձանց վրայ երեւ-

ցած ուղիղ դատում և լաւ գգացումն է :
Իսկ փիլիսոփայականը դարձեալ նոյն
բնականն է , միայն թէ ասի աւելի ուս
մամբ և կրթութեամբ կը զարգանայ և
կը բարգաւաճի :

Գ Լ Ո Ւ Խ Բ .

Հոգւոյն կարողութեանց , զգայունութեան
(Sensibilité), իմացականութեան (Entendement)
և կամաց (Volonté) վրայ :

Տակաւին հոգւոյն կարողութեանց
վրայ չխօսած՝ նախ ըսենք .

Սարգս կը բաղկանայ ի հոգւոյ և ի
մարմնոյ , որոնց երկուքն ալ իրարու հետ
միացած և իրարմէ կախումն ունին :

Հոգին աննիւթ էակ մ' է , որ կըզ
գայ , կ'իմանայ և կը կամի :

Սարսինը նիւթական էակ մ' է , որ
հոգւոյն գործողութեանց օգնելու յար
մար գործարաններ ունի :

Հոգին գործողութիւն մը թէ կ'ըն
դունի և թէ կ'ընէ :

Որովհետեւ հոգին խել մը իրաց

առջեւ անգամ անտարբեր չը կենար, ըսեւ է թէ՛ իւր ներկայ վիճակին մէջ միշտ այս կամ այն փոփոխութեան ենթակայ կ'ըլլայ, և այս է կրօնորական կարողութիւնը: Այն ատենն ալ հոգին կրնայ տարբեր հանգամանաց միանգամայն բաւական ըլլալ, բայց իրեն հաճոյ եղածը կ'ընտրէ, որոց կրնայ ուրիշներէ աւելի սխառասխառնել. ահա այս է ներգործական կարողութիւնը:

Հոգւոյն այս ներգործական կարողութիւնը անզուգական է. և ելեկտրական շարժման արագութիւնն անգամ անոր անկատար սխառկեր մ' է:

Հոգւոյն այս կրաւորական և ներգործական յատկութիւնները անոր կարողութիւններէ կը յայտնուին:

Հոգւոյն կարողութիւններն են եղանակաւորում ընդունելու սխառչաճութիւնը և իւր ունեցած ներգործական զօրութիւնը:

Այսպէս Աստուած իւր ստորոգելի ներուրը կը յայտնուի, և նիւթն ալ իւր յատկութիւններուրը:

Հոգւոյն գլխաւոր կարողութիւններն են, զգայունութիւն, իմացականութիւն և կամօք :

Օգայունութիւնը այն կարողութիւնն է, որով Հոգին թէ ներքին և թէ արտաքին կերպով կ'իմանայ ինչ որ կը լլայ, և նոյն իմացածին ալ կը պատասխանէ : Օգայունութիւնը այն կէտն է, ուսկից Հոգւոյն բոլոր գործողութիւնները առաջ կուգան. եթէ Հոգին անզգայ ըլլար, ոչ ըմբռնում կ'ունենար և ոչ կամք : (Տես գլուխ Գ :

Իմացականութիւնը այն կարողութիւնն է, որով Հոգին կ'իմանայ, կամ թէ գաղափարներ կ'ունենայ և կը կազմէ :

Հոգին իր իմացականութիւնը կը պատշաճեցնէ թէ իր ներքը և թէ իրմէ դուրս եղած բանին ծանօթութեանը, որն որ կրնայ թէ նիւթական կարգէն ըլլալ և թէ աննիւթական :

Առաջին պարագային մէջ Հոգին իւր ունեցած գիտակցութեամբը կ'իմանայ. երկրորդին մէջ արտաքին զգայարանաց ձեռքով. իսկ երրորդին մէջ Հոգին հասարակ զգայարանաց աւանդութեամբ և տրամախոհութեան գործողութեամբ կը ճանչնայ :

Այսպէս իմացականութիւնը մերթ
ընդ մերթ, կամ մանաւանդ միանգա
մայն է :

Ներքին շփոթում, այսինքն հոգւոյն՝ ին
քըզինքն իմանալու կարողութիւնը :

Արտաքին շփոթում, այսինքն հոգւոյն՝
արտաքին զգայարանաց ձեռքով իմանա
լու կարողութիւնը :

Թէ բնական և թէ փիլիսոփայական
բանավարո-թիւնը, այսինքն՝ հոգւոյն այն կա
րողութիւնը որով կ'իմանայ աննիւթա
կանը, (Աստուծոյ և անոր գոյութեան
սկսեալ՝ մինչև ստորին գոյացութեանց
ամենափոքր երեւոյթը,) ինչպէս նաև բո
լոր գոյութեանց՝ ինչ որ ալ ըլլայ բնու
թիւննին, առընչական օրէնքը և վերա
բերութիւնները :

Կամքը այն կարողութիւնն է, որով
հոգին կը խորհի, կ'ընտրէ և կ'որոշէ իւր
ընելիքը :

Կամքին կարեւոր եղած պայմանը ա
շխարհիւնն է :

Աշխարհիւնը այն կարողութիւնն է,
որով հոգին ուզածին պէս իւր ներգոր
ծական կարողութիւնը կը գործածէ :

Սեր ըսած ազատութիւնը բացարձակ և հոգեբանական ազատութիւնն է : (Տես գլուխ ԺԵ :

Վիտելու է թէ առանց ազատութեան կամք չը կրնար ըլլալ, և առանց կամաց՝ ազատութիւնն անօգուտ է :

Հոգւոյն այս բոլորովին բնութեամբ և հանգամանօք տարորոշ կարողութեանց մէջ ներքին և կարեւոր կապակցութիւն մը կայ, որովհետեւ իւրաքանչիւրին գործողութիւնը այլոց գործադրութեանը հարկաւոր է . թող որ շատ անգամ ամենն ալ միեւնոյն ատենի մէջ կը գործեն :

Հոս հարկաւոր է ըսել՝ թէ այս երեք գլխաւոր կարողութիւնները, և ասոնց հետ միացած կարողութիւններն ալ մէկ ամբողջի մը կը վերածուին . այս պարզ և անբաժանելի ամբողջը Տարրոյս հոգին է :

Գ Լ Ո Ւ Խ Գ .

Զգայում, թեան , (Sensibilité) Զգայականութեան (Sensation) եւ, Զգացմանց (Sentiment) վրայ :

Փոքր ինչ գիտողութիւն մը ընելով

կրնանք հասկընալ թէ հոգին իրեն եղած
տպաւորութեանը, ինչպէս նաեւ իւր
կենդանի պահած մարմնոյն գործողու-
թեանց գիտակցութիւնն ունի. և թէ
արտաքին երեւոյթները որոնք հոգին կ'ի-
մանայ, ինչ որ ալ ըլլայ բնութիւննին, և
որչափ որ ալ ըլլան, անկար և անգործ
չեն կրնար գտնել զհոգին: Ալ եթէ մէկ
կողմէն իրեն տպաւորութիւն եղած ա-
տեն՝ զարմանալի կերպով, անխռով և ան-
շփոթ վերաբերութիւն մը կ'ունենայ
խել մը իրաց միանգամայն, միւս կողմա-
նէ իւր հանձարեղ և ազատ գործողու-
թեամբը միշտ կրնայ սրոշել և ընտրել:
Այսպէս անհարկաւոր և արդէն ծանօթ
իրերն ալ կը տեսնէ առանց կասելու. ու-
րիշներն ալ թէ որ զանոնք գիտնալովը շահ
մը առնելու յոյս ունի, կը պահէ որ ետ-
քը քննէ, քանի որ մտադրութիւնը կը
շարունակէ արդէն զբաղած իրաց վրայ
իւր ուղած չափովը և համեմատութեամբ:
Ահա այս գործողութիւնը հոգւոյն զգայ-
ողութիւնն է:

Ուրեմն զգայողութիւնն այն կարո-
ղութիւնն է, որով հոգին կ'իմանայ և կը

շարժի, և իր վրայ զգացած ազդարարութեանց և շարժմանց կը պատասխանէ :

Ասիկից կը հետեւի թէ զգայունութիւնն երկու որոշ աստիճան ունի. առաջինն այն է, ուր հոգին տպաւորութիւն ընդունելով՝ միշտ պատրաստ են թակայ կ'ըլլայ իւր վրայ որ և է ազդեցութեան մը գործողութեան : Ահա այս է զգայունութեան աւելի տարրական կերպը, այսինքն՝ հոգեբանական զգայունութիւն :

Արկրորդ աստիճանն այն է, ուր հոգին իւր վրայ եղած գործողութենէն աւելի կամ պակաս շարժեալ, աւելի կամ պակաս ուժով կը գործէ : Այս է ահա զգայունութեան աւելի կատարեալ սրամանը, որ է Բարոյական զգայունութիւն, որ լիկ զգայունութիւն ալ կ'ըսուի :

Օգայունութեան թէ հոգեկան և թէ բարոյական երեւոյթքը իւր վրայ ներգործող պատճառներէն կախումն ունի :

Այս պատճառները կամ հոգւոյն անտարբեր կ'ըլլան, և կամ անոր անտարբեր չըլլալով՝ համակրութիւն կամ հակակրութիւն մը կը պատճառեն :

Արբ զգայունութեան վրայ եղած

տպաւորութիւնները չազդեն հոգւոյն , հոգին ոչ հաճոյք , ոչ վիշտք , ոչ ուրախութիւն , և ոչ տրամութիւն կրգգայ . այն ատեն միայն ներքին և արտաքին գործողութիւնները գիտնալ մը կ'ունենայ , ըսել է սրբալ ըմբռնում մը , վազանցուկ զգալ մը կայ :

Իսկ երբ զգայունութեան վրայ եղած տպաւորութիւնները հոգւոյն համակրական կամ հակակրական ըլլան , հոգին անմիջապէս ըմբռնելով՝ հաճոյք , վիշտ , ուրախութիւն , տրամութիւն կ'իմանայ . այն ատեն ահա շարժում մը կ'ըլլայ :

Չգայունութիւնը առանց կախում ունենալու հոգեկան և բարոյական ըզգայունութիւններէն , հոգւոյն եղած տպաւորութեանը նայելով՝ երկուք կ'ըլլայ , այսինքն՝ բնական և բարոյական :

Բնական կ'ըլլայ զգայունութիւնը , երբ հոգիին վրայ ներգործողը նիւթական պատճառ մ' է , ինչպէս՝ գոյն , համ , հոտ :

Բարոյական կ'ըլլայ , երբ հոգիին վրայ ներգործող պատճառը աննիւթական է , ինչպէս՝ գաղափար , յիշատակ , սէր :

Օգտայունութեան երկու գլխաւոր
երեւոյթներն զգայականութիւն և զգացո՞՞նէն :

Օգայականութիւնն այն է՝ զոր հոգին բնական պատճառի մը տպաւորութեամբ արտաքին զգայարանաց ձեռքով կ'իմանայ : Աւրախութիւն և վիշտն իսկ երբ առանց հոգւոյն խռովութիւն մը առթելու՝ մարմնոյն կ'ազդեն, կրնան ըզգայականութեան վիճակի մէջ մնալ :

Օգացո՞՞նէն այն է՝ զոր հոգին կ'իմանայ մտացածին կամ բարոյական պատճառի մը տպաւորութեամբ, տակաւին հաճոյ կամ անհաճոյ, ուրախութիւն կամ տրտմութիւն հետը շխառնուած :

Աւրախութիւնն և վիշտը՝ քիչ տեւելով ալ, հետեւանքնին երբ հոգւոյն վրայ աւելի կամ սակաւ ազդեն, զգայականութեան վիճակէն զգացման կ'անցնին :

Աւրիշ բառ չունենալնուս համար՝ ըզգայականութիւնը վաղանցուկ ազդարարութիւն մ'ալ կը նշանակէ, զոր հոգին մտաւորական և բարոյական առարկայի մը առթով կ'ընդունի, թէեւ ուրախութիւն և տրտմութիւն՝ որով և զգացում ալ տեղի չունենան : Այս մեր վերը


ըսած հոգեբանական զգայունութեան եւ
բեւոյթը կ'ըլլայ դարձեալ :

Չգայականութեան և զգայման հետ
պէտք չէ շիտթել փայտաորո-լի-ն և լճեռնոմ
բառերը . վասն զի տպաւորութիւնը նիւ-
թական իրաց՝ արտաքին զգայարանաց
գործարաններուն վրայ ըրած գործողու-
թեան հետեւանքն է :

Իսկ լճեռնոմը այն գործողութիւնն է,
որով հոգին կ'ըմբռնէ ինչ որ իւր զգայուն
կարողութեամբը կըզգայ, ինչ որ ալ ըլ-
լայ անոր պատճառին բնութիւնը : Արբ
այս պատճառը արտաքին զգայարանաց
ձեռքով ըլլայ, ըսել է թէ՛ լճեռնոմն ալ
արփային է, ապա թէ՛ ոչ՝ ներքին :

Արփային լճեռնոմք այսպէս կ'ըլլան իւ-
րերը . նիւթական առարկայն գործարա-
նին վրայ տպաւորութիւն կ'ընէ, հոգին
կ'իմանայ այս տպաւորութիւնը, և մար-
մնոյն հետ սերտ կապուած ըլլալէն կը ծա-
գի զգայականութիւնը . և ետքը անմի-
ջապէս զգայմամբ կամ առանց զգայման
տեղի կ'ունենայ ըմբռնումը՝ բացատրու-
ած պատճառին բնութեանը համեմատ :
Սակայն ներքին լճեռնոմք՝ աննիւթ ալ

A
15091



ուարկան հոգւոյն կը ներկայանայ առանց միջնորդի, որովհետեւ հոն տալաւորութիւն չըլլար : Հոգւոյն այս զգացած աղբեցութենէն կը ծագի ըմբռնումը, և մինչեւ զգացում ալ տեղի կ'ունենայ :

Տենչ և խորշոփն առաջ կուգան ըզգացումէն և զգայականութենէն, իրենց առարկայից համակրական և հակակրական ըլլալէն :

Ուրեմն ի՞նչ կամ քե՞նչը զգայունութեան մէկ գործողութիւնն է՝ համակրական ա՞ռարկայի մը ուղղեալ :

Իսկ խորշոփը հակակրական առարկայէ մը խոտորելով՝ եղած զգայունութեան մէկ գործողութիւնն է : Օգայունութեան աւելի կամ պակաս գործողութեամբ՝ իղձն ալ, ինչպէս նաև խորշումը, աւելի կամ պակաս զօրաւոր կ'ըլլան, մինչեւ որ երկուքն ալ շատնալով՝ բանալարութեան առաջնորդութենէն խոյս կուտան և կ'ըլլան կերպ :

Ուրեմն կերպը իղձ կամ խորշում մ'է, որուն բռնութիւնը կամաց սովորական իշխանութեան տակը չիյնար : Արբբը զին

քրն արտադրող առարկային հանգամանքը կ'առնէ . երբ այս առարկայն օրինաւոր և գովելի է , կիրքն ալ գեղեցիկ և վսեմ կրընայ ըլլալ , ապա թէ ոչ գէշ կ'ըլլայ կիրքը և մինչեւ նուաստութեան վերջին աստիճանին կ'իջնայ :

Գ. Լ. ՈՒԽ Գ .

Իմացականութեան գործողութիւնները . մըտադրութիւն (Attention) . բաղդատութիւն (Comparaison) . դատում (Jugement) , եւ տրամախոհութիւն , կամ իմատոասիրութիւն (Raisonnement) :

Ստաւոր և ազատ էակի մը գործքը գործողութիւն կ'ըսուի :

Սեքեճնան կը բանի , անբան կենդանին կը շարժի , մարդս կը շարժի և կը գործէ . մարդս կը գործէ իւր գործոց միջոցները ազատաբար ընտրելով :

Իմացականութեան գլխաւոր գործողութիւններն են . Տարրութիւն , Բաղդատութիւն , Դատում , և Կրամախոհութիւն :

Ստարրութիւնը գործողութիւն մ' է , որով հոգին մէկ որոշ առարկայի մը վրայ

իւր ներգործութիւնը կը կեդրոնացնէ :

Ստադրութիւնը կամքին գործողութեանը ենթակայ է , շատ անգամ մէկ մասնաւոր երեւոյթով , որ զբաղումն (distrac-tion) կ'ըսուի , մտադրութիւնը կը մոյսրի իւր առարկայէն . բայց կամքը որ ի զուր կ'աշխատի այս զբաղման առջեւն առնելու , կարող է ուղղել զայն՝ մտադրութիւնը կանչելով , այսինքն հոգւոյն այս ներգործութիւնը դարձեալ այն կէտին կ'ուղղէ՝ ուսկից քիչ մը ատեն մոլորած էր :

Ամէն մտաւոր աշխատութեան առաջին գործը մտադրութիւնն է , այս է հանձարին հղօր օժանդակը : Շատ անգամ բընագիտական և բնական գիտութեանց կարգին մէջ զօրաւոր մտադրութիւնը հանձարին տեղը կը բռնէ , և այս հռչակաւոր խօսքը կը հաստատէ . “ Հանձարը երկայն համբերութիւն մ' է ” :

Առարկայն մտադրութեամբ նկատելով իմացականութիւնը այս առարկային այլևայլ յատկութեանց վերաբերեալ քանի մը գիտողութիւններ ընելուն կը հասնի . վերջը հոն կուգայ՝ որ նոյն առարկայն բոլորովին անտես կ'ընէ , որպէս զի միայն

անոր յատկութեանցը վրայ մտածէ, և այս է ահա Վերացում (Abstraction) ըսուածը :

Ուրեմն Վերացումը մտաւորական գործողութիւն մ' է, որ կը քննէ յատկութիւնները, անոնց ինչ բանի յատկութիւն ըլլալը ամենեւին հոգ չընելով :

Առարկայի մը առնչական յատկութիւնը՝ որովհետեւ ուրիշի ալ կը սրտականի, իմացականութիւնը կը սրտաշածեցնէ նոյն յատկութիւնը այն ամեն առարկայից՝ որոնց որ նոյն յատկութիւնը կը յարմարի : Օրէնք ալ կը դնէ, որոյ ենթակայ են թէ՛ մարդս և թէ՛ իրերը, նոյնպէս և աւստի հասարակ եզրը հանգամանքներ ալ : Այս է ահա ընդհանրացումը :

Ուսկից կը հետեւի թէ ընդհանրացումը այն մտաւոր գործողութիւնն է, որով յատկութիւն մը, օրէնք մը, հանգամանք մը առաջուց ծանուցեալ և հաստատեալ ըլլալով, անձանց՝ իրաց և եղելութեանց հաւարմանը ամենուրն մէկէն կը սրտաշածին :

Վերացումը և ընդհանրացումը միշտ գործ կ'ածուին, ոչ թէ միայն գիտութեանց, այլ և հասարակ կենաց սովորա-

կան գործողութեանց մէջ :

Բաղդասար-Բիւնը այն գործողութիւնն է, որով երկու կամ աւելի ծանուցեալ իրեր՝ իմացականութիւնը իրարու հետ կը համեմատէ, անոնց համաձայնութիւնը կամ անհամաձայնութիւնը դատելու համար :

Գաբոմը գործողութիւն մ' է, որով իմացականութիւնը երկու բաղդատեալ իւրաց համաձայնութեան կամ անհամաձայնութեան վերաբերութիւնը կը հաստատէ :

Արբոր դատումը խօսքով կը բացատրուի, նախադասութիւն կ'ըլլայ, և հետեւաբար :

Նախադասութիւնը որ և է դատման արտայայտութիւնն է :

Բաղդատութիւն, դատում և նախադատութիւն գոնէ երեք եզր ունենալու են. առաջին՝ առաջարկեալ առարկայն, երկրորդ՝ ուրիշ առարկայ մը կամ լինելոյ կերպ մը՝ որուն հետ կապակցութիւն ունի, և երրորդ՝ բաղդատութեան եզրը: Նախադատութեան այս երեք եզրերը կ'ըսուին Են-Բակայ, Բայ և սարոգելէ կամ Տակիլ :

Տրամախոհոմբիւնը գործողութիւն մ' է, որով երկու կամ աւելի ծանուցեալ դատու մներէն ուրիշ դատու մներ կը հանենք, զանոնք ճշմարտելու համար ծանօթ և ճշմարիտ նախադատութիւններով :

Տրամախոհութիւնը ապացուցութեան գլխաւոր տարրն է :

Ստագրութիւնը և դատումը զորոնք հոս գործողութիւն սեպեցինք, միանգամայն հոգւոյն կարողութիւններն ալ են :

Գ. Լ ՈՒԽ Ե .

Ընդհանուր գաղափարաց, անոնց ծագմանը, զանազան հանգամանացը, տեսակաց, նշանաց եւ նախնական նշմարտութեանց վրայ :

Գաղափարը իւր բնութեանը ծագմանը և առարկային համեմատ պէտք է նկատել հոս :

Բօռ — Ուօյալի տրամաբանութեան մէջ այսպէս գրուած է Գաղափարին բնութեանը վրայ. “Գաղափար բառը այն բառերէն է, որոնք պայծառ ըլլալուն՝ անկարելի է ուրիշ բառերով զանոնք բացատրելը, վասն

զի անոնցմէ աւելի սրարդ և սրայծառ բա-
ռեր չկան ։

Աւանց ջանալու սահմանել գաղա-
փարը , միայն սրարզաբար կ'ըսենք՝ թէ գա-
ղափար բառը փետր-թիւն ըսել է և մտաւոր
տեսութիւն կը ցուցնէ , այսինքն այն տե-
սութիւնը՝ զոր խնացականութիւնը ունի
իրաց համար , և կ'իմանայ զանոնք ինչ
կերպով որ կը զրցուի : Ասկէ ահա զանա-
զան գաղափարներ կը ծագին , որոնք եր-
բեմն վաղանցուկ հասկնալ մ'են , երբեմն
ճիշդ՝ բայց անկատար նշաններ , երբեմն
ալ աւելի կամ սակաւ հաւանական ծա-
նօթ կ'ըլլան , մինչեւ որ ճշմարտութեան
սրայծառ և որոշ տեսութիւնը կ'ըլլայ , և
այս է յայտնութիւն :

Արեւմտեան գաղափարաց բնութեանը
վրայ խօսած ատեննիս խելքի համեմատ
կ'երեւի ըսելը թէ՛ ինչ որ խնացականու-
թիւնը իրեն վերաբերեալ բանին կամ
անձին առթիւը կ'իմացնէ , այն է գաղա-
փարը :

Շատ վէճ եղած է գաղափարաց
ծագմանը համար փիլիսոփայից մէջ , վա-

տրն զի ոմանք ասոր ուրիշ սկիզբ չեն տար, բայց եթէ արտաքին զգայարանքը, և ասոնք են զԳայակն (Sensualiste) ըսուած վիւլիստիպաները : Ոմանք ալ միայն իմացակա նութեան կուտան զայն, և ասոնք են Գա շտարակն (Idéalistes) :

Այժմեան դպրոցականք այս երկու դրութեան ըսուագոյններն կ'ընդունին, և երկուքին թերին լրացնելով՝ գաղափա րաց ծագումը արտաքին զգայարանաց և ներքին զգայարանաց վիպու թեանց և խելքին կուտան :

Արտաքին զգայարանաց վիպու թեա նը կը տրուին այն գաղափարները՝ որոնց առարկայն նիւթական կարգի իրեր են : Ներքին զգայարանաց վիպու թեանը կը տրուին այն գաղափարները՝ որոնք մեր ներ սը իմացածնուս հետ յարաբերութիւն մ' ունին :

Իսկ խելքի կը տրուին նախ՝ այն գա ղափարներն որոնք հասարակաց զգացման միջնորդութեամբ և մարդկային գիտակ ցութեամբ կըստանանք, երկրորդ՝ այն գաղափարները զորոնք տրամախոհու թեամբ ուրիշ գաղափարներէ կը հանենք :

Գաղափարները իրենց առարկային նայելով քանի մի տեսակ են և քանի մի յատկութիւններ ունին : Պէտք է դիտել որ երբ գաղափարաց տեսակին և յատկութեանցը վրայ կը խօսի , գաղափար բառը ամեն ատեն իւր բառական և արմատական նշանակութեամբը առնելու չէ , վասնզի շատ անգամ ուրիշ գաղափարի մը հետ բաղադրեալ գաղափարի վրայ կ'ըլլայ խօսքը , այսինքն՝ խորհրդոյն և նոյն իսկ նախադասութեան վրայ :

Գաղափարներն կ'ըլլան եկամտա կամ ճարտաճիւն , հարկաւոր կամ ներընդունական , վերայեալ կամ լիանկրայեալ , հանրական , ընդհանուր , մասնաւոր :

Գաղափարը եկամտա կ'ըլլայ , երբ սր և է միջոցաւ դրսէն եկած է մեզի . ճարտաճիւն՝ երբ ուրիշ գաղափարներէ հանելով մենք մեզմէ կը կազմենք . շնորհական կամ երեւակայական գաղափար մը մտացածին ալ կրնայ ըսուիլ , ինչպէս՝ օսկիէ լեռը , թեւաւոր ձին :

Գաղափար մը հարկաւոր կ'ըլլայ , երբ ցուցըցած իրը չկրնար չըլլալ , ինչպէս է ութիւն , միջոց :

Վաղափարը ներընդոսնական կ'ըլլայ, երբ անանկ իր մը ցուցընէ որ կրնար չըլլալ. ինչպէս՝ տուն, ծառ, և նոյն իսկ աշխարհըս ալ :

Վաղափարը վերացեալ կ'ըլլայ, երբ իրեն միացած առարկայէն զատ առնելով կը մտածուի. առաքինութիւն, սպիտակութիւն, երջանկութիւն :

Իսկ խանդրացեալ, երբ իրեն միացած առարկային վրայ մտածուի, ինչպէս՝ ըսպիտակ ձիւն, առաքինի մարդ, երջանիկ վայրկեան :

Վաղափարը հանրական կ'ըլլայ, երբ բոլոր ցուցուցած գաղափարները ամբողջ մէկ տեղ առնէ. մարդիկ, տունիք : Մտհանոր՝ երբ մեծ հաւաքում մը ցուցընէ. իմաստուն մարդիկ. իսկ մասնաոր՝ երբ անհատի մը միայն կը զըուցուի. ինչպէս՝ այս մարդը, այն տունիկը, և այլն :

Վաղափարները՝ իրենց յատկութեանցը նայելով, կ'ըլլան Պարզ կամ Բազարեալ, Ճշմարիտ, սոստ, Երկբայական, հասանալի, պայծառ կամ Տիւի, հասարակական կամ Ժրեպական, Բացարձակ կամ առընչական և Ճշմարտանման

Վաղափարը պարզ է, երբ միայն մէկ տեսութեամբ մէկ կամ շատ առարկաներ ցուցնէ, մարդ մը, մարդիկ : Վաղարթիւն երբ խել մը առարկայից միութեամբը կազմած հաւաքում մը ցուցնէ . բանակ, բազմութիւն :

Վաղափարը ճշմարիտ կ'ըլլայ, երբ աւ մէն կողմանէ իւր առարկային նման ըլլայ, ինչպէս՝ օդը ծանր է, արիւնը երակաց մէջ շրջան կ'առնէ :

Վաղափարը սոսքով կ'ըլլայ, երբ միայն մէկ տեսութեամբ անդամ առարկային անհամաձայն ըլլայ, ինչպէս այս նախադասութիւնը. «Մտածը յայտնի ճշմարտութիւն է», սուտ է, այլ ճշմարիտ ըլլալու համար պէտք է ըսել. «Ըստ ինքեան յայտնի ճշմարտութիւն է» : Այնպէս այս նախադասութիւնը. «Ղարտասանութիւնն է արուեստ խօսելոյ», սուտ է, վասն զի ճարտասանութիւնը ոչ թէ միայն արուեստ է խօսելոյ, այլ «բարւոյ խօսելոյ» :

Վաղափարը երկբայական կ'ըլլայ, երբ այնչափ պատճառ կ'ըլլայ իւր ցուցրցած կապակցութիւնը ժխտելու, որչափ կ'ըլլայ հաստատուելու . Անիբաղ պէտք էր որ

Կաննիայ պատերազմէն անմիջապէս ետ-
քը պաշարէր զՀռովմ: Վարնան խոստա-
ցած պտուղները կուտայ աշունը: Վա-
ղափարը հասնական կ'ըլլայ, երբ իւր ցու-
ցրցած առարկայն աւելի հաստատելու
պատճառ կ'ունենայ՝ քան թէ զայն ժրխ-
տելու. հաւանականութիւնը կ'աճի հաս-
տատելու պատճառներուն շատնալովն և
ժխտողական պատճառներուն քիչնալովը,
մինչեւ որ ժխտողական պատճառները
հաստատական պատճառաց տեղի տալով
ստուգութիւնը հաստատուի:

Վաղափարը պայծառ կ'ըլլայ, երբ ա-
նանկ զրուցուի որ երկբայութիւն մը չի
ցուցնէր. իսկ մինչեւ երբ գժուարաւ կ'ըմ-
բռնեմք: Անգուստին եզրերուն յատկու-
թիւնը և ոճերուն կանոնաւորութիւնը
շատ կը նպաստեն գաղափարաց պայծա-
ռութեանը, որով կը հետեւի թէ պակա-
սաւոր ոճեր և անյատուկ եզրեր՝ լեզուն
աղաւաղելով, գաղափարը կը մթնցնեն:

Վաղափարը հասարական կ'ըլլայ, երբ
ըլլալու վրայ է խօսքը, ինչպէս. “ Հողը
բերրի է. հողին աննիւթ է ”: Իսկ
ժխտողական՝ երբ չըլլալու վրայ է, ինչ

պէս. « Մարդս կատարեալ չէ. ստախօս
սուլթիւնն ոչ է գովելի » :

Վաղափարը Բաղարշապէի կ'ըլլայ, երբ
հաստատ կերպով և առանց պայմանի կ'ըլլ
լայ. « ()դը մաքուր է. երկինքը գեղե
ցիկ է » : Իսկ առնչական՝ երբ պայմանով
մը հաստատուած է, ինչպէս. « ()դը եթէ
մաքուր ըլլար, երկինքը աւելի գեղեցիկ
կ'ըլլար » : Այս թէ երբ իրեն վերաբե
րուլթիւն ունեցող ուրիշ գաղափարի մը
տեսուլթեամբ հաստատուի, ինչպէս. « Այս
սիրեմ այն բանաստեղծը՝ որ հակառակ
կորդին յաջողուլթեանց կ'ուրախանայ » :

Վաղափարը ճշմարտանման կ'ըլլայ, երբ
ճշմարտուլթեան երեւոյթ մ' ունենայ :
Հատ անգամ ճշմարտուլթիւնն ալ երե
ւոյթովը կը խաբէ .

« Ճշմարիտը կրնայ երբեմն ճշմարտանման չըլլալ » :

Վաղափարաց տարբեր երեւուլթից
մէջ երկու բան աւելի նշանաւոր են դա
սակարգուլթեան և սահմանի նկատմամբ :
Ա, Վաղափարին պարունակած յատկու
լթեանց երեւոյթը. Բ, այն իրաց և ան
ձանց տեսուլթիւնը, որոնց վրայ կրնայ

գաղափարը տարածիլ, և ասոնք են Մեղ-
լայնում (Extension) և Խեղամարմին կամ ըմբռ-
նում (Compréhension) գաղափարաց ըսածը :

Խեղամարմինը գաղափարի՝ անոր պա-
րունակաց որպիսութեանց հաւաքումն է :

Մեղլայնումն նոյն անձանց և իրաց հա-
ւաքումն է, որոնց որ այն գաղափարը կը
պատշաճի :

Մեղհանուր գաղափարները շատ ան-
ձանց և շատ իրաց կը պատշաճին, այլ քիչ
մասնաւոր յատկութիւն կը պարունակեն :

Սանաւոր գաղափարը շատ որպի-
սութիւն կը պարունակէ, բայց քիչ ան-
ձանց և քիչ իրաց կը պատշաճի :

Սութեան գաղափարը որ Ստուծմէ
սկսեալ մինչև հիւլէից կայ ըլլալը կը ցու-
ցնէ, միայն մէկ յատկութիւն մ'ունի, ուս-
տի նաև քիչ խեղամտութիւն կրնայ ու-
նենալ, բայց ընդ հակառակն շատ ընդլայ-
նում ունի, վասն զի չի կայ բան որուն
չը պատշաճի :

Իսկ անհատի մը և իրի մը գաղափա-
րը, մասնաւոր կերպով առնելով, իրենց
ցուցրցած անհատին և իրին միայն պատ-
շաճելուն համար՝ որչափ որ հնար է քիչ

ընդլայնում ունի, այլ մեծ խելամուռ-
թիւն, ըստ որում գոյութեանէն անկախ
մասածուելով, ունի առարկային բոլոր
յատկութիւնները և ինչ բանի գործա-
ծուելիքը, և այլն : Նաև բնական, մտա-
ւորական և բարոյական տեսութեամբ նոյն
անհատին ունեցած բոլոր յատկութիւն-
ները, և այլն, կը ցուցնէ նոյն գաղափա-
րը : Աւսկից կը հետեւի թէ՛ գաղափար
մը որչափ ընդլայնում ունենայ, բիչ խել-
լամուռութիւն կ'ունենայ, և փոխադարձա-
բար՝ գաղափարի մը ընդլայնումը իր խել-
լամուռութեան հակառակ ճամբովն է :

Մեր գաղափարները՝ ինչպէս նաև մեր
զգացումները տարբեր բնութեանէն ըլլա-
լով, և անթիւ տարբերութիւններ ցու-
ցնելուն կան գաղափարներ որ այլոց բա-
կը մանց և հիման կը ծառայեն, ինչպէս .
Ժանօթո-թիւնք, և նախնական ճշմարտո-թիւնք :

Օյանօթո-թիւնք և նախնական ճշմարտո-թիւնք
կ'ըսուին այն նախնական և արմատական
ճանօթութիւնները, որոնք նախատեսու-
թեամբ մեր ամեն մէկերնուս աւանդուած
են նախնական կրթութեան ամենապարզ

ճանօթուծիւններուն միջոցաւ, և մեր
թէ մտաւորական և թէ բարոյական ամեն
դատումներնուս մէջ կը մտնեն, իբրև հար-
կաւոր տարերք. առանց այս տարերաց մար-
դըս չկրնար ո՛չ առած մը հասկնալ, ո՛չ ալ
ճշմարտին, գեղեցկին և բարւոյն ամենա-
փոքր խնդրոց վրայ բան մը խօսիլ :

Անձ սխարմունք մը կ'ըլլայ, երբ ա-
ռածները նախնական ճշմարտութեանց և
ճանօթութեանց կարգը դատուին, միայն
թէ նախնական ճշմարտութիւններ ըսե-
լով առաջին կարգի ճշմարտութիւններ
չհասկցուին : Եւ այց մեր միտքը աս է : Ե-
թէ ճանօթութեանց և նախնական ճրշ-
մարտութեանց այս վերջին խնդրոյն հա-
մար մեզի կը հարցուի ճանօթութեանց
և ճշմարտութեանց իրարմէ ունեցած
տարբերութիւնը, կը սլառատասանենք թէ՛
ընդհանրապէս ճշմարտ-ի-ն մը ստոյգ և
հաստատական տեղեկութիւն մ'է, և
թէ ճանօթ-ի-ն մը՝ անստոյգ, անստոյգ և
թերի տեղեկութիւն մ'է :

Գ Լ Ո Ի Խ Զ .

Յիշողութիւն, գաղափարաց յարակցութիւն,
եւ երեւակացութիւն:

Յիշող-ի-նը (mémoire) այն կարողու-
թիւնն է, որով հոգին գաղափարները և
զգացումները կը պահէ և կը յիշեցնէ
մարդոցս :

Իսկ յիշատակ-ի-նը (souvenir) այն է, ու-
րով գաղափարները և զգացումները յիշ-
ողութեամբ մտքերնիս կը բերենք :

Յիշ-մը (réminiscence) անորոշ յիշատա-
կութիւն մ' է :

Յիշատակութիւնը երբեմն ըստ ին-
քեան և երբեմն ալ ներկայ կամ նախըն-
թաց աշխատութեան մը միջոցաւ կ'ըլլայ :
Իսկ է որ երկու տեսակ է յիշողութիւնը,
ինչնեկ (spontané) յիշողութիւն, և համառոր (vo-
lontaire) յիշողութիւն :

Յիշողութիւնը ինչնեկ կ'ըլլայ, երբ
յիշատակութիւնը առանց կամաց ճգան-
ցը ինքնին կուգայ. իսկ համառոր կ'ըլլայ,
երբ բանի մը յիշատակը մտքերնիս գալու-
համար կամաց միջամտութիւն պէտք կ'ըլլայ :

Ասոնց կրնանք երրորդ մը համարել աշ-
ուսարանի (artificielle) յիշողութիւնը, որ է
Mnémotechnie՝ ըսուածը, և իրեն յատուկ մի-
ջոյներով կ'ըլլայ:

Յիշողութեամբ կը ստանանք ժամա-
նակին գաղափարը, որ է վայրկեաններուն
տեւականութեան մէջ յաջորդումը: Աւ-
րաքանչիւր իրողութիւն որ թէ՛ ներքին
և թէ՛ արտաքին կերպով կը կատարուի,
տեւականութեան մէջ որոշ վայրկեան
ներ կը բռնէ: Արդ եթէ անգամ մը ե-
ղած իրողութիւնը մէյմը մոռցուի և հս-
գիններնուս մէջ բնաւ հետք մը չձգէ,
այն ատեն նոյն իրողութեան հետ կը կոր-
սուի նաեւ անոր կատարած վայրկեանին
գաղափարը, ուրեմն ժամանակին գաղա-
փարը յիշողութեամբ կ'ըմբռնեմք:

Թող որ յիշողութիւնը կ'ապացու-
ցանէ թէ՛ հոգին միեւնոյն է, ըսել կ'ու-
զեմ ամենեւին չփոխուիր, և ինչ հանգա-
մանք ալ որ ցուցնեն իւր կարողութիւն
ները, իւր ներքին էութեանը մէջ կը
մնայ, և յիրաւի յիշողութեան միջոցաւ
կրնանք հետեւիլ այն զանազան փոփոխու-
թեանց, որոց ենթակայ են մեր զգայ-

ուն, մտաւոր և բարոյական կարողութիւնները՝ իրենց յաջորդական զարգացմամբ և զանազան պատշաճեցուցմամբը : Այլ է թէ հոգին իս փոխուէր, կամ թէ իւր գոյութեանը մէջ մարմնոյն համաձայն և ժամանակեաց փոփոխութիւն մը կրէր, անկարելի պիտի ըլլար այս բանս ալ :

Յիշողութիւնը կամքին զօրաւոր գործողութեանը ենթակայ է միշտ, վասն զի կամքն է որ զայն կը բանեցնէ, կը զարգացնէ և կը զօրացնէ. բայց սա ալ ըսելու է որ՝ յիշողութիւնը այնպիսի անկանոն ընթացք և ակարութիւն կ'ունենայ, որոնց վրայ ամենեւին ազդեցութիւն չընէր ամենազօրաւոր կամքն անգամ : Այլ չէ ըզգացած անուան մը, թուականի մը, թըռուոյ մը տաղտկալի վրիպանքը, որոնք որչափ ալ ծանօթ են, բայց և այնպէս նոյն վայր կեանին երբ անոնց կարօտ կ'ըլլանք, մեր աչքէն կը փախչին, ամեն ջանք և խուզարկութիւն ի դերև կ'ելեն, և կարծես թէ խաղ մը կ'ուզեն ընել, պէտք չեղած ատեն նին մարդոյս միտքը իյնալով, թող որ ամեն մարդ ալ գիտէ թէ յիշողութեանը վրայ ինչ աստիճան գէշ ազդեցութիւն կ'ը

նեն մարդոյս գլխուն եկած ուժգին հար-
ուածները և ուղեղի բոլոր հիւանդու-
թիւնները :

Արդ՝ յիշողութիւնը խորհրդաւոր
կարողութիւն մ' է, որուն գործողու-
թիւնները աղէկ կրնան հաստատուիլ ճիշ-
գրտիլ, միայն թէ որչափ ալ գիտունը
ճարտար և մտադիր ըլլայ, չկրնար կուս-
հել անոր ինչպէս գործելը :

Գաղափարաց յարակցութիւնը հագւոյն
այն կարողութիւնն է, որ մէկ գաղափար
ի առթիւ ուրիշ գաղափար մը կըստա-
նանք :

Արտիճեալ գաղափարաց յարակցու-
թիւնը յիշողութենէն կախում ունի, ուս-
տի անոր պէս կամ ինչնէի կ'ըլլայ և կամ
կամաւոր :

Գաղափարաց յարակցութիւնը ինչ-
նէի կ'ըլլայ, երբ գաղափարով մը առանց
յոգնելու՝ ուրիշ գաղափար մը միտք կը
բերուի :

Իսկ կամաւոր՝ երբ կամքին գործողու-
թիւնը մէջ կը մտնէ, և մասնաւոր աչ-
խատուութեամբ ու պատշաճ առընչու-

Թեամբ մը գաղափար գաղափարի հետ
կը կապակցի : Եւ որ նշանները ինչ որ ալ
ըլլան և մասնաւորաբար լեզուն՝ գաղա-
փարաց կամաւոր յարակցութենէն կը
ծագին :

Պէտք է ընդունիլ նաեւ գաղափա-
րաց բանական յարակցութիւնը , այսինքն
խելմը գաղափարաց իրարու հետ ունե-
ցած հարկաւոր կապը : Այլ յիրաւի այն-
պիսի անբաժանելի գաղափարներ կան ,
որ եթէ մէկը ընդունիմք , միւսն ալ
պէտք է ընդունիմք . մէկը արտայայտելուն
պէս՝ մարդուս միտքը առանց բաժնուել-
լու անկէց՝ միւս գաղափարին վրայ կ'եր-
թաց , ինչպէս են պատճառի և գործոյ
սկզբանց և հետեւեանաց գաղափարները .
և ստուգիւ գործոյ գաղափարը առանց
պատճառի գաղափարի չի քալեր , ոչ ալ
հետեւեանաց գաղափարը առանց սկրզ
բանց գաղափարի : Այնպէս նաեւ պա-
րունակելոյն , ստորնադունին և շարժման
գաղափարները չեն կրնար արտայայտիլ
առանց սարունակողի , գլխաւորի , և գա-
ղափարաց շարժիչի :

Ա՛ս ալ կը յաւելու մք թէ յիշողու-

Թիւն և յարակցութիւն ինքնեկ եղած ա-
տեննին, ինչպէս գաղափարաց՝ այնպէս
ալ զգացմանց հետ վերաբերութիւններ
ունին : « Արտի յիշողութիւն », այս գե-
ղեցիկ խօսքը անխմաստ չէ . և խիստ շատ
անգամ երբ կը տեսնենք այս ինչ անձը ,
այն ինչ տեղը , երբ կը լսեմք այս ինչ եր-
գին վերջնատողը (refrain, նաքարաթ), այն ինչ
երգը , յանկարծ մենք ալ նայն բարոյական
վիճակը կ'ունենանամք և նոյն ուրախութիւ-
նը և տրամուծութիւնը մեր վրայ կը տարաւորեն՝
զորոնք մենք ունեցած էինք այն անձը ,
այն տեղը տեսնելով, կամ նոյն երգին վեր-
ջնատողը լսելով, որչափ ալ հեռուն ըլլան այս
քաղցր կամ տխուր յիշատակութիւնները :

Երեւիստի-նը հոգւոյն այն կարո-
ղութիւնն է, որով նախ նիւթական առար-
կայից ձեւը մտքերնիս կը բերենք և զգաց-
արանաց վկայութիւնը աղէկ մը կը պա-
հենք . ետքը անձև առարկայից ալ ձեւ մը
կուտանք . հուսկ սպա կը ջանամք նոյն մը
տացածին բանը կազմել մարդկանց և ի-
րաց նախատիպէն առնելով, ինչ որ կանո-
նաւոր ամբողջ մը շինելու համար կարե-

ւոր է : Այս վերջին աստիճանով երեւա-
կայութիւնը գեղարուեստին ամենազօր և
առատ տարրն է :

Երեւակայութիւնը որչափ ալ մեծա-
մեծ շահեր ունի, այնչափ ալ վտանգնե-
րը շատ են . ինչպէս անձանց և իրաց թե-
րութեանց, անանկ ալ շատ անգամ անոնց
հանգամանացը վրայ բան մը կ'աւելցրնէ
կամ կը սակսեցրնէ : Այսպէս երեւակայու-
թիւնը իրողութեանց և բնաւորութեանց
ճշմարտութիւնը կը փոփոխէ, անչափ հա-
մակրութիւն և հակակրութիւն կը դրդէ .
տսով տեղի կ'ունենան խորհրդածութեան
սխալմունք, զգացման սպտորանք և կիրք :
Ուստի պէտք է որ կամքը խելքէն թելա-
դրուելով երեւակայութեան ընթացքը
կանոնաւորէ, և անոր ծռութիւնները ար-
գիլէ :

Գ Լ ՈՒ Խ Է .

Ընդհանրապէս նշանաց եւ մասնաւորաբար չեզոխն վրայ: Գաղափարաց կազմութեանն վրայ նշանաց ունեցած ազդեցութիւնք: Մաւնութեանն քերականութեանն:

Ինդհանրապէս խօսելով նշանը զգալի իր մ' է, որ ուրիշ կամ զգալի կամ մտաւորական կամ բարոյական իր մը կը ցուցնէ:

Նշանը կամ բնական է և կամ արհեստական:

Նշանը բնական կ'ըլլայ, երբ իւր ցուցըցած իրին բնութեանը հետ կապուած է. ինչպէս կրակին բնական նշանը ծուխն է, շնչերակին արագ բարախու մը յուզմունքի մը կամ աւողջութեան խանդարման մը բնական նշանն է:

Նշանը արհեստական կ'ըլլայ, երբ ըստ հաճոյից և պատշաճաւոր ընտրութեանէ մը ծագած է. ինչպէս ուսանողը զինուորական իշխանութեան և քանի մը ժապաւէններ ալ պատուոյ նշաններ են:

Տրամաբանութեան մէջ նշան ըսելով այն միջնորդը կը հասկցուի, որով գաղա-

վար և զգացում կը յայտնուին . այն միջ-
նորդը լեղուն է :

Ս լեղուն երեք տեսակ է . նշանաց լեղու-
խօսոուն լեղու , և գրաւոր լեղու :

Նշանաց լեղուն գարձեալ երկուքի կը
բաժնուի . նշանաց բնական լեղու , և նշանաց ար-
ոտեապական լեղու :

Նշանաց բնական լեղուն է կերպարանքը ,
ձեռքի , և մարմնոց այս կամ այն շարժ-
մունքը , աւելի կամ սակաւ յայտնի վար-
մունքը , որոնց ամենն ալ բոլորովին ինք-
նեկ են առանց ջանից և աշխատութեան :

Նշանաց արոտեապական լեղուն գէմքի գը-
ծապրութեան գիտմամբ եղած շարժ-
ուածքի և արուեստական վարմունքի խա-
ղըն է : Ասոր օրինակ կրնանք մէջ բերել
խուլ և համբ անձանց լեղուն :

Խօսոուն լեղուն խորհրդոց յօգաւոր ձայ-
նով բացատրութիւնն է . ասոր հիմը
ձայնն է , որ բառ կը շինէ , և այս բառը
գաղափար կը յիշեցրնէ :

Ղրաւոր լեղուն մտքին խորհրդին՝ գիր
ըսուած նշաններով հաստատուած բա-
ցատրութիւնն է . ասոր հիմն ալ գիրն

է, որ բառ կը կազմէ, և բառն ալ դա-
ղափար յիշեցընել կուտայ :

Գաղափարաց կազմութեան վրայ նշաններու
ազդեցութեան խնդիրը ճշդելու կարօտ է .
նախ նշան բառը հոս լեզուէն կը նշանակէ,
և պէտք է քննել թէ առանց լեզուի դա-
ղափարները ինչ պիտի բլլային արդեօք :
Չափազանցութիւն կ'ըլլար պնդելը թէ
լեզուէն ամէն գաղափարաց անհրաժեշտ
հարկաւոր է . և յիշուի լեզուէն չեղած
ատեն՝ մարդս գաղափար մը պիտի ունե-
նար, բայց ո՞ր գաղափարները: Ախն՝ զգա-
յարանաց վկայութենէն ծագած գաղա-
փարներնիս, երկրորդ՝ ներքին զգայարա-
նաց վկայութենէն ծագածները, և ասկէ
զատ լեզուէն կրնար խելմը տարբեր իրեր
իրարու հետ բազդատել և անոնց ունե-
ցած վերաբերութիւննին հաստատել :
Վերջապէս մարմնաւոր նշաններով յայտ-
նելու յաջողած գաղափարները պիտի կրնար
այլոց փոխադրել, ինչպէս նաեւ գծերու
միջոցաւ դիւրամբռնելի առարկաներն աբ-
խայց նախ հասկցուած և իմացուած վե-
րաբերութիւնները հաստատիչ բան մը

չունենալով շուտով կը ցնդէին, ասկէ ետ-
քը բնական առարկայից ներկայացումը
երկար և շատ տաժանելի բան կ'ըլլար .
այլ և կան այնպիսի գաղափարներ, որոնք
ուրիշներուն ճշդիւ հաղորդելն անկարե-
լի էր . օրինակի ազագաւ՝ հոտի և համի
գաղափարները : Մանաւանդ առանց լե-
զուի մարդս չպիտի կրնար վերացեալ գա-
ղափարներ ըմբռնել . վասն զի այս վերա-
ցեալ գաղափարները՝ մեր գործածու-
թեանը մասին արդիւնաւոր ընելու հա-
մար զիրենք հաստատ բռնող զգալի բա-
նիմը կարօտ են . ասոր համար գոյնը տեսա-
նելի գոյութեան մը յարելու է, որ մեր
աչքին երեւայ :

Այս խորին խմտտութիւն ահա Գոյական
կ'անուանեմք այն բառը որ իր կը ցուցնէ :

Խօսուն և գրաւոր լեզուները ճերա-
կանական կանոններու ենթակայ են :

Բնդհանրապէս խօսելով ճերականո-
ւի-նը լեզուին կանոնաց գիտութիւնն է :

Բնդհանոր ճերականո-ւի-նը կը սխալու-
նակէ այն քերականական կանոնները, որ

զանազան ազգաց մէջ միեւնոյն կիրաւ
ուութիւնն ունին :

Արջափ ալ շատ եղած ըլլան լեզու-
ները , ամենն ալ միեւնոյն գլխաւոր նը-
սդատակն ունին , այսինքն գաղափարները
հաստատել , բազազրել և անոնց վերա-
բերութիւնը ցուցնել , ուսկէ կը հե-
տեւի որ լեզուները միեւնոյն գլխաւոր
տարբերքը կը ներկայացնեն . ինչպէս Գոյա-
կանը անձանց և իրաց գաղափարը կը ցու-
ցնէ . ածականը գոյականին յասկութիւ-
նը և որակութիւնը , Բայը անձանց և ի-
րաց իրարու հետ ունեցած վերաբերու-
թիւնը , և անձանց ու իրաց հետ յաս-
կութեանց և որակութեանց վերաբերու-
թիւնները կը հաստատէ . և հետեւաբար
գոյական , ածական , բայ անհրաժեշտ կա-
րելու որ են և ամեն ազգի քերականները
կ'ընդունին զասոնք :

Բայց բառերը զատ զատ չեն գոր-
ծածուիր սր և է գաղափար մը ցուցնել-
լու համար , այսինքն՝ դատում մը կազմե-
լու համար սէտք է նախադասութիւն մը
արտայայտել :

Արդ նախադասութեան մէջ երէք Բառ-

կը պահանջէ, մէկը՝ որ է սովորաբար գոյականն անունը, հաստատուելիք առարկան կը ցուցնէ. միւսը՝ թէ՛ ածականն ըլլայ և թէ՛ գոյականն, հաստատութեան եղբր կը ցուցնէ. երրորդը բայը՝ որ կասկածուածիւնն կը յայտնէ. « Հոգին է աննիւթ, մարմինը հողեղէն է » :

Այս ալ գիտնալու է որ նախադասութիւն մը երբեմն մէկ բառով մ' ալ կը զրուցուի, բայց այս մէկ բառը վերլուծելու որ ըլլանք, պէտք է միշտ որ նախադասութեան երեք եղբերն ալ գրտնուին :

Ասկէ զատ՝ մարդս շատ անգամ կարօտ է որ իւր զրուցած տարբեր դասումները բռնելու և բացատրելու և իրարմով հաստատելու համար իրարու հետ կապէ, ուսկէ կ'ենէ պարբերութիւն կամ հարսած. որ ամբողջ միտք մը կազմող մէկ կամ շատ նախադասութիւններ են :

Պարբերութենէն ալ կը ծագի նախադասութեանց զանազանութիւնը սարբերութեան մէջ ամեն մէկին բռնած կարգին համեմատ :

Այսպէս ահա նախադասութիւնը

և պարբերութիւնը ընդհանուր քերական
նութեան մասերն են : Այլ և դժուար
կ'ըլլար եթէ դերանունն ալ ասոնց հետ
չառնուի, որուն կարեւորութիւնը զգա-
լի կ'ընեն միեւնոյն գոյականին շատ ան-
գամ կրկնելու հարկէն ծագած շփոթը, և
առաջուց բացատրուած գաղափարներուն
կամ առարկաներուն ամենը մէկէն մէկ
նշանով մը բացատրելու հարկը, զոր ուրիշ
կերպով ընելը դժուար կ'ըլլար, ասոր պէս
են նաեւ շողիւղը և նախադրո-ւի-նը, որոնք
քանի մը հարկաւոր վերաբերութիւններ
բացայայտելու միջոցներ են :

Սակայն բառից զանազան կերպաւո-
րութեանց, անոնց փոփոխակի վերաբե-
րութեանց եղանակին, նախադասութիւն-
ները միացնելու, շտկելու, շարելու կեր-
պին և լեզուին վայելչութեանց համար
կան այնպիսի կանոններ, որ ժողովրդեան
և ժամանակին նայելով կը փոխուին, և
յառուկ քերականութեանց առարկայ ե-
ղած են :

Այս ընդհանուր սկզբունքը՝ զորոնք
մասնաւորաց պատշաճեցնելը դիւրին է,
տակէրնէս ետքը, կը վայլէ ըսել որ ընդ-

Հանուր քերականութեան պատճառաւ քերականական վերլուծութեան, տրամաբանական վերլուծութեան և լեզուաց իրարու հետ ունեցած վերաբերութեանց վրայ շատ խնդիրներ կը ծագին : Այս խնդիրներուն համար պէտք է որ մտքերնիս բերենք առած նախակրթական դասերնիս, և (Յունաց, Ատինացւոց և Վաղղիացւոց դասական քերականութեանց, և սյլ և սյլ ազգաց քերականութիւնները իրարու հետ համեմատելու նպատակաւ յօրինուած յատուկ երկասիրութեանց միտ դնեմք :

Գ Լ Ո Ւ Խ Ը .

Մեթոտի վրայ ընդհանրապէս վերլուծութիւն եւ Բաղադրութիւն (Synthèse). Ֆիզիքական եւ Բնական գիտութիւն. Դիտողութիւն. Փորձ . Դասակարգութիւն (դասակարգութիւն բնական, դասակարգութիւն արուեստական) :

Ինդհանրապէս խօսելով՝ Ռեթորիկ վախճանի մը յատկացեալ միջոց մ' է : Սիջոցի մը իր վախճանին աղէկ կամ գէշ պատշա-

ճեղուն համեմատ մեթոտն ալ աղէկ կամ
գէշ կ'ըլլայ, ամենէն աղէկ մեթոտները
անոնք են որ առաջագրեալ վախճանին ա-
ւելի ասրահով և շուտ կը հասցընեն :

Տրամաբանօրէն խօսելով՝ Ռեֆորմ ուս-
ման և նոյնը մասնաւորի պատշաճեցընե-
լու յատկացած միջոցն է :

Նախ և առաջ մեզի երկու տեսակ
մեթոտ կը ներկայանան, այսինքն՝ վերլուծո-
ւի-ն և Բաղադրո-ւի-ն. ասոնք ամեն օր գործ
կ'ածուին և ուսմանց ամեն տեսակաց
յարմար կուգան :

Վերլուծո-ւի-նը մէկ բան մը իր տա-
րերացը և բոլոր մը իր մասանցը բաժա-
նելուն վրայ կը կայանայ :

Վերլուծութիւնը պէտք է կապարեալ,
որոշ, և Բարոյ չափեալ ըլլայ :

Կապարեալ, վասն զի վերլուծութիւնը
պէտք չէ իրի մը և ոչ մէկ եզրը, ամբողջի
մը և ոչ մէկ մասը զանց ընել :

Որոշ, վասն զի վերլուծութիւնը իրին
խրաքանչիւր եզրը, ամբողջին իւրաքան-
չիւր մասերը կատարելապէս որոշ և զատ
զատ առնելով պիտի ցուցընէ, անանկ որ
շփոթին ու սխալին անհնար ըլլայ :

Բարոյի շափեալ, վասն զի վերլուծու-
թիւնը խել մը բաժանումներ, անհուն
տարորոշութիւն չը վերցընէր : Ասոր հա-
մար է որ բնական գիտութիւնք որոշ սահ-
մաններ ունին . բայց փիլիսոփայական գի-
տութեանց, բարոյական և գրագիտական
ուսմանց համար այսպէս չէ, և որչափ որ
ուղէ մէկը այս տեսակ գիտութեանց մէջ
վերլուծութիւն բանեցընել, ուրիշ բան
չընէր՝ բայց եթէ միտքը կը յոգնեցընէ և
լուսաւորուելիք խնդիրներն աւելի կը
շփոթէ :

Այսպէս կ'ընէ հռետոր մը, երբ
խօսք մը վերլուծելու համար անոր բաղ-
կացուցիչ զանազան մասունքը որոշելէն
ետքը՝ անոր չորս, երեք, երկու եզրե-
րով եղած տարբերութիւնները հաշուէ,
բառերուն ձեւերը մէկ կողմը և իմաս-
տից ձեւերը միւս կողմը դնէ, և զանոնք
կարգաւորելով զանազան նախադասու-
թիւններ հանէ, և այլն :

Բաղադրութիւնը մեթոտ մ' է, որով
վերլուծութեան բաժնածը կը բերենք կը
միացընենք . վերլուծութիւնը ընդհանու-

ըէն ի մասնաւորն կ'իջնէ , իսկ Բաղադրո-
ւթիւնը կամ բաղկացուածիւնը մասնաւորէն
յընդհանուրն կ'եղնէ , առաջինը քակելու ,
երկրորդը՝ վերատին բաղկացրնելու եղա-
նակ է :

Բաղադրուածիւնն ամբողջ և որոշ կ'ըլլայ :

Ամբողջ , վասն զի պէտք է որ բաղա-
դրուածիւնը ամբողջին ամեն մասերը և
ամեն տարերքն առնէ առանց մէկը զանց
ընելու :

Որոշ , վասն զի բաղադրուածիւնը պէտք
է որ իւրաքանչիւր տարրը և ամեն մէկ
կտորը իւր պատշաճ տեղը գնէ , այն կեր-
պով որ իրը՝ որ է ամբողջը , իրեն կանոնա-
ւոր վիճակին մէջ գտնուի :

Փիղէքական և բնական գիտութեանց մեթոդը .
ինչպէս որ առաջին գլխոյն մէջ ըսինք ,
Ֆիզիքական և բնական գիտութեանց ա-
ռարկայն , նիւթական էակներն և կենդանի
էակաց նիւթական մասերն են :

Այս վերայիշեալ գիտութեանց մէջ
ստէպ երեք բան , երեք մեթոտ կը գոր-
ծածուին , Գիտողութիւն , փորձ և Գոտարգո-
ւթիւն : Թէ և անոնց այնպէս յատուկ եղած
չեն՝ որ ուրիշ գիտութեանց ալ չյարմարին :

Վիստողութիւնը այն մեթոսն է, որով հողին ծանուցեալ առարկայի մը վրայ կը կեդրանացրնէ իր մտադրութիւնը :

Վիստողութիւնը պէտք է ըլլայ մըտադիր, անաչառ, հանձարեղ և յարատեւ :

Վիստողութեան մէջ մտադրութիւն բառով հասկցուածը այնպէս անհրաժեշտ կարեւոր է, որ առանց ասոր նոյն խկ դիտողութիւնն անհնար կ'ըլլայ : Վայց այս մեր բաժն մտադրութիւնը՝ որչափ որ կարելի է, զօրաւոր և ամենափոքր բանի մէջ անդամ փափուկ պիտի ըլլայ, դիտողութիւնը ինչ առարկայի վրայ ալ ըլլայ, խղճի մտօք անոր սրարասօղէն կը պահանջուի որ առաջուց ըմբռնած դաղափարները, նախապաշարմունքը մէկ կողմը դնէ, և ճշմարտութիւնը վկայելը հաստատ միտքը դրած ըլլայ, թէ և ասով շահ մ'ալ կ'որսնցրնէ : Ահա հոս կը կայանայ անաչառութիւնը :

Իսկ դատման մէջ երկու բան կայ ընկելու :

Նախ՝ դիտողութիւնն ընելիք առարկայն դիտողութեան նպաստաւոր կէտով

մը բռնելու է, ինչպէս պտուղն իր կա-
տարեալ հասունութեանը կէտին վրայ,
և կենդանին իր կատարեալ ասմանը վը-
րայ: Արկրորդ առարկային վրայ լաւ մը
գիտողութիւն ըլլալէն և երեւոյթները
ճանչցուելէն ետքը՝ աղէկ հոգ տանելու է
որ դատմամբ օրինաւոր հետեւեանք ծագին:

Վերջապէս գիտողութիւնը յարա-
տեւ ըլլալու է, վասն զի միայն մէկ ան-
գամի փորձ մը բաւական չըլլար անոր,
անանկ պարագաներ կ'ըլլան՝ ուր քանի մ'
անգամ փորձ ընել անհրաժեշտ պէտք է
այլ և այլ կողմէն զանազան միջոցով և
տարբեր տպաւորութիւնով: Ստոյգ հե-
տեւեանք մը գտնելու համար փորձը որ-
քան որ բազմապատկեա՝ շատ չէ, միայն
թէ խնդրոյն սրայմանները փոխուին:

Փրճը գիտողութեան մէկ մասնաւոր
կերպն է, անկէ միայն այս բանովս կը
տարբերի որ առանց սպասելու երեւոյթ-
ներուն իրենց բնական կերպով կատար-
ուելուն՝ քանի մը արուեստական հնար-
քով կը գրգռէ զանոնք: Չիւնին, սա-
ռին ինչ ըլլալը՝ գիտողութեան մեթո-

տովը իմանալ ուղղոր ձմռան պիտի տպա-
սէ փորձեր ընելու համար : Իսկ փորձի
մեթոս բռնազը՝ գիտութեան պատրաս-
տած և հոգացած միջոցներով ձիւն և
ոսո կը շինէ , և ետքը այս արուեստու-
կան հետեւանքին վրայ կը պարապի . այս-
պէս ձմեռ ատեն ջերոցներուն մէջ բու-
սած պտուղներուն և ծաղկանց վրայ ալ
իւր գործողութիւնը կ'ընէ :

Փորձը գիտողութեան պէս պէտք է
մտադիր անաչառ հանձարեղ և յարատեւ
ըլլալ : Ասոնցմէ զստ երկու բան կայ դի-
տելու , նախ շատ առիթներու մէջ շատ
ճարտարութիւն և ջանք բանեցընելու է
որ արուեստական կերպով այս կամ այն
երեւոյթը դիւրաւ ըմբռնուի : Արկրորդ՝
ինչ յաջողութիւն ալ որ ձեռք ձգուի ,
բնական և արուեստական հետեւանաց
մէջ քանի մը տարբերութիւններ կան ,
և ասոնք ալ հաշուի առնել պէտք է :

Իսասկարգութիւնը այն մեթոսն է , ու
րով տարբեր՝ բայց իրարու վերաբերու-
թիւն ունեցող յատկացուած առարկա-
նէր իրարու հետ յարաբերութիւններ

նուն նկատմամբ միեւնոյն նշանի կամ ա-
նունի տակ կ'առնուին :


Վաստակարգութիւնը երկու է, բնա-
կան և արտ-խաբակիան :

Վնակիան կ'ըլլայ, երբ շարուած առար-
կայից նշանը և անունը նոյն առարկայից
բնութեանէն կ'առնէ :

Մասպէս Ղիւսիէօ անկոց՝ իւրաքան-
չիւրին ունեցած հանգամանաց համեմատ
անոնց զանազան տեսակները զատած է,
և բնական դասակարգութիւն մը ըրած է :

Մարտիակիան կ'ըլլայ, երբ անուննին
կամ նշաննին ըստ հաճոյից կ'առնուի,
կամ թէ երկրորդական բաներով իրաց
բնութեանը կը վերաբերի : Վիննէի ըրած
անկոց դասակարգութիւնն ստանկ է,
ըստ որում միայն երկրորդական կէտերու
վրայ է : Վնակիան դասակարգութեան օ-
րինակ կրնան ըլլալ գրատուները, որոնց
մէջ ամեն գիրք, պատմութիւն, փիլիսո-
փայութիւն, պերճախօսութիւն և այլն,
իւր տեսակին կարգովը կը շարուի, իսկ
արուեստական դասակարգութեան օրի-
նակ կրնայ ըլլալ այն գրատուներ ուր ա-
մեն գործ խառն ի խուռն դրուած են,

կամ ժամանակագրութեան, կամ դիրքին
կամ կազմին նայելով :



Գ Լ Ո Ի Խ Թ .

Հաժեմառու, Թիւն, Մակաճու, Թիւն, Ենթա
դրու, Թիւն :

Շատ անգամ կ'ըլլայ որ՝ համեմա
տութիւնը մակաճութեան հետ շփոթենք
ալ նէ, գէթ այս երկու մեթոտներուն
մէջ եղած տարբերութիւնը չենք կրնար
յատուկ նշանակել. այս բանս ալ անոնց
մէջ եղած սերտ աւելնչութենէն կը պատ
ճառի : Աստի յատուկ հասկցուելու հա
մար՝ պէտք է որ համեմատութենէն առաջ
մակաճութեան սահման մը տանք :

Սակաճութիւնը այն մեթոտն է, որով
երեւոյթ մը դիտողութեան տակ իյնալէն
և հաստատուելէն ետքը կ'եղրակացընենք
թէ մի և նոյն պարագաները քանի որ պա
տահին՝ միշտ ալ նոյն արդիւնքը սխիտ ս
նենան. ինչպէս քար մը օդին մէջ կախ մը
նալով թող տանք զայն, չուանին ուղղու
թեամբը շտակ երկրիս կեդրոնը կ'իյնայ :

Այս բանս դիտելով՝ կը կրկնեմ նոյնը, կարգաւորապէս կը հասկնամ, վերջը կ'եղբակացընեմ թէ ամեն անգամ որ օդին մէջ կախ մնացած քար մը թող տրուի՝ գետինն պիտի լինայ : Այս եղբակացութիւնը բնութեան օրինաց կայունութեանը վրայ հիմնեալ է :

Սակաճութիւնը համեմատութեան ծագման կէտն է :

Համեմատութիւնը այն մեթոան է, որով առարկայի մը վրայ երեւոյթ մը ըլլալով՝ կը փնտռենք թէ արդեօք նոյն առարկայէն տարբեր բայց անոր հետ վերաբերութիւն ունեցող առարկաները մի և նոյն վերաբերութեամբ կը ցուցընեն նոյն երեւոյթը, ինչպէս քարը օդին մէջ բռնելով երբ կը թողում, ուղղակի գետինը կ'իջնայ, հիմայ հասկընալ կ'ուզեմ, միթէ փայտ մետաղ կամ որ և է կարծր մարմին մ'ալ անանկ կ'ըլլայ : Առաջ մէյ մը փորձը կ'ընեմ, և երբ կարծիքիս մէջ կը հաստատուիմ, ան առեն առաջուց քարին ընծայած յատկութիւնս՝ ամեն կարծր մարմիններու ալ կուտամ : Վերջը հեղուկ

մարմնոց վրայ ալ նոյն փորձը կ'ընեմ, այս նկատմամբ նոյնը կը գտնեմ, ուստի նոյն օրէնքն ասոնց վրայ ալ կը տարածեմ : Հուսկ ուրեմն կազային մարմնոց վրայ ալ կ'ընեմ նոյն փորձը, միայն թէ՛ փորձի միջոցը անոնցմէ քիչ խտուածիւն ունենայ : Աւրեմն համեմատութեան խարխուրը բնութեան օրինաց ընդհանրականութիւնն է, և մակաձուածութիւնը՝ անոնց կայունութիւնը : Արդ մակաձուածութիւնը բաւաւոր մեթոտ մ' է, և դրականապէս հաստատելը օրինաւոր կ'ընէ. իսկ համեմատութիւնը այն փորձառական մեթոտն է, որ միշտ ընդհանուր և բացարձակ եզրակացութիւն մը չը հաներ : Վայց սակայն ֆիզիքական և բնական գիտութեանց մէջ յաճախ համեմատութիւն կը բանի, և ասով շատ կարեւոր գիւտեր ալ եղած են : Վարդական ուսմանց մէջ ալ յաճաղութեամբ կը գործածեն զայն, բայց անոնց մէջ չտալանց զգուշութիւն և ընտրողութիւն պէտք է :

Ենթադրութիւնը կեղծ դրութեան այն մեթոտն է, որով նախադասութիւն մը

որ ճշմարիտ կարծուած չէ, նոյնը ստու-
գելը ետքի [թողելով՝ առ ժամանակ մի իր-
բեւ ճշմարիտ կ'ընդունիմք :

Չափաբերական ապացոյցներու մէջ
չստանալով կը գործածուի այս ենթա-
դրութիւնը, և շատ օգուտներ ալ ըրած
է գիտութեան կարեւորագոյն գիւտե-
րու մէջ, () գին ծանրութիւնը, արեան
չրջան առնելը իբրեւ զարմանալի ճշմար-
տութիւն ընդունելէն առաջ՝ յանդուգն
ենթադրութիւններ էին :

Անթադրութիւնը պէտք է որ օգտու
կար և ճշմարտանման ըլլայ :

Անպատակ և անտեղի ենթադրու-
թիւնները ծաղրելի են : Անթադրութիւնը
ստուգելու համար պէտք է հոգ տանել
որ ենթադրելի իրը բոլոր իրեն պատշաճ
դէպքերովը ներկայանայ : Այժմ առանց
քաշկրտութի և կանոնաւոր կերպով կը
պատշաճի ամեն առթի մէջ, ենթադրու-
թիւնը կ'ընդունուի և ճշմարտութիւն
կ'ըլլայ, ընդհակառակն եթէ մէկ պարա-
գայի մէջ ենթադրական իրողութիւնը
յարմար չըհամարուի, ենթադրութիւնն
ալ սուտ կ'ըլլայ :

Գ Լ ՈՒ Խ Ժ .

Ճիշդ գիտութեանց մէջ գործածուած մեթոտը .
Առած (axiome), Սահման, Ապացուցութիւն եւ,
Յայտնութիւն :

Այն գիտութիւն այն ճիշդ անու-
նը կը կրէ , ե յիրաւի առանց ճշդու-
թեան , այսինքն՝ առանց կարգի , առանց
որոշման եւ առանց սոյժառայէս սահ-
մանեալ ճշմարտութեան գիտութիւնը
ի՛նչ է . իւր անունն ալ սուտ կը հանէ ,
բնութիւնն ալ , նարատակն ալ . սակայն
պէտք է խոստովանիլ թէ ֆիզիքական եւ
բնական գիտութեանց մէջ դեռ անծա-
նօթ երեւութից յանկարծակի տեսնուիլը,
անոնց յաջորդական կատարելագործու-
թեանց հետ կցորդած գործիքներուն
տարբերութիւնը , մեթոտներուն եւ գոր-
ծելու եղանակաց փոխփոխութիւնը , փի-
լիսոփայական գիտութեանց մէջ՝ եզրե-
րուն անցատուկ ըլլալը , տեսութեան կէ-
տերուն տարբերութիւնը եւ ընդդիմա-
մարտ դրութիւնները . բարոյական գի-
տութեանց մէջ՝ նախապաշարմունք , կիրք

և շահ, ասոնք ամենն ալ շատ անգամ
չփոթու թիւն կը ձգեն : Յիրաւի յաւել-
տեան ցուալի դժբաղդութիւն մ' է այս,
որմէ ազատ է չափաբերական գիտու-
թիւնը իւր մեթոտներուն խիստ ճշդու-
թեամբը :

Ո՛րչէր գիտութիւնս . — Ինչպէս որ Ա.
գլխոյն մէջ խօսած ենք, ճիշտ գիտութեանց
առարկաներն են՝ քանակութեանց, չա-
փի, տարածման, գօրութեան քանի մը
գաղափարները և վերաբերութիւնները :
Ըստիկ են թուարանութիւն, գրահաշիւ,
երկրաչափութիւն, մեքենաբանութիւն,
և այլն, մէկ խօսքով բոլոր չափական գի-
տութիւնք :

Ո՛րչէր գիտութեանց մէջ գործած-
ուած մեթոտը հեպտո-թեան մեթոտն է :
Հետեւութեան մեթոտը՝ հետեւութիւն
հանելու համար սկզբունք դնելու, մաս-
նաւոր գաղափարները ցուցնելու հա-
մար զանոնք ստորունակող ընդհանուր գա-
ղափարները բացատրելու, և այլ և այլ բա-
ներու ստաշածիլը ցուցնելու համար ա-
ռած մը առաջարկելու վրայ կը կայանայ :

Հետեւում թիւնը փիլիսոփայական և չափական լուսազոյն մեթոսն է, և պատճառաբանում թեամբ եւ ասպացուցում թեամբ մինչեւ ճշմարտութիւնը գտնելու կը հասնի :

Աստուծոյ ինքնին յայտնի ճշմարտութիւն մ' է լիզ զուրցելով մը հասկցուելու . « Ամբողջը իւր մասերէն մեծ է » . « գործը պատճառ կ'ենթադրէ » : Այցայն ալ չը մտնանք ըսելու թէ՛ նոյն իսկ առածն ալ չը հասկցուիր , եթէ առաջուց բանի մը բաներ գիտցուած չըլլան :

Օրինակի ազադաւ, դիցուք թէ՛ ոչ ամբողջին գաղափարը գիտենք և ոչ ալ մասին . « Ամբողջը իւր մասերէն մեծ է » առածը ի՛նչպէս սխալի հասկրնանք :

Արկու կերպ սահման կայ, սահման բռնից՝ սահման իրաց :

Աստուծոյ սահմանել ըսելը՝ նոյն բառին նշանակութիւնն սրոշել, այսինքն թէ որ մէկ նշանակութիւն մը ունի այն , և թէ որ շատ նշանակութիւն ունի՝ անոնցմէ ներկայ խօսքին մէջ հասկցուելիք նշանակութիւնը իմացնել ըսել է : Փիլիսոփայ

ական խնդրոց մէջ շատ կարեւոր է բա
ռից սահմանը : Այժէ վիճաբանութիւնը
չսկսուած՝ բառերը սահմանով հասկնայն
սկիզբ դնէին, շատ ժամանակի խնայու
թիւն կ'ըլլար, և անօգուտ վէճերէ ալ
կը խորշուեր :

Սահմանը քանի մը անհրաժեշտ կա
նոններ ունի. վասն զի պէտք է որ պայ
ծառ որոշ և անորոշարձ ըլլայ, նաեւ իւր Տօ
գասոր սեռը և սեպհական քարբերութիւնը բո
վանդակէ :

Սահմանը պէտք է պայծառ ըլլայ, այ
սինքն անանկ բառերով ըլլայ, որ լիկ զը
րուցուելով մը հասկցուի :

Որոշ, այսինքն սահմանեալ իրը և ամ
բողջապէս զայն ցուցրնէ, և անկէ զաս
ուրիշ բան չխմացրնէ :

Անորոշարձ, այսինքն սահմանը կամ
սահման տրուած բանին անունը անխտիր
իրարու անզ գործածուին, ինչպէս. « Այ
ռանկիւն մը երեք անկիւնով և երեք կող
մերով ձեւ մ' է », « երեք անկիւնով և ե
րեք կողմերով ձեւ մը եռանկիւն մ' է » :

Սահմանը, ըսինք վերը, իւր Տօգասոր սե
ռը և սեպհական քարբերութիւնը պիտի բովանդա

կէ . հոս բանի մը մանրամասն տեղեկու-
թիւններու մտնել պէտք է :

Արովհետեւ մարդս տկար է , ամեն
բան մէկիկ մէկիկ չկրնալով գիտնալ , պէտք
եղած է որ դաստակարգութիւն մ'ընէ .
այսպէս ամեն բան իր մէջը ամփոփող է
ակին , և անձ մը կամ իր մը եղող անհա-
տին մէջ աստիճաններ դնել պէտք եղած
է , ինչպէս կենդանի էակ , բանաւ որ էակ ,
կենդանի մարդ , և եթէ պահանջուի ալ ,
Լըրտպացի , Վաղղիացի , Փարիզցի , կամ
այս որ Փարիզցին :

Բաց էակէն որ ամեն բան կր պարու-
նակէ , և անհատէն որ միայն մէկ անձ
կամ իր կը ցուցնէ , այս դաստակարգու-
թեան այլ և այլ մատուցիք իրարու համե-
մատութեամբ սեռ և տեսակ ըլլալու մի-
ձակի մէջ են , սեռք բախանդակելով զտե-
սակը , և տեսակն ալ հարկաւորապէս սե-
ռին մէջ պարունակուելով , ինչպէս էա-
կը գլխաւոր սեռն է , հոգեւորեալը էակին
մէկ տեսակն է , շնչաւոր էակը՝ հոգեւո-
րեալին , և մարդը՝ շնչաւորին մէկ տեսա-
կըն է , և այլն : Հոս կը տեսնուի որ էակ
բաւը բոլոր իրք իրբեւ բարձրագոյն սեռ

իր մէջը ամփոփելով չկրնար տեսակ ըլլալ, վասն զի իրմէ դուրս բան մը չունի որ պարունակէ զինքը . հոգեւորեալ էակը՝ որ էակիին նայելով տեսակ է, շնչաւոր էակին սեռ կ'ըլլայ, ինչպէս որ շնչաւոր էակին ալ՝ որ կենդանի էակիին նայելով տեսակ է, մարդոյն նայելով սեռ կ'ըլլայ : Այսպէս կարգաւ մինչև որ դատակարգութեան վերջին աստիճանը հասնինք, որ իրեն անհատական եղած բանէն զատ բան չպարունակելովը՝ առանց սեռ ըլլալու տեսակ կը մնայ, ինչպէս որ բնդ հանրապէս էակը սեռ է և չկրնար տեսակ ըլլալ :

Ասիկայ ըլլալէն ետքը՝ սահմանին սրահանջած Տօբա-որ սէռը դատակարգութեան այն մասը պիտի ըլլայ, որ սահմանելի առարկայն կարելի եղածին չափ քիչ նման առարկաներով կը խառնուի : Այս դատակարգութեան մէջէն առնելով՝ անոր տեսակիին յատուկ բնութեամբը նշանակելու է . այս է ահա սեպհական տարբերութիւնը :

Այդո՞րո՞յն-ի-նը այն մեթոսն է, որով անձանօթ նախադատութեան մը ճշմար-

սու-թիւներ կամ սու-թիւներ կը հասկնանք :
Լ'սրացոյցը՝ արամախոհու-թեան հետեւու-
թիւն հանելու մե-թոտին վրայ կը կայա-
նայ, և ըւու-թեան սրայմանն այն է որ
միշտ յայնու-թիւն մ' ըլլայ արդիւնքը :

Աւրեմն յայտնո-թիւնը կամ իւր և կամ
նայնը ունեցող իմացականու-թեան մէջ
սխախնկատուի . ըսել է երկուքի կը բաժ-
նուի , առարկայան և եմբակայան :

Լ'առարկայան յայտնո-թիւնը՝ այսինքն ինք-
նին նկատեալը ճշմարտու-թեան այն վի-
ճակնէ, որու վրայ տարակուսիլը անհնար է :

Լ'եմբակայան յայտնո-թիւնը՝ այսինքն նայ-
նը ունեցող իմացականու-թեան կողմէն
նկատուածը , ճշմարտու-թեան որոշ և
սրայծառ տեսու-թիւնն է :

Յայնու-թիւնը կը ծագի արտային
և ներքին զգայարանաց կանոնաւոր վկայ-
ու-թեանէն , մարդկան կանոնաւոր վկայ-
ու-թեանէն , սուածի մը իմաստէն , վերջա-
պէս աղէկ ապացոյցէ մը :

Գ Լ Ո Ւ Խ Ժ Ս .

Հաւարարանութիւն . անոր ձեռքը եւ կա-
նոնները : Հաւարարանութեան գործածու-
թիւնը եւ գեղծումը :

Բանէ հետեւութիւն հանելու մե-
թոսը շատ մը ձեւեր գործ կ'ածէ , որոնք
առարկո-նի-ն կ'ըսուին :

Առարկո-նի-նը տրամախոհութեան մէկ
կերպն է :

Տրամախոհութեան գլխաւոր կեր-
պերն են , հասարականո-նի-ն , երկար հասարա-
կանո-նի-ն , եղաբաժ , փաստորդ , համաբարդո-
նի-ն և երկասյրաբանո-նի-ն : *Dilemma*

Հասարականո-նի-նը երեք նախադասու-
թիւններէ բաղկացեալ առարկութիւն մ'
է , որոնցմէ մէկը միւս երկուքէն կ'ելնէ , մէկ
ուրիշի մը միջոցաւ : Այլաձ նախադասու-
թիւնը եղբակոյտո-նի-ն կ'ըսուի , միւս երկու-
քը առաջարկեալս կամ առջարկո-նի-ն :

Հաւարարանութիւնը երեք եզր ու-
նի , ՌԺ , ԳԳ և ՌՋն : ՍԺ եղբը ընդհանուր
գաղափարը կը ցուցնէ . ԳԳ եղբը մասնա-
ւոր գաղափարը . ՌՋն եղբը միջանկեալ գա-

զափար մը կը ցուցնէ, որ միւս երկու դա-
զափարաց հասարակաց չափն է : Հաւա-
քաբանութիւնը ամբողջ՝ միջին եզրին մե-
ծագոյն և փոքրագոյն եզրերուն հետ ու-
նեցած յարաբերութեանը վրայ է : Աւ-
սրն զի այս առարկութեան բոլոր ոյժը
այս առածին վրայ է, « Արկու իր որ մէկ
երրորդի մը կը պատշաճին, իրարու ալ
կը պատշաճին » :

Սա հետեւեալ հաւաքաբանութիւն-
նը գնեմք :

Ամեն մարմին ծանր է : Ա՛րդ՝

() Դը մարմին մ՝ է . ուրեմն՝

() Դը ծանր է :

Ա երջին նախադասութիւնը « օդը
լանր է » առջի երկու նախադասութիւն-
ներէն ծագած է յայտնապէս . և այս է
էզրակացո՞ւնն կամ հեպտոնոն : Իսկ միւս
երկուքը առաջարկեալք կ'ըստին, որոնց
մէկէն՝ այսինքն երկրորդ նախադասութե-
նէն կը ծագի եզրակացութիւնը :

Վիտել պէտք է որ այս հաւաքաբա-
նութեանս մէջ մեծ եզրը ծանրն է, փոքր
եզրը՝ օդը, միջին եզրը՝ ճարմինը :

Ամեն հաւաքաբանութեան մէջ մեծ

եզր պարունակող նախադասութիւնը Տե-
ծագոյն կ'ըսուի, ինչպէս նախընթաց հա-
ւաքաբանութեան մէջ «ամեն մարմին ծա-
նրը է » :

Փոքր եզր պարունակող նախադասու-
թիւնը փոքրագոյն :

Միջին եզրը « մարմինը », որ մեծ և
փոքր եզրերուն հետ առընչութիւն մ'ու-
նի, մեծագունին և փոքրագունին մէջ կը
գտնուի :

Մսիկա իւր պաշտօնը, այսինքն՝ մէկ
եզրը միւս եզրին հետ բաղդատելը լմնցը-
նելէն ետքը, եզրակացութեան մէջ ան-
յայտ եղած է, որ միայն մեծ և փոքր եզ-
րերը կը պարունակէ :

Նշրակացութիւնը մեծագունին մէջ
պիտի պարունակուի, և փոքրագոյնն ալ
պէտք է ցուցնել թէ մեծագոյնը հետե-
ւութիւնը կը պարունակէ : Մսիկց զատ
միջին եզրը առաջարկելոյ մէջ ունեցածէն
աւելի ընդարձակ իմաստ ունե՛նալու չէ
եզրակացութեան մէջ : Հաւաքաբանու-
թեան վրայօք հիներուն աւանդած կա-
նոնները, նոր փիլիսոփայութիւնը այս բ-
կզբունքներու վերածեց, սակայն այս

կանոնները հոս խմայրներն աղէկ է : Ասոնք
դիւրխմանալի ըլլալու համար արուեստա-
կան ոտանաւոր մը շինած էին դպրոցի ու
ձով, որուն խմաստը սցապէս կը բացատրուի :

1. Այրեքեզը պէտք է, միջին, մեծ և փոքր :

2. Առաջարկեալներէն աւելի ընդար-
ձակ նշանակութեամբ միջին եզր շընդու-
նիր եզրակացութիւնը :

3. Ազրակացութիւնը չպիտի բովան-
դակէ միջին եզրը :

4. Սիջին եզրը պէտք է մէկ կամ
երկու անգամ ընդհանուր առմամբ հաս-
կըցուիլ :

5. Արկու ժխտողական առաջար-
կեալներէն հետեւցրնելիք բան չկայ :

6. Արկու հաստատական նախադա-
սութիւններէն ժխտողական նախադասու-
թիւն մը չեներ :

7. Արկու մասնաւոր նախադասու-
թիւններէն հետեւութիւն մը չեներ :

8. Ազրակացութիւնը միշտ երկու
առաջարկելոյ փոքրագունին կը հետեւի,
սցսինքն՝ երկու առաջարկեալ եզրեր դնե-
լով եթէ մէկը հաստատական և միւսը
ժխտողական ըլլայ, եզրակացութիւնն ալ

ժխտողական կ'ըլլայ . եթէ մէկը ընդհա-
նուր և միւսը մասնաւոր ըլլայ, եզրակա-
ցու-թիւնն ալ մասնաւոր կ'ըլլայ :

Հաւարարանութեան մը միջին եզրը
զանազան տեղ կրնայ դրուիլ :

1. Միջին եզրը առաջին առաջարկու-
թեան ենթակայ կրնայ ըլլալ, և երկրոր-
դին մակդիր կամ ստորոգելի :

2. Երկու առաջարկութեանց մէջ
ալ միջին եզրը ենթակայ կրնայ ըլլալ :

3. Երկու առաջարկութեանց մէջ
ալ միջին եզրը մակդիր կրնայ ըլլալ :

4. Միջին եզրը երկրորդ առաջարկու-
թեան մէջ ենթակայ կրնայ ըլլալ, և ա-
ռաջինին մէջ մակդիր (1) :

Առաջարկելոց այս միջին եզրին բըռ-
նած տեղին համար առած զանազան կեր-
պերը յե-հա-աչաբանութեան կ'ըսուին :

Նախադասութիւն մը կամ հաստա-
տական կ'ըլլայ կամ ժխտողական, և սակ-
կայ է անոնց որպիսութիւնը կացուցանու-

(1) Բնագրին մէջ այս շորորդը վերը Վ. Թուանք.
չանով գրուածին հետ նային էր, բայց մենք հայերէնը
չակնջինք : Ծանօթ. Բա. 48 :

զը . կամ ընդհանուր կ'ըլլայ , կամ մասնաւոր , և այս քանակութիւնը կը կայուցանէ : Նախադասութեանց որպիսութիւնը և քանակութիւնը հասարակութեան եղանակը կը կազմեն :

Հին փիլիսոփայական դպրոցն այս մանր մունր բաներուն մեծ կարեւորութիւն տուած ըլլալով՝ նախադասութեանց քանակութիւնը և որպիսութիւնը Ա, Ե, Ի, Օ, չորս ձայնաւոր գրերով ներկայացընել մտածեց :

Ա ընդհանուր և հաստատական նախադասութիւնը կը ցուցընէր :

Ե ընդհանուր ժխտողական նախադասութիւնը :

Ի մասնաւոր հաստատական նախադասութիւնը :

Օ մասնաւոր ժխտողական նախադասութիւնը :

Ասիկէ զատ նախնիք՝ հաւաքաբանութիւն մը կազմող նախադասութիւններուն բոլոր տարբեր և կարելի բաղկացութիւնները հաշուելով , գտած են թէ այս բաղկացութիւնները 74 հատ են , ուրոնց 14ը եզրակացուցիչ են :

Ասոնք միայն յիշելու համար՝ մէջ կը բերենք : Այս գիտնալ արժան է միայն թէ միջին եզրը առաջարկութեան մէջ ինչ տեղ որ դրուի, այն տեղէն կախում կ'ունենան հաւաքաբանութեան ձեւերը, և թէ հաւաքաբանութեան մը եղանակը նախագատութեանց քանակութեանէն և յաակութեանէն կախում ունի :

Հաւաքաբանութիւնը գերազոյն աւտիճանի առարկութիւն մ' է . հաւաքաբանութեամբ զանազան առարկութիւններ կը շինուին, որոնց գլխաւորները վերը գրինք հաւաքաբանութեանէն ետքը, ինչպէս որ հիմա դարձեալ անոնց իւրաքանչիւրին վրայ պիտի խօսինք :

Երկր հասարակութիւն կ'ըսուի այն առարկութիւնը, որ երկու կամ աւելի հաւաքաբանութեամբ կազմուած է այն կերպով՝ որ առաջինին հետեւութիւնը՝ երկրորդին մեծագոյն կ'ըլլայ, և երկրորդին հետեւութիւնը՝ երրորդին մեծագոյն կ'ըլլայ, և այլն, ինչպէս .

« Աստ ինքեան յայտնի իր մը աներկբայական է :

Արդ՝ առածը ըստ ինքեան յայտնի է.
 Արեմն՝ առածը աներկբայական է :
 Աներկբայական իր մը ապացոյցի
 պէտք չունի :

Արդ՝ առածը աներկբայական է .
 Արեմն առածը ապացոյցի կարօտ չէ ։

enthymē Առածը այնպիսի հաւաքաբանութեան մ' է , որուն մէջ առաջարկեալներէն մէկը միշտ զօրութեամբ կ'իմացուի :

Ինչպէս « Ա՛մէն մարմին ծանր է . ուրեմն օդը ծանր է » : *հը հասցր. սպիտակ բաժն:*

Այդառածը կանոնաւոր բլաբլու համար պէտք է որ զօրութեամբ իմացուած նախադասութիւնը դիւրաւ և անաշխատ միտք գայ :

Փաստորէն՝ այնպիսի հաւաքաբանութիւն մ' է , որուն մէջ առաջարկեալներէն իւրաքանչիւրն ալ հետեւինն ունին իրենց ապացոյցը , ինչպէս .

« Ա՛մէն մարմին ծանր է , ասիկա գիտութեան բնդունած մէկ ճշմարտութիւնն է :

Արդ՝ օդը մարմին է . և յիշաւի օդոյ ներկայութիւնը շօշափելեաց զգալի է .
 Արեմն օդը ծանր է » :

Փաստորդը կանոնաւոր ըլլալու հա-
մար պէտք է որ իւրաքանչիւր առաջար-
կեալին ապացոյցը պայծառ և որոշ ըլլայ :

Համախորհուրդի մէջ այնպիսի առարկու-
թիւն մ' է, որ խել մը իրարու ստորակար-
գեալ և մէկմէկու կապուած նախադա-
սու թիւններէն բաղկացած կ'ըլլայ, այն
կերպով որ առաջինին մակդիրը երկրորդին
ենթակայ կ'ըլլայ, և երկրորդին մակդիրը՝
երրորդին ենթակայ կ'ըլլայ, և այսպէս կար-
գաւ մինչև վերջին նախադասութիւնը, ու
րուն ենթակայն առաջինին ենթակայ է,
և որուն մակդիրը առաջինին մակդիրն է :

Ինչպէս . « Անձնասիրութիւնը կը
կուրացընէ մարդուս աչքը, ինչ բան որ
կը կուրցընէ, ճշմարտութիւնն ալ տես-
ցընել չտար, ինչ բան որ ճշմարտութիւ-
նը տեսցընել չտար, վտանգաւոր խորհրդ-
դատու է, ուրեմն անձնասիրութիւնը վը-
տանգաւոր խորհրդատու է » :

Օանտթ է ազուէսին հռչակաւոր
համաբարդութիւնը, զոր Մօնթէյն մէջ
կը բերէ :

« Այսպէս, ազուէսը զոր Թրակացի

ները սառած գետի մը վրայէն անցնելու
 առեւնին կը գործածեն, և այս բանիս
 համար առջեւնին թող կուտան. երբ ա-
 նիկա կը տեսնեմք որ ջրեզրէն ահանջը
 սառին կը մօտեցնէ, լսելու համար թէ
 ջուրին հոսման ձայնը սառին տակէն հե-
 ուռէն կուգայ թէ մօտէն, և ասով սա-
 ռին քիչ կամ շատ թանձրութիւնը հաս-
 կրնալով առաջ կ'երթայ կամ ետ կը դառ-
 նայ. իրաւունք չունիմք արդէօք տրամա-
 բանելու թէ՛ ինչ որ մեր մտքէն կ'անցնի,
 անոր ալ մտքէն նոյնը կ'անցնի, և թէ ա-
 սիկա բնական զգացմանէն ելած տրամա-
 խոհութիւն և եզրակացութիւն մ' է.
 « Այն որ ձայն կը հանէ՝ կը շարժի. այն
 որ կը շարժի՝ սառած չէ. այն որ սառած
 չէ՝ հեղուկ է, և այն որ հեղուկ է՝ բեռան
 տակ կը ճնշուի » (1) :

(1) Այս համարարգութիւնը հեղինակին տուած
 կանանին համեմատ չըլլալուն համար աղէկ չէ, որովհե-
 տեւ նախադասութեան ոչ ենթակայն և ոչ մակդիրը ա-
 ռաջին նախադասութեան մէջ չկան : Կանոնաւոր ըլլա-
 լու համար պէտք էր որ ըլլար. « Այն որ ձայն կը հա-
 նէ, հեղուկ է » . Մօնթէյն՝ աղուեսին բաւականու-
 թիւն տալու և մարդոց հաւասարելու զբաղելով իւր
 տրամաբանութիւնը կորուսեր է : Ճ. Թ. Բարդ :

Համարարդու թիւնը աղէկ ըլլալու համար՝ պէտք է որ նախադասու թեանց շղթայն կանոնաւ որ և կապակցու թիւննին գիւրըմբռնելի ըլլան :

ilemma Այնպիսի առարկու թիւն մ' է, որ երկու հակառակ նախադասու թիւններէն կը կազմուի, ուսկից միայն մէկ հատիկ՝ բաց անժխտելի հետեւու թիւն մը կ'ելնէ :

Օրինուորի մը պահպանու թիւն բրած ժամանակը սձիր մը գործուելով պահակերաց գլխաւորը ասանկ երկայրաբանու թիւն մ' ըրաւ . «Այ՛մ պաշտօնիդ վրայ էիր՝ կամ չէիր . թէ որ հսկողու թիւն կ'ընէիր, յանցաւ որ ես որ սձիր գործուելու տեղի տուիր . եթէ չէիր հսկեր, դարձեալ յանցաւ որ ես որ զինուորու թեան կանոնը չես կատարած : Աւրեմն ասոնց որքն որ ըլլայ՝ օրինաց թելադրած պատժոյն արժանի ես » :

Այրկայրաբանու թիւնը աղէկ ըլլալու համար՝ պէտք է որ երկու հակառակ նախադասու թիւններուն հակառակ ըլլալը յայտնի և որոշ ըլլայ . և որպէս զի այս

երկու նախադասութիւնները իրարու հակադարձ ըլլան, սէտք է որ մէկին հաստատելը և միւսին ժխտելը կատարեալ ըլլայ, ինչպէս. «Վանձրեւէ, չանձրեւեր». ապա թէ ոչ հակասական կ'ըլլար, ինչպէս. «Յէրմու թիւնը չափազանց է, ջերմութիւնը շատ է» :

Գործածութիւն և ղեղծութիւն հասարակականութեան. — Հաւաքաբանութեան օգուտը առ է որ ամեն վէճ և խօսք կարճ և զօրաւոր ձեւի մը տակ կը մտցընէ, և ինչպէս սուտը՝ այնպէս ալ ճշմարիտը դիւրամբունելի կ'ընէ :

Ասկէ զատ հաւաքաբանութեան մեթոտը միտքը կը վարժեցընէ ճշդութեան և որոշման, մանաւանդ դատումը կ'ուզի և կ'ամրացնէ, որ չափական գիտութեանց օգտակարագոյն արդեանց մէկն է :

Այց հաւաքաբանութեան մեթոտը վտանգէ ազատ չէ. միշտ զօրաւոր և հաստատական ձեւերով խօսելու ունակութիւնը խտուրթիւն և ցամաքութիւն կուտայ. ասկէ զատ սաստիկ մտադրութիւնը ընկելով առարկութեան վրայ, ձեւին նը

կատմամբ շատ անգամ կ'ըլլայ որ հիմը՝
այսինքն նայն խակ խակմունքը և միտքը կը
մտալուին :

Այնք որ ինչ բան հաւաքաբանու-
թեան ձեւերու տակ կրնան մտցրնել՝ մի-
այն այն բաները իբրեւ ճշմարիտ ընդու-
նելու սորլած են, շատ անգամ չեն հա-
ւատար այնպիսի իրերու, որոնք թէև ըստ
ինքեան ճշմարիտ ալ ըլլան, չեն սպա-
լուցուիր . այս իրաց կարգէն են ներքին
զգայունութեան և զգացման քանի մը
ճշմարտութիւնները :

Ստոթար առարկութեանց սովորա-
բար իմաստակոմիւն անուն կուտան, մանա-
ւանդ երբ որ և է առարկութեան մէջ
թեթեւութիւն, անխուժութիւն կամ
խորդախուժիւն կը կասկածուի : Ասոր վը-
րայ շատ օգտակար է (Նոս —) Սուպայի տրա-
մաբանութեան երրորդ մասին վերջին եր-
կու գլուխները կարգալ, զորոնք Ալիքոլ
հեղինակած է, և մեծ սրատիւ կը բերեն
յիշեալ բարոյախօս փիլիսոփային ուղիղ
դատման և փափուկ ամբօնութեանը :

Գ Լ Ո Ւ Խ Ժ Բ .

Բարոյական գիտութեանց մէջ բռնուած մէ-
թոսը :

Ինչպէս որ առաջին գլխոյն մէջ ըսինք,
Բարոյական գիտութեան կը ճառեն Նստուծոյ,
մարդուս, ընկերութեան, նաեւ բնու-
թեան վրայ իսկ, բնութեան վրայ երկու
կերպ տեսութեան նկատմամբ, որ են ի-
մացականութիւնն և գիտակցութիւնն :

Ուրեմն երկու բան ունի ընեւելք
բարոյական գիտութիւնը :

Նախ բարոյական գիտութիւնը կ'ու-
սուցանեն այլ և այլ գոյութիւններ, բը-
նութիւններ, իրաւունքներ, Նստուծոյ
գոյութիւնը, մարդուս բնութիւնը, ըն-
կերութեան կազմութիւնը, նիւթական
աշխարհին կարգը կանոնը, ասիկայ իմա-
ցականութեան յատկացած մասն է :

Արկրորդ՝ բարոյական գիտութիւնը
կը ճառեն Նստուծոյ և մարդուս մէջ
եղած վերաբերութիւնները, մարդուս
առ ինքն ունեցած սխալները, մարդուս
իրարու հետ ունեցած վերաբերութիւն

ները, կենդանի աշխարհին և նիւթական
աշխարհին գոյութեան սլառձառը, աս
ալ գիտակցութեան յատկացած մասն է :

Այս երկու ուսումէն՝ կրօնից, մար-
դուս ապագային, մարդկային գործոց
(կառավարութեան և դաստիարակու-
թեան), մարդուս իւր գիտակցութեամբը
իրեն համար տուած վկայութեանը, մար-
դուս իրարու բերանացի տուած վկայու-
թեանցը, և անցեալին՝ յիշատակարաննե-
րով, աւանդութեամբ և սլառմութեամբ
և ուրիշ միջոցներով ներկային համար տը-
ուած վկայութեանցը վրայ անհուն խըն-
դիրներ կը ծագին :

Այս բազմաստիկ այլատարազ խըն-
դիրները լուծելու կերպերը՝ ըստ որում
ձառելու աւարկայ, կը փոփոխուին :

Ինչպէս Աստուծոց գոյութիւնը ա-
սլացուցանելու գալով՝ Ֆենելօն առջեւ-
նիս տիեզերաց տեսարանը կը ներկայացնէ,
և անասնական և մարդկային բնութիւն-
ները կը զննէ, ասիկա Դիպոդոմ-իւնի մեթոդ
է : Այս տարբեր էակաց տեսարանէն և
զննութեանէն գերագոյն սլառձառի մը
կարեւորութիւնը կը հետեւեցնէ, աս ալ

Կեփե-ո-Նեան Տե-Նոպ է : Պօսիւ է ալ մարդ-
կային ծանօթութեամբ կ'ուզէ մինչեւ
աստուածային ծանօթութիւնը բարձ-
րանալ . ասոր համար նախ մարդս զըն-
նելէն կը սկսի , կը բաժնէ անոր մասերը ,
նախ կը քննէ հոգին և անոր կարողու-
թիւնները , վերջն ալ մարմինը և զանի
կազմող մասերը . աս ալ վերլուծո-Նեան
Տե-Նոպ է : Հուսկ ապա մարմինը և հո-
գին միացրնելով՝ անոնց փոխադարձ ա-
ռընչութիւնները և ազդեցութիւնները
կը ցուցնէ , զոր իրարու վրայ ունին . աս
ալ Բաղադրո-Նեան Տե-Նոպ է : Այլ մարդս ու-
զէ իւր ներքին բնութեան այս կամ այն
իրողութիւնը , օրինակի ազագաւ՝ իւր ա-
զատութիւնը ճանչել և հաստատել , քա-
նի մը գործերու մէջ զինքը քննելու կ'ել-
նէ , որոց կատարումը շատ կամ քիչ ար-
գելք կը հանէ առաջը . ետքը իւր կամքը
մէկ կամ միւս կողմը քաշելով՝ ազատու-
թեան վնաս բերող պատճառներուն վե-
րաբերեալ խնդիրներ կ'առնու առաջը . և
սակայ դիտողութենէն աւելի է , և է
նոյն իսկ գործառո-Նեանը :

Սակայն այս գործառո-Նեան Տե-Նոպը շատ

աղէկ կը պատշաճի վկայութեանց քննութեանը. օրինակի աղագաւ, դատաւորը կամ վկայ մտիկ ընելու յատկացած անձը՝ երբ վկային վրայ խարդախութեան կամ անհաւատարմութեան կասկած մը կ'ունենայ, կը տեսնեմք որ հարցումները մասնաւոր կերպով մը առաջը կը դնէ, ետքը կերպը կը փոխէ, վկայ վկայի՝ և վկայութիւն վկայութեան դէմ կը դնէ, իւր քննութեան ձեւը վարպետութեամբ կը դարձնէ որ տեսնէ թէ հակասութիւն կայ, ուր վկայներն իրենք զիրենք մասնեն և յանցանքը լլալու դիտաւորութիւննին յայտնուի :

Դասակարգութեան մեթոդ ալ է թէ կ'ուղեւ, ընկերութեան վրայ հայեցուած մը ձգելնիս բաւական առիթ կուտայ նոյնը պատշաճեցնելու թէ ընտանեաց, ուր պարտականութիւնը և իրաւունքը ամեն մէկին բռնած տեղէն կախում ունի, թէ պետութեան, ուր իշխանութիւնները և հանձարը և հարստութիւնները և պաշտօնները և գործերը պէտք ունին զատուելու և անուններով և մասնաւոր և յատուկ նշաններով ձանջուելէն կախում ունին :

Վերջապէս մարդկային սրտին ծանօթութիւնը ժողովրդոց կառավարութեան և դաստիարակութեան նկատմամբ գիտութեան մէջ պատմութիւնն և փիլիսոփայութիւնը շատ անգամ մակաճոմեան և համեմատութեան մեթոդը կը բանեցնեն, որովհետեւ ըստ տրամաբանութեան՝ մի և նոյն պատճառէ մի և նոյն գործ կը ծագի, և նմանօրինակ նշանները ստորաբար մի եւ նոյն բնութեամբ բաներ կը յայտնեն :

Այս գիտողութիւններնէս կը հետեւի թէ Բարոյական գիտութեանց մը՝ մեթոդաւորութեալ խնդրոյն բնութեանը նայելով կը գիտնի : Սուրիշ կերպով կրնայ պատասխան տրուիլ թէ բարոյական գիտութիւնը մերթ փոքրասկան մեթոտը գործ կ'ածեն, այսինքն այն մեթոտը՝ որուն հիմը գիտողութիւնն է, և մերթ Բանաստեղծական մեթոտը, այսինքն այն մեթոտը՝ որուն հիմը տրամախոհութիւնն է, և գլխաւոր ձեւըն ալ ընդհանրապէս արամաբանութեան և մասնաւորապէս սոկրատեան մեթոտն է :

Սոկրատեան մեթոդը, որ հռչակաւոր Սոկ-

րատ փիլիսոփայն գործածելուն համար
ասանկ կ'ըսուի, թէ և ինքը հնարած չէր,
բայց շատ յաջողութեամբ կը բանեցնէր,
այս մեթոտը կը կայանայ վարպետու-
թեամբ շարուած կարգ մը խնդիրներու
վրայ, որոնց իւրաքանչիւրը անխորշելի
պատասխաններ կ'ուզեն, որով բարեզգա-
ծութենէ եւ խելքէ կըստիպուի նոյն
խակ հակառակորդը ընդունիլ իւր խօսակ-
ցին ըսած և յամառութեամբ մերժած
սկզբունքը: Ստիպատեան մեթոտը հակա-
ճառութեան ձեւ մ' է, որ ընդհանրա-
պէս արամաստհութեան ճամբով սեղմ
և նեղը ձգող խօսակցութեան կերպ մ' է,
որ խիստ շատ անգամ հաւաքաբանու-
թեան ձեւ կ'առնու վրան: Պենելօնի
Օրոշաբրո-ի-նէ՛ Ի վերայ ճարտարախօսու-
մանուն երկասիրութեան առաջին զրու-
ցատրութեանը մէջ գեղեցիկ օրինակ մը
կայ այս հակաճառութեան ձեւին՝ մա-
նաւանդ ստիպատեան մեթոտին վրայ:

Գ Լ Ո Ւ Խ Ժ Գ .

Մարդկային վկայութեան հետքնակութիւնը :
Կանոնք սրատմական քննադատութեան :

Վ կայութիւնը շատ կամ քիչ ծանր
գործոյ մը մէջ հաշիւ և տեղեկութիւն
տալ մ' է :

Վ կայութեան մը հեղինակութիւնը
ընդունելի ըլլալու համար յառաջ բերած
պայմաններէն կախում ունի : Վ կայու-
թիւն մը ընդունելի ըլլալու համար եր-
կու տեսակ պայման ունի , մէկ տեսակը
Վիյեալ իրին յարաբերութեամբ , և միւ-
սը նոյն իսկ Վիյին :

Վ կայեալ իրը պէտք է որ ըլլայ իս-
րելի և շիտիլի , և վրան ալ շիտիլի-ն իշտ
պէտք է որ ըլլայ :

Վ իյն պէտք է որ բաւական ըլլայ ,
սցսինքն վկայելու վիճակի մէջ ըլլայ :

Վ կայեալ իրը պէտք է որ ըլլայ իարե-
լի . վասն զի անհետեթ եղելութեան մը
համար եղած վկայութիւնը վստահելի
չըլլար :

Վ կայեալ իրը պէտք է ըլլայ շիտիլի ,

վասն զի՝ Տեսայ, լսեցի, և այլն՝ ըսելու համար, հարկ է որ տեսնելու կամ լսելու ըստ բաւականին կարող ըլլանք :

Վ կայեալ իրին վրայ Դիպիլ-Ին է շաճ պէտք է որ ըլլայ . վասն զի դատարկ տեղը տեսնելու և լսելու բաւականու թիւն ունեցած կ'ըլլայ, եթէ աշխատու թիւն չէ առած գիտելու, և իրաւունք ալ չունենար ըսելու . Տեսայ, լսեցի :

Վ կայն Բաւական կ'ըլլայ, երբ իր բընական և մտաւորական և բարոյական կարողութիւնները ազատ և ամբողջ կը բանեցընէ : Վ կայն զգայարանքը ազատօրէն և կատարելապէս բանեցընելու է, կամ գոնէ այն զգայարանքը՝ որոց գործածութիւնը կ'ենթադրէ տուած վկայութիւնը . ինչպէս՝ խուլը տեսնելու և կոյրն ալ լսելու համար կրնայ վկայել, այլ ոչ երբէք խուլը լսելու, և կոյրն ալ տեսնելու համար :

Ստաւորական կարողութեանց մասին պէտք չէ ըսել թէ՛ յիմար մէկը վկայութիւն չկրնար տալ, բայց կան այնպիսի թեթեւամիտ և սակասամիտ և սուտ դատում ունեցող մարդիկ, որոնք քննելու աշխատութեանէն կը փախչին, բան

մ' է կը տեսնեն՝ բայց իմանալ հոգ չեն
ըներ, և ըսած բաներնին յակամայս սյլա-
փոխելու հակում ունին : Ասոնց տուած
վկայութիւնը այն սրայմանով կրնայ հեղի-
նակութիւն ունենալ, երբ իւր բուն
արժէքը գտնելու համար իմաստուն քրն-
նութեան մը և լուրջ դատողութեան մը
ներքէւ կ'յնայ :

Վկային բարուցը նկատմամբ՝ կեցու-
թեան, շահու, թշնամութեան, համա-
կրութեան կամ հակակրութեան այնպի-
սի սրտառանքներ կ'ըլլան, որ որչափ չենք
ուզեր ալ, մեր տեսնելու և իմանալու
կերպին վրայ ազդեցութիւն կ'ընեն, և
չատ անգամ նոյն իսկ մեր տուած վկայ-
ութիւններն ալ նոյն ազդեցութեան են-
թակայ կ'ըլլան : Այն ատեն այս վկայու-
թիւնները հեղինակութիւն ունենալու
համար լուսաւոր և խղճմտանքաւոր քրն-
նութիւն մ' ըլլալու է. ուրիշ խօսքով՝
բայց դարձեալ նոյն մտքով՝ կրնայ ըսուիլ
որ վկային պէտք է ընդունակութեան և
անաչառութեան ամեն երաշխաւորու-
թիւնները ներկայացընէ, այնպէս որ ոչ
խաբէ և ոչ խաբուած ըլլայ :

Կան նաեւ գիտութեան և գործոց վերաբերեալ վկայութիւններ , որոնք մասնաւոր ծանօթութիւններ կը պահանջեն . ասիկա՝ վկային յարմարութեանը մասնաւոր և բացառիկ մէկ դէպքն է , սակայն ուրիշ դէպքերու պէս մտաւորաւ կան և բարոյական ընդունակութեան օրէնքի ենթակայ է :

Արբոր վկայութիւնը թէ՛ իւր և թէ՛ վկայողին կողմէն պահանջուած ամեն պայմաններովը ներկայանայ , մասնաւոր և անհատական գործի մը մէջ վկային և վկայութեան կրնանք հաւատալ . բայց մեծ դատաստաններուն մէջ օրէնքը շատ վկայներ կ'ուզէ , մէկ վկայն՝ վկայ չկայ ըսել է :

1. Վկայները՝ բազմաթիւ կամ սակաւաթիւ՝ եթէ մէկտեղ եկած ըլլան, ամեն մէկը վերայգրեալ ամեն պայմանները պիտի ցուցնեն վրանին . ասիէ զատ ամեն վկայ ալ կախում ունենալու չէ մէկէն , և վկայութիւններն ալ որ և է մտքով և խորհրդակցութեամբ եղած ըլլալու չեն :

2. Վկայները՝ իրենց վկայութեանը նկատմամբ հասարակաց շահու մը ակրնկալութիւն ունենալու չեն , և թէ որ

չահ մը ունին, կրօնասիրութեամբ ճշմարտութեան պիտի զոհեն : Աստի բոլոր վկայից ըսածը իրարու նման անկախ և անչահախնդիր ըլլալու է : Թէ որ այս պայմանները կատարուած ըլլան, վկայութիւնն ալ իւր հեղինակութեան և զօրութեան վերջին ծայրը կը հասնի :

Մարդիկ իրարու համար ահա այս պէս վկայութիւն կուտան, բայց ասիէ զատ ժամանակներն ալ ժամանակին կը վրկայեն, ներկայն զանցեալը իրաւունք ունի հարցափորձել, անոր տուած տեղեկութիւնները ժողովել, և անոնց արժէքին վրայ վիճել : Խօսքերնիս յիշատակարանաց, աւանդութեան և պատմութեան վրայ է, այն երեքին վկայութեանը վրայ՝ որն որ մարդկութեան ձայնն է, և անհատից և ժողովրդոց մտաւորական, բարոյական և կրօնական կենաց հարկաւոր մէկ տարրն է :

Յիշատակարան ըսելով կը հասկցուին մինչեւ հիմայ մնացած կամ կործանուած շէնքերը, արձանները, նկարները, զէնքերը, հին դրամները, և այլն :

Անոր-ի-ն կ'ըսուի, երբ իրողութիւնները բերնով մինչև մեզի կը հասնին :

Իսկ պատմութիւնը քանի մը բաժանու-
մներ ունի :

Յապիապէս պատմութիւն ըսուածը, այս-
ինքն այն եղելու թեանց փիլիսոփայական
արտայայտութիւնները, որոնք մասնաւո-
րապէս ժողովուրդի մը և մինչեւ անգամ
բոլոր մարդկութեան կը վերաբերին :

Տարեգրութիւնս, կամ կարգով եղած
դէպքերուն վէպերը :

Յիշատակարանս, կամ մասնաւոր անձանց
կամ կարեւոր իրաց մանրամասն հարկա-
ւոր պատմութիւնները :

Նամակագրութիւնս, երբ ուղղակի կամ
անուղղակի կերպով հասարակաց վերա-
բերելու բան մը կրնան ունենալ :

Պատմական վիպասանութիւն, երբ հեղինա-
կին յայտնի դիտաւորութիւնը պատմու-
թեան մէջէն այս կամ այն իրողութիւնք
կամ անձը առնելով անոր վրայ խօսիլն է :

Վերջապէս քանի մը ընկերոջ-ածներ (1)
և քանի մը ռամկական երգեր :

(1) Ընկերոջ-ած (Légende) այն պատմութեանց ըսել
սովորութիւն եղած է, որոց մէջ սովորականէն գուրս
կամ հրաշք կամ հրաշքի նման բաներ կը պատմուին :
Հրաշք չընդունողներուն մէջ այս բառը առատելեւ պար-
տաւոր ըսելու համանշանակ գործ կ'ածուի : Ճ. Թ. Բարձ :

Հեղինակութիւն կ'ունենան յիշատակարանք, երբ գիտութեամբ ստուգուած և ճանչցուած և կարգի դրուած ըլլան :

Մշակութիւնը հեղինակութիւն ունենալու համար պէտք է որ անընդհատ իրարու յաջորդած ըլլան այն անձինքը՝ որոնք բերնէ բերան իրարու աւանդած են իրողութիւնները :

Պատմութիւնը հեղինակութիւն ունենալու համար պէտք է որ ինչ կողմէն որ նկատուի՝ վաւերականութեան և անկեղծութեան և ճշմարտութեան և ընդհանրականութեան յայտնինշանն ունենայ :

Պատմութիւնը վաւերական ըլլալու համար պէտք է որ գիրքը որ հեղինակին անունն որ կը կրէ՝ ճշմարտիւ անոր աշխատութիւնը եղած ըլլայ, և ճիշդ նշանակուած թուականին ալ համեմատ գայ : Արդիւր ոճը և ժողովրդեան ունեցած սովորութիւնները մէջը ճանչցուելու են, և անոր ժամանակակից կամ անկէ ետքը եղող հեղինակները պէտք է որ ուղղակի կամ անուղղակի զայն յիշատակեն :

Պատմութիւնը անկեղծ ըլլալու համար պէտք է որ բուն իսկ իւր հեղինակին ամբողջ գործը ըլլայ, ոչ բան մը աւելցուցած պիտի ըլլայ, և ոչ բան մը պակասած. վերջապէս թէ որ հեղինակը փոփոխութիւն մը չէ ըրած, մէկն ալ ուրիշ որ և իցէ փոփոխութիւն մ' ըրած ըլլալու չէ :

Պատմութիւնը ճշմարիտ կ'ըլլայ, երբ հեղինակին դիտաւորութիւնը ճշմարտութիւն խօսիլ է. մարդկային տկարութեանը կուտանք մատենագրի մը սուտ եղելութիւններ իբրեւ ճշմարիտ իր պատմելը, միայն թէ ինքն ալ ճշմարիտ կարծած ըլլայ. այլ ոչ երբէք կը ներուի որ իր վերջապութեան հեղինակութիւն տալ ուղող պատմիչ մը՝ ճշմարտի տեղ կամաւ սուտ մը գտնելով, աշխատի զանի հաստատել վկայութիւններով, կամ թէ ճշմարտութիւնը թեթեւ կերպով անգամ այլայլէ. բայց պատմիչ մը ճշմարտութեան օրինաց դէմ գործած չըլլար երբ տգիտութեան կամ նախապաշարման դարու մը մոլորութեանցը հաւատարիմ թարգման ըլլալով՝ նոյն նախապաշարմունքը և վրի-

պանքը կը բացատրէ լրջութեամբ . բայց պարտական է իմացընել որ ըսածին ճրջ մարտութեան ինքն ալ չհաւատար : Մատենագրին պարտքն է , ինչ ատենի վրայ որ պիտի խօսի , այն դարուն ժողովրդեան ունեցած մոլար կարծիքը և սխալ զգացմունքը չի ջնջել : Մարդուս այս վկայութիւնը մարդկային խելքին և սրտին պատմութեանը կը վերաբերի :

Պատմութիւնը ընդհանուր ըլլալու է . վասն զի և ոչ մէկ եղելութիւն մը առանձին կը մնայ աշխարհիս մէջ , և ինչ որ կը պատահի , հարկաւ պատճառ մը ունի անցեալին մէջ , ներկային հետ ալ վերաբերութիւն մը , և ապագային ալ հետեւանք մը . թէ որ եղելութիւն մը ոչ անցեալին և ոչ ներկային հետ կապուած չէ , ոչ ալ ապագային մէջ հետեւանք մը ծագած է , յայտնապէս սուտ է . ահա պատմութեան ընդհանրականութեան օրէնքը՝ եղելութեանց իրարու հետ ունեցած կապակցութեանը վրայ կը կայանայ :

Գ Լ Ո Ւ Խ Ժ Գ .

Թէ ի՛նչ է ստուգութիւնը (Certitude) ընդհանրապէս, եւ քանի՛ կերպ է: Թէ ի՞նչ է մեր մոլորութեանց պատճառը, եւ ի՛նչպէս դարման տանելու է:

Աստուծոյ ճշմարտութիւնը անձանց համար ալ կը հասկցուի, իրաց համար ալ:

Իրողութիւնը ստոյգ է՝ երբ ճշմարտ է:

Աստուծոյ ճշմարտութիւնը ստոյգ է՝ երբ իրողութեան մը ճշմարտ ըլլալուն կը հաւատայ:

Ուրեմն ստուգութիւնը նախ ըստ ինքեան սկզբնային է նկատել. այսպիսի առթիւմէջ ստուգութիւնը առարկայական (Objective) կ'ըսուի, այսինքն այս կամ այն առարկային վերաբերեալ:

Այլ կողմէ՛ ստուգութիւնը ստոյգ ըլլալը վկայող անձին վրայ ալ կը մտածուի. ասանկ պարագայի մէջ ստուգութիւնը ենթակայական (Subjective) կ'ըլլայ, այսինքն ենթակային կամ այս ինչ եւ այն ինչ բանին ճշմարտութեանը հաւատացող անձին վրայ է:

Արդ՝ ըստ ինչեան կամ առարկայական ստուգութիւնը այն զօրութիւնն է, որ անդի-

մադրելի պատճառներէ կը ծագի. ասոր հիմը յայտնութիւնն է (Evidence) ինչ կերպով որ երեւցած ըլլայ թէ առածով, թէ ներքին կամ արտաքին զգայարանաց վկայութեամբ կամ օրինաւոր ապացուցութեամբ (Démonstration): Իսկ սարգը ըլլալը հասարակական նկատմամբ, կամ ենթացական սարգութիւնը այսպէս կը սահմանեն. « մտաց հաստատ և անցողցողց յարումն (Adhésion) ՚ի ճշմարտութիւն »: Ստուգութիւնը մտաց հաստատուն և անցողցողց յարումն ըլլալը անանկ ճշմարիտ է, որ անկէ ալ ճշմարիտ բան չըլլար. բայց երբ մտածուի թէ որչափ մտորութիւններ իբրեւ ստոյգ հաստատուած են հանձարեղ և խղճմտանքաւոր մարդիկներէ, ան ատեն պիտի տեսնենք որ սոյն սահմանին մէջ ճշմարտութիւն բաւոր ճիշդ նշանակութեամբ առնուած չէ, և աւելի աղէկ կ'ըլլար այսպէս ըսել. « ըստ ստուգութիւնը՝ մտքին ճշմարիտ կարծուած բանի մը հաստատ և անցողցողց յարելն է ». կամ թէ աւելի աղէկ խօսելով

Սարգութիւնը հոգոյն այն վիճակն է, որ ընդ հոգին ճշմարտութիւնը յետոյ բերած է կամ այնպէս իլ կարծէ :

Ստուգուած թիւներ իւր արտայայտուած կերպին նայելով՝ կ'ըլլայ Ռիջիան (Médiate), կամ անՌիջիան (Immédiate) . և իր պատշաճած առարկայից նայելով՝ Ֆիդիլիան, Իմացիան և Բարոյական :

ԱնՌիջիան կ'ըլլայ ստուգուած թիւներ, երբ առանց միջնորդի ուղղակի յայտնուի, ինչպէս որ կ'ըլլայ երբ առածէ մը, կամ ներքին կամ արտաքին զգայարանաց վըկայուած ենէն կը ծագի :

Ռիջիան կ'ըլլայ ստուգուած թիւներ, երբ զանի գանելու համար վերլուծուած են, գիտողութեան, ապացոյցի, կամ ուրիշ մեծութեաներու կը դիմենք :

Ֆիդիլիան կ'ըսուի ստուգուած թիւներ, երբ նիւթական աշխարհին իրերը առարկայ ըլլան իրեն, և արտաքին զգայարանքն ալ միջնորդ :

Վարոյական կ'ըսուի ստուգուած թիւներ, երբ վերացեալ գաղափարներն իրեն առարկայ ունենայ, և մակաբերութեան ճամբով կ'ենլնէ, որ են տրամախոհութիւն և ապացոյց :

Ստուգուած թիւներ Բարոյական կ'ըսուի, երբ այն վկայութենէն կը ծագի, զոր իւրաւ

քանչիւր որ գիտակցութեամբ, ներքին զգայունութեամբ ինք իրեն կուտայ, և մարդոց իրարու տուած վկայութենէն և յիշատակաց, և աւանդութեան և պատմութեան՝ անցեալին տուած վկայութիւն ներէն :

Ստուգութիւնը ամենեւին աստիճան չկրնար ունենալ. « շատ վստահ եմ, քիչ վստահ եմ » ըսելը՝ լեզուին ազաւազում մ' է. մարդս կամ վստահ կ'ըլլայ և կամ չըլլար : Բայց չի գիտնալու և ըստուգութեան մէջ արտիճան կը մտնէ, և այն ալ երկբայութիւնը և հաւանականութիւնն է : Արկբայութիւնը տեղի կ'ունենայ, երբ ժխտողական և հաստատական պատճառները իրարու համեմատելով հաւասարակչիւ են : Արբ ժխտելու պատճառները կը պակսին, հաւանականութիւնը կը սկսի և կ'աճի՝ քանի որ ժխտողական պատճառները բոլորովին որակսին, մինչեւ որ հաստատական պատճառները մինակ մնալով՝ տուգութիւնը հաստատուի :

Բազմաթիւ են Ձեր հոլորոտ-իւտոնց պատ-

ճանաչելը . և որովհետեւ չենք կրնար նշա-
նակել ամենը, քանի՛մը եղանակ նշանակենք
անոնց գլխաւորները ճանչելու : Պէտք է
նախ նկատել թէ ինչպէս ճշմարտութիւն-
ները կրտտանանք , կամ ուրիշ կերպ ըսե-
լով՝ մեր գաղափարները ուսկից կը ծագին .
ետքը տեսնենք թէ ինչպէս մոլորութիւ-
նը մեր մէջը խիստ շատ անգամ նոյն
խակ գաղափարներուն հետ կը ծագի :

Յիշենք որ մեր գաղափարներուն
աղբիւրն են արտաքին զգայարանաց վը-
կայութիւնը , ներքին զգացման վկայու-
թիւնը և խելքը . արդ նիւթական առար-
կայից վերաբերեալ գաղափարները զգա-
յարանաց վկայութենէն կը ծագին . բայց
նիւթական առարկայից վրայ ճիշդ և ըս-
տոյգ գաղափարներ ունենալու համար ,
նախ պէտք է որ զգայարանքնիս օրինաւ
ուր կերպով գործածենք , ամեն մէկը ինչ
վկայութիւն որ կրնայ տալ՝ անիկայ միայն
ուղելով անկէ , և ամեն մէկը ձեռնհաս
ձգելով առարկաներէն այնպէս տպաւո-
րութիւն առնելու՝ որ անոր վրայօք օրի-
նաւոր վկայութիւն տալու կարող ըլլայ :
Ասանկով սովորաբար տեսութեամբ

և շատ անգամ լսողութեամբ կը դատենք
հեռաւորութիւնները . բայց այս վարկու-
մը չէ թէ ճիշդ՝ այլ ճշդութեան մօտ
կ'ըլլայ : Հեռաւորութեան ճիշդ համարը
տալու միայն շօշափելիքը կարող է , և սը-
խարմանց առատ աղբիւր մ' է այս . կը
խաբուինք նաեւ երբ կ'ուզենք աչքի տե-
սութեամբ որոշ տեսնել անոր հասողու-
թենէն անդին եղած առարկայ մը . քա-
ռակուսի աշտարակը հեռուէն կըր կ'ե-
րեւի :

Արկրորդ՝ անանկ պարագաներ կ'ըլ-
լան որ մեր զգայարանքին վկայութիւնը
դմեղ կը խաբէ . ինչպէս գաւազանը ջրին
մէջ բեկեալ կ'երեւայ , երկար ծառու-
ղիին ծառերը որքան մեղմէ հեռու ըլլան՝
այնքան իրարու մօտ և աւելի կտրճ կ'ե-
րեւին քան որ են :

Աերբին զգայարանօք մեր մէջ պա-
տահածին վերաբերեալ գաղափարները
կ'ունենանք : Սակայն ներեալ է մեզի՝ որ
մեր մէջը զգացածնուս և տեսածնուս վը-
րայ դատենք ուրիշներունն ալ , բայց մեր-
ձեցուցմամբ միայն : Այլ եթէ ուրիշնե-
րուն վրայ եղածը մերինին համեմատ

դատելու հաստատողական կերպ բռնել
ուզենք՝ կը սխալինք :

Խելքի միջոցաւ կըստանանք հասա-
րակ զգացման տակ ինկած և արամախո-
հութեամբ հետեւած գաղափարները ,
առաջին կերպին մէջ կը սխալինք , եթէ
ինքնին դատելու տարիքը հասած ըլլալով՝
մեր ականջը դժբաղդաբար հասած սուտ
ճանօթութիւնները ընդունինք , և եթէ ա-
մէն մարդու հաւատարմութեւն բան թե-
թեութեամբ ընդունելու սորված ըլլանք :

Տրամախոհութեամբ հետեւութիւն
հանելու կերպով գաղափար ստացած ա-
տեննիս շատ կը մոլորինք , եթէ արամա-
խոհութեան թերութիւններն ունե-
նանք . հոս կը դնենք սոյն թերութեանց
գլխաւորները :

1. Տգիտութիւնն և ինքնա-
պացուցանել այնպիսի բան մը , որ վիճա-
բանութեան նիւթէն բոլորովին դուրս է :
Այս իմաստակութեան մէջ կ'ընկնայ մարդս
իրական և ակամայ մոլորութեամբ կամ
սրտմտութեամբ և կամ անկարգ վիճա-
բանութեամբ , առանց նախ խնդիրը ա-
զէկ հասկընալու :

2. Օկեղծութիւնս սկզբան, այսինքն ճշմարիտ
ենթադրել խնդրոյ տակ եղած բանը : Այս
խմաստակութեան գործն է ապացուցա-
նել նախադասութիւն մը ուրիշ նմանօ-
րինակ նախադասութեամբ մը, որպէս
թէ չտիարեւրական ուսմանց մէջ անծա-
նօթ մը ուրիշ անծանօթով լուծել ուզէր :
Օկեղծութիւնս սկզբանը յոռի շրջան ալ կ'ըսուի,
կամ առանց խնդիրը ապացուցանելու՝ ըս-
կած կէտին դառնալ. « Ինչո՞ւ ամիսներ
քուն կը բերէ. վասն զի քնաբեր զօրու-
թիւն մ' ունի » :

3. Այս պարզաբան խնդրանակ պարզաբանի, կամ
պատճառ չեղած բան մը պատճառ սե-
պել : Այս խմաստակութիւնը կ'ըլլայ երբ
ոմանց երեւութից օտար կամ երեւակա-
յական պատճառներ կուտանք. ինչպէս
են ուամկին ծուռ կարծիքը, որոնք յաջող
կամ ձախորդ դէպք մը գիտաւորի մը ե-
րեւնալուն կամ խաւարում մը պատահե-
լուն վրայ կը ձգեն : Արկար ժամանակ
նոյն իսկ գիտութեան, կամ մանաւանդ՝
յանիրաւի գիտութեան անուն յափշտա-
կող տգիտութեան՝ աստղագիտութեան
մտախն մոլորութիւններն այնպէս եղան :

4. Անկասար Ռոարիոնի : Այսպիսի իմաստակուծիւն մ'ըրած կ'ըլլանք, երբ ծուռ բաժանմունքով և սխալ զանազանութեամբ կը տրամաբանենք. յոռի վերլուծութիւն ըսուածներուն ամենուն ալ կը վերաբերի ասիկա :

5. Խաբէոնի պատահարի, կամ միայն դիպուածով՝ և ոչ անոր վերաբերեալ բանով մը ուրիշ բան մը դատել : Այսպիսի իմաստակուծեան մէջ կ'իյնանք երբ կ'ուզենք բացարձակ և ընդհանուր հետեւանքներ հանել այնպիսի բանէ մը, որ դիպուածով և անցաւոր բան մ'է : Այս իմաստակուծեան մէջ կ'իյնան ամեն աւանք որ, ճարտասանութեամբ եղած զեղծմանց գէշ հետեւանքները ճարտասանութեան կուտան, և որոնք մէկ տարի մը գինին գէշ գանելով՝ ընդհանրապէս բոլոր գինիները կը սղարսաւեն :

6. Բաժանեալ ճպտեւոր Բաղարբեալ Տիպանցիլ, և Բաղարբեալ ճպտեւոր Բաժանեալ : Ասիկա երկու տեսակ իմաստակուծիւն է, որով որոշման տակ ինկած բան մը ընդհանուր մտքի, և ընդհանուր մտքով առնուածը մասնաւոր մտքի կը տարուի :

Օր օրինակ, Տէրն մեր ըսաւ. «Կոյրք տե-
սանեն, կաղք գնան». եթէ մէկը այս
խօսքէս հետեւցրնէ՝ թէ Քրիստոսի ա-
տեն բոլոր կոյրերը կը տեսնէին, կաղերը
կը քալէին, իմաստակութիւն մը ըրած
կ'ըլայ, վասն զի միայն Քրիստոսի բը-
ժըշկած կոյրերուն և կաղերուն համար
է այս խօսքը. ասով բաժանեալէ բաղա-
դրեալ մտքի անցնիլ կ'ըլայ: Աւրիշ օրե-
նակ. Պողոս առաքեալ կ'ըսէ. «Աչ բամբ
բասողք, ոչ ագահք զարքայութիւն Աս-
տուծոյ ոչ ժառանգեն»: Եթէ մէկը այս
խօսքէս հետեւցրնէ՝ թէ այս յանցանքս
գործողներուն խոստովանելէն և ապաշ-
խարելէն ետքն ալ արքայութեան դռնե-
րը չախտի բացուին, այն ատեն բաղադ-
րեալ մտքէ առ բաժանեալը անցնիլ կ'ըլայ:

7. Ըստ իմի՛ ճշմարտէն պարզապէս ճշմարտի
անցնիլ: Աս իմաստակութեան գործն է,
մասնաւոր նախադասութիւն մը ընդհան-
րացրնել, կամ մասնաւորէն ընդհանուր
հետեւցրնել: Այս իմաստակութիւնը ը-
րած կ'ըլան ամեն անոնք, որոնք ընկերու-
թեան մը մէկ անհատին վրիպակը բոլոր
ընկերութեանը վրայ կը ձգեն, և անոնք

որ մասնաւոր պարագայի մէջ պատահած
բան մը ամեն նման դէպքերուն կը պատ-
շաճեցընեն :

8. Օրդոնման Բառից երկրի մոտեմք , Այս
խմաստակութիւնը նախադասութեանց
մէջ մի և նոյն բառին՝ մէկ մը ընդարձակ
և մէկ մը ամփոփ նշանակութիւններ տա-
լով շինուած ապացոյցէն կը ծագի , ուր
միշտ մի և նոյն նշանակութիւն ունենա-
լու են , կամ երբ վէճի մը մէջ՝ մէկը հոգ
չը տանիր բառից արժէքին վրայ :

9. Թերի մակածոմենի մը ընդհանուր կե-
տեանի մը հանել : Այս խմաստակութիւնը
դիտողութեան պակասութեանէ պատճա-
ռուած ամեն գէշ տրամախոհութեան և
որ և իցէ մեթոտ մը ճշգիւ չյարմարցը-
նելուն կը վերաբերի :

Ինդիրը ուրիշ տեսութեամբ նկատե-
լով՝ շատ մոլորութիւններ կը ծագին
հոգւոյն կարողութեանց անկանոն գոր-
ծածութենէն , ինչպէս անփոյթ մտա-
դրութենէ , գէշ դատումէ , ինքնահաճ
կամքէ , և տկարութեան չը նայելով՝ ան-
սխալ կարծուած յիշողութենէ , իւր մո-
լոր ընթացքին ձգուած երեւակայու-

Թե՛նէ և իր չափազանցութեանը թող
ուած դիւրազգացութե՛նէ :

Վերջապէս գէշ մեթոտներ կամ ա
ղէկները անկանոն կերպով գործածելնէս
ալ շատ վրիպակ կը ծագին, ինչպէս թե
րի վերլուծութիւն, յախուռն դիտողու
թիւն, անկանոն դասակարգութիւն, մութ
սահման (Définition), և այլն :

Մոլորութեանց ուրիշ պատճառնե
րուն մէջ մեր նշանակածներն ալ դնելով
դարձանը պարզ և դիւրին է, որ է սխալ պատ
ճառող իրը ուղղել, ուստի նախ մարմնա
ւոր զգայարանքի մասին պէտք է ամեն
մէկ զգայարանքէն միայն անի խնդրել՝
որուն համար կրնայ վկայել, միշտ ամեն
մէկին հասողութեան սահմանին մէջ մնալ,
և զգայարանաց քանի մը անձիշդ վկայու
թիւնները տրամախոհութեամբ շտկել :

Ետքը ներքին զգայարանաց մասին
պէտք է որ ասոնք ինքզինքը դատելու
համար գործածուին, և ոչ ուրիշներուն
համար, բայց եթէ մերձեցուցանողական
(Approximative) համեմատութեամբ :

Հուսկ ուրեմն յոռի տրամախոհու

Թիւններէ՛ փախչելով՝ պէտք է հեռնե-
ւինք այն կանոններուն որոնք ճիշդ տրա-
մաբանել կը սորվեցնեն ։

Հոգւոյն կարողութեանց վարժու-
թիւնը կանոնի տակ առնելու է . նոյնք
ընելու է մեթոտներուն ալ , հանձարով
ընտրելով մեթոտները և ըստ կանոնի գոր-
ծածելով ։

Այս անվերջանալի բացատրութեա-
նըս վերջ մը տալու համար սա ալ ըսենք՝
որ նախապաշարմունք , կիրք , շահ , համակ-
րութիւն , հակակրութիւն շատ անգամ
զմեզ կը մոլորեցնեն . ասոնց դարման մը
կ'ընեն մտաց մշակութիւնը , զգայակա-
նութեան ուղիղ առաջնորդութիւնը ,
կամաց ներգործութիւնը , և ճշմարտին
գեղեցկին և բարւոյն ուսումը և խղճմը
տանքաւոր գործածութիւնը ։

Ստուգութեան վրայ և մեր մոլորու-
թեանց պատճառներուն և անոնք դար-
մանելու միջոցներու վրայ պատշաճաւոր
է խօսք մ' ալ Գիւլիստիայական երկբայո-
թեան հա-
ճար աւելցնել ։

Փիլիսոփայական երկբայո-
թեանը երկու տե-

ասկէ, Բայաբձաի, և Ռեթոպահան կամ կարգաւորեալ Բայաբձաի կ'ըլլայ երկբայուլթիւնը, երբ ամեն խնդիր դատելու ատեննիս՝ առանց հաստատելու զայն՝ միշտ կախ կը թողունք. այս է երկուականուլթիւնը, որուն գլխաւորը Պիւռօն կը պնդէր՝ թէ չը կայ նախադասուլթիւն մը, որ հակառակ նախադասուլթիւն մը չունենայ:

Սեթոպահան կամ կարգաւորեալ կ'ըլլայ իմաստուն մարդուն երկբայուլթիւնը, երբ ամեն բան կը քննէ, և յայտնի չերեւցած բանը իբրեւ ստոյգ չընդունիր, այս է Տէրբարդին երկբայուլթիւնը, ինչպէս որ ինքը Ղաւթի վերայ Ռեթոպին ըսուած գրքին մէջ կը բացատրէ:

Գ. Լ. ՈՒ Խ Ժ Ե .

Թէ ի՞նչ է կամքը (volonte) .

Կամքը այն կարողուլթիւնն է, որով հոգին կը խորհի, կ'ընտրէ և կ'որոշէ ինչ որ պիտի գործէ:

Գործողուլթիւնը կամայ նպատակն

է, բայց այս պայմանը գոնէ իրօք ՚ի գործ
դնելու կողմէն ամենահարկաւոր բան մը
չէ : Այլ յիրաւի՝ շատ անգամ արտաքին
գործողութեան միջոցներուն ձեռնհաս
չըլլար կամքը, և սովորաբար այն ատեն,
ուան չափ ուրիշ ատեն մը զօրաւոր չըլ-
լար :

Կամքին ծագումը իմացականութե-
նէն է (Entendement), իսկ զարգացման չափը
դիւրագգացութենէն (Sensibilité) :

Յիրաւի, կամենալու համար՝ նախ և
առաջ հոգւոյն առարկայ մը պէտք է, ու
բուն մտադրութիւն ընէ. ղինքը ՚ի գործո-
ղութիւն գրգռելու համար՝ նոյն նպա-
տակին նկատմամբ համակրական կամ հա-
կակրական բան մ՝ ըլլալու է. ուստի կա-
մաց զօրութիւնը շատ կամ քիչ յուղուած
դիւրագգացութեան զօրութեան հետ ուղ-
ղակի համեմատութիւն ունենալը յայտ-
նի է, բայց կամենալու համար պէտք է
որ մարդս իւր անձին լիակատար տէր ըլ-
լայ, և ասկէ կը հետեւի որ կամաց հար-
կաւոր պայմանը աղաքո-լի-նն է :

Ինչպէս որ Բ. գլխոյն մէջ սահմանե-
ցինք, աղաքո-լի-նը հոգւոյն այն կարողու-

Թիւնն է, որով ուղածին պէս կը գործէ :
Այս ազատութիւնը բացարձակ է և ան-
սրայման, և կ'ըսուի հոգեբանական (Psycho-
logique) ազատութիւն, որ կրօնական, բա-
րոյական և քաղաքական ազատութեանց
պէս իրեն հակառակ ծայրայեղ զեղծում
չունի : Ազատութիւնը որուն հիմն է կամ-
քը, ինչպէս բարիք՝ այնպէս ալ չարիք
կրնայ ընել, թէ և հաւատար արժանաւո-
րութեամբ ալ չէ, գոնէ հաւատար իրա-
ւունքով, վասն զի գէշութիւն ուղողը իր
խղճին գէժ կ'ընէ, բայց իր բնութեանը
կը հետեւի :

Թէ որ այս այսպէս չըլար, բարոյա-
կան էակ մը չէր ըլար, ըստ որում մարդ-
կային գործողութեանց բարոյականու-
թիւնը ճշգիւ անկէ կախում ունի, որ է
թէ՛ մարդս բարիին և չարին մէջ տեղը
գտնուելով ազատ է զինքը ասոնց մէկին
կամ միւսին կողմը որոշելու :

Հոս բնապէս պարտեաց խնդիրը կը
ծագի :

Պարտը՝ գէշութենէն խորշելու և ա-
զէկութիւն ընելու վրայ կը կայանայ :

Ի՛նչ բան որ ճշմարիտ է, զոր օրինակ
գաղափար կամ գործողութիւն, և ի՛նչ
բան որ ճշմարիտ է իբրեւ գործնական
(Active) կիրառութիւն՝ (Application), Բար-
այն մէջ կը պարունակի. ինչպէս արդա-
րութիւնը, այն ազնուագոյն բարիքն, ու-
րիշ բան չէ, բայց եթէ մեր գործողութեանց
ծանօթ ճշմարտութեան հետ կատարեալ
համաձայնութիւնը:

Չարը բարիին հակառակն է, այսինքն
գաղափարաց մէջ մոլորութիւն, և գոր-
ծերուն՝ այն մոլորութեանց համաձայն
ըլլալը, կամ ճշմարտութեան անհամաձայն
ըլլալն է:

Սարգուս ազատութիւն տրուած է
որ անյողգողգ և հաստատ կամօք պարտ-
քը կատարելու նայի, առանց գէմն ելած
խոչընդոտներէն կասելու:

Ի՛արին գործելու համար չարը յաղ-
թելու ջանքը՝ առաջինը-ի-ն կ'ըսուի:

Ս'ըր-ի-նը այն տկարութիւնն է, ու-
րով մարդս կը թողու որ չարը իր ներսի
գին յաղթէ բարւոյն:

Պարտքը հոս քառապատիկ կերպով
կը ներկայանայ մարդուս, 1. Պարտք մար-

դոյ առ Աստուած . 2 . սպարտք մարդոյ առ
անձն . 3 . սպարտք առ նմանիս . 4 . սպարտք
առ բնութիւնն , թէ՛ շնչաւոր , թէ՛ բու-
սական և թէ՛ նիւթական ըլլայ այս բնու-
թիւնը :

1 . Պարտք մարդոյ առ Աստուած :

Պարդս Աստուծմէ ստեղծուած ըլլալով
իւր արարչին յարգանք , երախտագիտու-
թիւն և սէր ունենալու սպարտական է :
Այրկրագազութիւն բառը՝ որ մինչեւ հիւ
մայ փիլիսոփայական լեզուի մէջ երբեք
ուրիշ կիրառութիւն ունեցած չէ , այս
բաներս իր մէջը կը բովանդակէ :

2 . Պարտք մարդոյ առ անձն :

Աստուծմէ ընդունած բնական , մը-
տաւորական և բարոյական եռապատիկ
կեանքերնիս սպարտական ենք բոլոր ձեռ-
քերնէս եկած միջոցներով պահելու ու
զարգացնելու :

3 . Պարտք մարդոյ առ նմանիս իւր :

Պարդս կը սպարտաւորի իւր նմանեա-
ցը արդարութիւն ընել , որ մէկու մը
չարիք չընելու և բարիքն ալ կանոնաւոր
և պատշաճ կերպով ընելու վրայ կը կայա-
նայ :

4. Պարտք մարդոյ առ բնութիւնն :

Սարդոյս առ բնութիւնն սպարտքը , այսինքն առ կենդանիս , առ բոյսս և առ նիւթաւոր իրս , բնութեան օրինաց չհակառակելով , և մանաւանդ զանոնք գէշի չբանեցընելով՝ բնութեան զօրութեանը օգնելու վրայ կը կայանայ :

Հոս ուրիշ խնդիր մ' ալ կ'ընէ , որ է իրաւունքը , վասն զի սպարտք գաղափարին մէջ իրաւանց գաղափարը կը բովանդակէ , և իրաւանց գաղափարին մէջ ալ սպարտուց գաղափարը : Վայց արժան է աւելցընել թէ՛ իրաւունքը ըսելով միայն բացարձակ իրաւունքը չպիտի հասկնանք , հասկնանք միայն իրաւունքը որ կը ծագի կամ հարկաւոր յարարերութենէ , կամ ընդունուած սրայմանէ և կամ կատարուած սարտականութենէ մը :

Ինչպէս որ սպարտքը իր մէջը կը պարունակէ , ինչ որ մարդս օրինաւոր կանոնաց համեմատ կը սպարտաւորի ընելու , այնպէս ալ իրաւունքը իր մէջը կը պարունակէ ինչ որ մարդս իրաւունք ունի օրինաւորապէս պահանջելու :

Ուրեմն մարդս իւր պարտականու-
թեանց ճշդիւ համապատասխանող իրա-
ւունքներ ունի. 1. իրաւունք նկատմամբ
առ Աստուած. 2. իրաւունք նկատմամբ
առ անձն. 3. իրաւունք նկատմամբ առ
նմանիս. 4. իրաւունք նկատմամբ առ բը-
նութիւնն :

1. Սարդոյս առ Աստուած իրաւունքը: Աստու-
ած մէկէ մը կախում չունենալով, ինչ
որ ունի՝ իրմէ է. բայց մարդս որ Աստու-
ծոյ արարածն է, յԱստուած վստահանա-
լով՝ Աստուծոյ բարութեանն օգնութեան
և սրաշտարանութեան կրնայ սպասել, իւր
պարտքը կատարելու և կատարած պար-
տականութեան ալ վարձքը ընդունելու
յուսալ :

2. Իրաւունք առ անձն: Սարդոյս իր ընդու-
նած ֆիզիքական և բարոյական կարողու-
թիւնները զարգացնելու և անոնց կի-
բառութիւնն ուղղելու համար ըրած ջա-
նից 'պտղոյն' կամ համեմատ վարձուն
յուսալու իրաւունք ունի, թէ և իւր
կամքէն անկախ սրտածառներ ջանքը ան-
պտուղ բնեն :

3. Իրաւունք առ ընկերոջ-ընկեն : Սարդոյս

ինչ որ այլոց համար կ'ընէ, ուրիշներէն ալ նոյնը սպասելու, կամ այս դէպքիս մէջ գոնէ ջանիցը համեմատ փոխարինու-
թեան մը յուսալու իրաւունք ունի :

4. Իրա-ո-նէս առ Բնո-թի-նն : Ինութիւնը ինչ օգնութիւն որ ընէ մարդուս, իրաւունք ունի մարդս զանոնք գործածելու և օրինաւոր միջոցներով զանոնք շատցընելու :

Կամբը իր ձեռքն եղած զօրութիւնը յաճախ միեւնոյն ճամբով մարմնոց գոյւ ծարանացն ազդելով՝ սքանչելի դիւրութիւն մը կուտայ մէկ քանի գործողութիւններ արտադրելու : Այս դիւրութիւնը ունակո-թի-նն (habitude) է, որ այսպէս պիտի կրնար սահմանուիլ Ունակութիւնը այն յարմարութիւնն է, որով դիւրաւ և շուտ կ'ըլլան շատ անգամ կրկնուած գործողութիւնները : Այս արագութիւնը և դիւրութիւնը՝ որովք սովորական գործողութիւնները կ'ըլլան, սրատճառ տուած են որ քանի մը գործողութիւններ Բնադրեցիկ (Actes instinctifs) գործող-թի-ններ քառուին : Հոս ալ դարձեալ բառի անպատեհ

գործածութիւն կայ, գոնէ ըստ փիլիսոփայական լեզուի : Բնազդեցիկ գործողութիւնը առանց կամաց կը կատարուի : Բայց այս գործողութիւնները այնչափ շատ չեն, որչափ հասկցրնել կ'ուզուի. և ասոր համոզուելու համար բաւական է նախ և առաջ հոգւոյն անհամեմատ գործունէութիւնը մտածել, և ետքը յիշել մօտալուտ վտանգներուց և ստիպողական կարեւորութեանց քանի մը դէպքերու մէջ պատահածը, երբ խելմը գաղափարներ կը ներկայանան, կը հակառակին իրարու, և գրեթէ աննշմարելի ատենուան մէջ տեղի կուտան ուրիշ շատ գաղափարներու :

Գ Լ Ո Ւ Խ ԺԶ.

Թէ ի՞նչ է գիտակցութիւնը (Conscience) եւ բարոյական զգացմունքը :

Գիտակցութիւնը այն վկայութիւնն է, զոր հոգին ինքն իրեն կ'ընէ :

Արդ հոգին երբ ինքն իրեն կ'ընէ այս վկայութիւնը, կամ իր մէջն եղածը յայտնելու համար է, և կամ անոր արժէ-

քը գանելու համար, առաջին պարագայով հոգեբանական գիտակցութիւն կամ ներքին զգացմունք է, որուն վրայ արդէն խօսած եմք Բ. գլխոյն մէջ՝ իմացականութեան առթիւ : Իսկ երկրորդ պարագայով յատկապէս Բարոյական գիտակցութիւն ըսուածն է :

Սենք ալ հիմայ այս բարոյական գիտակցութեան վրայ պիտի ձառեմք, զոր այսպէս ալ կրնամք սահմանել. Բարոյական գիտակցութիւնը այն կարողութիւնն է, որով հոգին շարին շարեն կ'որոշէ, և այս որոշմամբ կը Գործէ իւր գործերը :

Գիտակցութեան այս գատումը երկու գլխաւոր երեւոյթներ կը պատճառեն. 1. հոգւոյն՝ բարի գործոց համար զգացած ներքին գոհունակութիւնը. 2. հոգւոյն՝ չար գործոց համար զգացած ներքին անհանգստութիւնը, այս երկրորդ երեւոյթս խայլ խղճի ալ կ'ըսուի, միւսը իրեն յատուկ անուն չունի :

Փիլիսոփաներէն ոմանք Բարոյական զգացում կ'անուանեն խղճի խայթը և ներքին ուրախութիւնը :

Աւելի յարմար կ'երեւայ Բարոյական զգացում անուանել զգացմանց այս մասը, որ

յարաբերութիւն ունի բարւոյ, չարի, արդարի, և անիրաւի գաղափարին ու ըզգացմանց, որոնք բարոյական դատմանց նախնական տարերքն են, ինչպէս են քանի մը նախնական գաղափարներ, զոր օրինակ ամբողջինը, մասինը, պատճառինը և գործոյնը, որ քանի մը մտաւորական դատմանց նախնական տարերքն են :

Այս տարբեր կարծիքներն ինչ որ ալ են, սա բաներուն վրայ ամենքը միաբան են որ գիտակցութիւնը ինչնեկ է, ընդհանուր, հասարակ և անընկճելի :

Ինչնեկ. գիտակցութիւնը շուտով որոշումներ կ'ընէ. ամեն գործողութիւն կատարուելուն պէս՝ դատուած ալ է, և անոր հետեւանքն եղող ներքին ուրախութիւնը կամ խղճի խայթը անմիջապէս կ'ըլլան :

Ընդհանուր. ամեն ժողովրդի և ամեն մարդու գիտակցութիւնը միեւնոյն սկզբունքն ունին. ոչ ժամանակը և ոչ տեղը կրնան այրայլել զանոնք : Այսպէս՝ ճշմարտութիւնը մէկ հատիկ է՝ ինչպէս Աստուած. բարին ու չարն մէկ օրէնքով կը դատուին կ'որոշուին :

Հասարակութեան. գիտակցութիւնը միշտ
ինք իրեն համաձայն է, ոչ փոփոխութիւն
և ոչ ինքնահաճութիւն ունի. անդրդուե-
լի է ճշմարտութեան պէս, որ է Մատուած:

Աննկճի. գիտակցութիւնը ոչ երկիւղ
կը ճանչէ և ոչ հրապոյր. բան մը չկրնար
փոխել անոր անգամ մ' ըրած դատումը.
ճշմարտութեան պէս որ իւր հիմն է, ան-
խոնարհելի է, և զօրաւոր է՝ նոյն իսկ Մա-
տուծոյ զօրութեամբ, որ զանի մարդուս
սիրտը դրած է:

Գ. Լ. ՈՒԽ Ժ Է .

Թէ ի՞նչ մեթոտի կանոններ կը գործածուին
հոգւոյն անմիւթականութիւնն եւ ազատու-
թիւնը բացատրելու համար:

Հոգին աննիւթ էակ մի է:

Գոյութիւնը մեղի միայն երկու է,
զանակի տակ կը յայտնուի, որ են նիւ-
թաւոր և աննիւթ:

Այս երկու տեսակ գոյութիւնները
զիրար կը մերժեն, անանկ որ ոչ ոգին նիւթ
կ'ըլլայ, և ոչ ալ նիւթը՝ ոգի: Արդ՝ թէ

որ հոգւոյն նիւթ չըլլալը ապացուցուած է՝ հարկաւ աննիւթ կ'ըլլայ, և հոգին միայն այն պայմանով նիւթական կ'ըլլայ, երբ նիւթոյն ունեցած յատկութիւններն ունենայ :

Նիւթը բաղադրեալ, բաժանելի և այլայլելի կ'ըլլայ, տարածութեան մէջ որոշ կէտ մը կը բռնէ : Վիտութիւնը նիւթին բաղմամբիւ յատկութեանց մէջ այս բաներս ալ կը ցուցնէ կը հաստատէ :

Հոգին միեւնոյն յատկութիւններն ունի :

Հոգւոյն տարածութեան մէջ կէտ մը բռնելը աներկբայելի է, բաց սօրն է այն կէտը, գիտութիւնն իսկ չէ կրցած հոգւոյն մարմնոյն մէջ բռնած կէտը որոշել :

Հոգին այլայլելի է :

Վեցերորդ գլխոյն մէջ յիշողութեան առթիւ տեսանք որ հոգին նոյն է, այսինքն սրչափ ալ փոփոխին հոգւոյն կարողութիւնները, ինք իր գոյացութեան մէջ ամենեւին փոփոխութիւն չըկրեր :

Հոգին բաժանելի է :

Հոգին բաժանելի կ'ըլլայ, երբ ա

նոր մէջ մասունք որոշելը կարելի ըլլայ , բայց քանի որ մասունք չունի , և միակ ու պարզ է , բաժանելի ալ չըլլար : Հոգւոյն պարզ և միակ ըլլալը ներքին զգայարանքը և անհատական ստուգութիւնը կը հաստատէ : Ինչ որ մեր մէջը կ'իմանանք , միութեան յայտնի նշան ունի վրան . եթէ ուրախութիւն կամ տրամուծութիւն մը կըրգգանք , ամբողջ հոգւոյն կ'ազդէ այս զգացմունքը . երկիւղն ալ յոյսն ալ ուրիշ նմանօրինակ զգացմունքներն ալ ասոնց պէս են : Ալ երբ կ'ըսենք երբեմն՝ թէ հոգինիս մեր զգացած ուրախութեան , վշտի , կամ երկիւղի և յուսոյ մէջ բաժնուած է , ըսել չենք ուղեր թէ հոգւոյն մէկ մասը երկիւղ կամ վիշտ կըզգայ , և միւսը ուրախութիւն կամ յոյս , այլ թէ հոգին մերթ այս զանազան զգացմանց մէկը կ'ունենայ , և մերթ միւսը : Ալ յիրաւի նորանոր փոփոխութիւնները որքան շուտ ալ իրարու ետեւէ գան , յայտնապէս աւնիկա ամբողջ կը գրաւեն : Ալ այսպէս հոգւոյն պարզութիւնը նախ և առաջ ներքին զգացման միջոցաւ ստացուած անձնական յայտնութեան մէկ արդիւնքն է :

Գատմամբ և բաղդատմամբ դիւրաւ
կրնանք զայս ասպացուցանել : Բաղդա-
տել ըսելը՝ երկու կամ շատ բան իրարու
քով բերել է, որ անոնց անհամաձայնու-
թիւնը կամ համաձայնութիւնը դատենք :
Իսկ դատելը՝ պատճառը գիտնալով՝ որ
և է վերաբերութեան մը վրայ հաստա-
տութիւն տալ է : Բայց դատում ընելու
համար՝ պէտք է որ մէկտեղ առնուած
իւրաքանչիւր իրերուն յատկութիւնները
գիտնանք և միեւնոյն հայեցուածի տակ
ժողովէնք զանոնք : Աւրեմն դատող իմա-
ցական սկիզբը մէկ հատիկ, ուստի և
պարզ ըլլալու է :

Վիցուք թէ Ա և Բ. իրարու հետ
պիտի բաղդատենք, եթէ իմացական ըս-
կիզբը (հոգին) որ դատողն է, մասունքներէ
բաղկացած է, զոր օրինակ Ա՛ էն ու Բ՛ էն,
Աին յատկութիւնները Ա՛ին վրայ ազդելով
ասիկա կը հասկնայ անոնք և որպիսութիւն-
նին կ'իմանայ, ինչպէս որ Բին յատկու-
թիւնները Բ՛ին վրայ կ'ազդեն, բայց եթէ
վճռելու ժամանակը գայ՝ ասոնց ո՞րը պիտի
վճռէ : Եթէ Ա՛ը ըսենք, անի միայն Ա՛ին
յատկութիւնները գիտէ, եթէ Բ՛ը ըսենք,

անիկա ալ Բին յատկութիւնները գիտէ .
ուրեմն պէտք է որ զանանք բազդատե-
լու և դատելու համար Աին և Բին
յատկութիւնները մէկտեղ գան, և մի-
անգամայն Գ կէտին վրայ ազդեն, որ ա-
նոնց երկուքը մէկէն արժեցընէ : Այս Գ
կէտը հոգւոյն հարկաւորապէս պարզ ըլ-
լալուն պատկերն է : Ասկէ կը հետեւի որ
հոգին պարզ է . եթէ պարզ է հոգին, ու-
րեմն անբաժանելի է . և քանի որ անբաժա-
նելի է, չկրնար բազադրեալ ըլլալ :

Աւրեմն հոգին այն յատկութիւննե-
րէն մէկն ալ չունի, զորոնք իբրեւ նիւ-
թոյ յատուկ նշանակեցինք . ուստի նիւթ
ալ չէ : Ասկէ կը հետեւի ճշդիւ թէ հո-
գին աննիւթ է :

Ինչպէս որ Բ . և ԺԵ . գլխոց մէջ
սահմանեցինք, աղապոս-ի-ն-ը այն կարողու-
թիւնն է, որով հոգին իր հաճոյիցը հա-
մեմատ կը գործէ . բայց ազատութեան ինչ
ըլլալը հասկրնալ բաւական չէ, պէտք է որ
ցուցընենք թէ՛ մարդս յիրաւի ազնտ է :

Սարդկային ազատութիւնը կ'ապա-
ցուցուի ներքին զգայարանաց վկայու-

Թեամբ, ժամանակակիցներուն բերանա-
ցի վկայութեամբ, ժամանակակից դիտող-
ողութեամբ, ժամանակակից օրէնսդրու-
թեամբ, ասոնցմէ զատ անցեալին վկայ-
ութեամբ, և ամեն ժամանակի օրէնսդրու-
թեամբն ալ կ'ըլլայ :

Մարդս զինքը քննելով՝ դիւրսու կը
հասկնայ թէ իր անձնական գործունէութեան
գոնէ բարոյականին ամբողջ և լիա-
կատար տէրն է : Արդգայ թէ իւր հաճոյից
համեմատ կրնայ կամիլ կամ չկամիլ, շինել
կամ աւրել, սկսել կամ ընդմիջել, իւր
ուզած ձեւովը ուզածին չափ փոփոխել .
այս է որ ներքին զգացման վկայութեամբ
ազատութիւնը կը հաստատէ : Այլ թէ մէ-
կը այս ծանր խնդրոյն վրայ հարցուփորձ
ընէ այլոց, պիտի տեսնէ որ անոնք ալ
իւր զգացածը կըզգան, իսկ եթէ այս
վկայութիւնը բաւական չսեպելով՝ իւր
նմանները այն վայրկեանի դիտէ՝ երբ ինք-
նեկ գործողութիւննին իրենցմէ դուրս օ-
տար օրէնքի մը տակ չէ, պիտի տեսնէ որ ա-
նոնք կ'ընեն ինչ որ կրնային չընել, կ'երթան
ուր որ կրնային չերթալ, և ինքնին անոնք
ալ իրեն սէս նոյն գործողութեան կատա-

րելապէս կամաւոր մղում մը կուտան ,
ուրիշ խօսքով ըսենք , բողբոլիկն անկա-
խաբար կամ իրենց ըստ հաճոյս ընդու-
նած կանոններուն համեմատ կը գործեն :
Վերջապէս իւրաքանչիւրնիս օրէնք ունինք
որոնք կը հրամայեն կամ կ'արգելուն , կը
րելու պատիժ և վիշտ՝ և արդիւնաւորե-
լու վարձք ունինք : Վայց ազատ չեղողի
մը օրէնք դնելը անտեղի է , և արժանիք
ունենալու կամ չունենալու անբաւական
էակներուն վարձք կամ պատիժ առաջին
դնելը ծաղրական կ'ըլլայ : Արեւմտեան միայն
ազատութիւնն է որ հնազանդութիւնը
վարձուց արժանի կ'ընէ , և մարդկային
գործոց բարոյականութիւն կուտայ :

Նաեւ թէ որ ներկային ազատու-
թեան համար մեզի տուած ապացոյցնե-
րուն յիշայ անցեալին վկայութիւնները
աւելցնենք , կը տեսնենք որ ամեն փիլիսո-
փայութեան մէջ ճանչցուած է ազատու-
թիւնը և սահմանն ալ տրուած է , եւ
պատմութեան իւրաքանչիւր էջն ալ գրը-
ուած է : Վնէն բանաստեղծ և ճարտա-
սան գոված են անոր բարիքը , և ողբա-
ցած են անոր աղէտները , և իւրաքան-

չիւրն ալ անոր դիւցազնական անձնանը-
ւիրութիւնը երգած են : ()ըէնսդրու-
թիւնը, վարձուց և սրատոց դրութիւ-
նը ուրիշ հիմ մը չունին ամեն ազգաց
մէջ, բայց եթէ ազատութիւնը :

Սարգիսիսն ազատութեան դէմ եր-
կու գլխաւոր առարկութիւն կ'ըլլան, ու
րոնցմէ մէկը պայծառաց զօրո-վիենէն է և միւ-
սը սարգիսիսի կանխագիտո-վիենէն :

1. Օ զօր-վիեն պայծառաց : Կ'ըսեն թէ
անանկ առիթներ կ'ըլլան, որ մարդս բըռ-
նի կը դործէ անանկ պատճառներէ ստիպ-
ուելով, յորոց բնաւ չկրնար խոյս տալ :
Վուցէ այս խօսքիս կրնայինք այս պա-
տասխանը տալ թէ, մարդս իր կրիցը ան-
սարով թէ իր և թէ ուրիշներուն աչ-
քին պատճառներուն զօրութիւնը մեծ
կը ցուցնէ : Վայց այս զօրութիւնը ան-
դիմադրելի ալ սեպելով կրնայ սա պա-
տասխանը տրուիլ թէ, այս անդիմադրե-
լի զօրութիւնը որ երբեմն ազատութիւ-
նը վերցնելով կամքին կը տիրէ, մարդ ուս
ոչ կանոնաւոր և ոչ ալ սովորական վիճա-
կրն է . կամքերնուս ազատութիւնը գէշի

գործածելէն առաջ եկած ապահանու-
թեան խոտորմունքէն կը ծագի այս : Արդ-
բան մը չենք կրնար դատել իւր զեղծում-
ներէն : Ասոր չափ արժէք կ'ունենայ ըսելը
թէ, մարդս բնապէս տկար և հիւանդոտ
է, երբ մէկը տեսնենք որ իւր զօրու-
թիւնը և առողջութիւնը չարաչար գոր-
ծածելով՝ երկուքին ալ սկզբունքը իր ներ-
սը աւրած կ'ըլլայ : Աստի խնդիրը կը վե-
րածի խելքը գլուխը և հանձարեղ մար-
դումը դէպքին զոր սրատձառած զօրու-
թիւնը բռնաբարած ըլլայ : Վայց այս
մարդը սրատձառած զօրութեան բռնու-
թեան տակ իյնալէն առաջ՝ իւր խելքը
բանեցուցած է, խնդիրը իր այլ և այլ
բոլոր դէմքերովը քննած է, և իմացա-
կանութեամբ լուսաւորեալ դատումը
վճռած է, ալ հիմայ իւր գիտցած ճամ-
բէն շխտորիք, ըստ որում ազատ ըլ-
լալով երկու հակառակ զօրութիւններէն
ուզածը ընտրելու, այն զօրութեան հե-
տեւիլ որոշած է՝ որ իրեն լուսագոյն և ի-
մաստնագոյն երեւցած է : Հոս սրատձա-
ռաց զօրութիւնը փոխանակ ազատու-
թիւնը տկարացընելու, անոր մէկ յայտ-

նի ապացոյցն է :

2. Կանխագիտութիւնն Աստուծոյ : Կրտսեն թէ Աստուած՝ որ իւր գիտութեան կատարելութեամբը ոչ անցեալ կը ճանչէ և ոչ ապագայ, ինչ որ եղաւ, ինչ որ կ'ըլլայ, և ինչ որ պիտի ըլլայ՝ ամենն ալ մէկ տեսութեան մէջ կը բովանդակէ : Աստուած ինչ որ նախատեսած է, հարկաւ պիտի ըլլայ, թէեւ մարդուս ազատութիւնը ինք ըրած համարուի :

Այս առարկութեան՝ պատասխան հետեւեալ պարզ և խմաստալից խօսքն է. Աստուած կը նախատեսէ ինչ որ մարդըս պիտի գործէ, վասն զի այնպէս պիտի գործուի այն, բայց անոր այնպէս գործուելուն պատճառ՝ Աստուծոյ նախատեսութիւնը չէ : Աստուած կը նախատեսէ իբրեւ վկայ կատարուած գործերուն, և ոչ իբրեւ պատճառ :

Գ Լ Ո Խ Խ Ժ Ը .

Թէ ի՞նչպէս պիտի գործածենք մեթոսները ,
որ Աստուծոյ գոյութիւնը եւ նախախնաւ
մութիւնը սպացուցանենք :

Ասորո՞ծոյ գոյութիւնը երեք կերպով կ'ա-
սպացուցուի , այսինքն Բնական , Ֆիզիքական , Բնա-
շնչական եւ Բարոյական ասպացոյցներով :

Ասորո՞ծոյ գոյութիւնը Ֆիզիքական ասպացոյցը
կ'առնուի նիւթին գոյացութենէն եւ շար-
ժումէն , եւ ակեղերքին կարգէն :

1. Ասպացոյց գոյութեանն Աստուծոյ
ի գոյութենէ նիւթոյ :

Նիւթը կայ , բայց ո՞րն է անոր գոյ-
ութեան սկզբունքը : Ամմ ինքնագոյ է ,
եւ կամ իրմէ դուրս սրտածառ մ' ունի .
ասոնց երկուքին միջին բան մ' ալ չկայ :
Աթէ նիւթը ինքնագոյ է , ինքնագոյու-
թիւնը էակին կատարելութիւնն ըլլալով
նիւթը կատարելալ էակն է , այսինքն նիւ-
թը Աստուած է : Բայց ի՞նչպէս կրնայ ըլ-
լալ որ նիւթը՝ զոր մարդս ըստ իւր հա-
ճոյից կը գործածէ եւ կը սրտարաստէ , Աս-
տուած ըլլայ . քանի որ մարդս իր անձին

համար կրողաց թէ ինքն Աստուած չէ :
Թող որ Աստուծոյ՝ այսինքն կատա-
րեալ էակին գաղափարը և նիւթին գա-
ղափարը , (ինչ կերպով որ կը տեսնենք ,)
մինչեւ անյաղթելի կերպով իրարու
հակառակ են : Հունաւոր բանի մը ան-
հուն ըլլալ՝ մտքի դէմ է : Աւրեմն նիւթը
Աստուած չէ , և Աստուած չըլլալով՝ իւր
գոյութեան սկզբունքը ինք չկրնար ըլլալ .
ուրեմն հարկաւ իրմէ դուրս պատճառ
մ' ունի : Ահա ասով մարդկային մտքին
համար՝ Աստուծոյ յայտնութիւններէն
մէկը կը ծագի :

2. Ապացոյց գոյութեան Աստուծոյ ի
չարժմանէ նիւթոյ :

Անիւթը երբեմն անչարժ կ'երեւի , և
երբեմն շատ կամ քիչ շարժելի , շարժ-
ման շատ կամ քիչ զգալի պայմաններուն
համեմատ : Ինչպէս՝ ջուրը երբեմն կը վա-
ղէ և երբեմն կը կայնի . օդը հանդարտ է
կամ յուզուած . արդ անչարժ ջուրը և
հանդարտ օդը վաղուն ջրին և յուզեալ
օդին բնութենէն են :

Արնանք նիւթը անչարժ հասկնալ ,
չարժումն ալ կրնայ նիւթին մէկ օրէնքն

ըլլալ, բայց չենք կրնար հասկնալ թէ նիւ-
թը ի՛նքն է այս օրէնքը իրեն տուողը, ուս-
տի ուրիշ պատճառի մը հարկ կ'ըլլայ գի-
մել որ իր մէջը ունենայ շարժման և կենաց
սկզբունքը. այս ալ Աստուծոյ երկրորդ
յայտնութիւնն է իբրեւ առաջին շարժիչ :

3. Ապացոյց գոյութեան Աստուծոյ
ի կարգէ տիեզերաց :

Նիւթին գոյութենէն և շարժմանէն
առնուած կրկին ապացոյցներուն վրայ կը
հիմնին անոնք, զորոնք ճարտասանք և
բանաստեղծք ընդլայնել կը սիրեն տիե-
զերքին զարմանալի տեսարանը մեր առ-
ջեւը գնելով, ուր ամենակարողութիւն
մը և սքանչելի խմաստութիւն մը կը փայ-
լին : (ՏԷ՝ ՎԵՆԷՆԻ՛ ՃԱՌ՝ ՅԱԱԳԻՍ ԳՈՅՈՒ՝
ԹԵԱՆ ԱՍՏՈՒԾՈՅ . Ս՝ան Ա :)

Աստուծոյ գոյութեան Բնազանցական ապացոյցը
կ'առնուի կատարեալ էակի գաղափարէն,
կարեւոր էակին գաղափարէն, անհու-
նութեան գաղափարէն, և ընդհանուր
գաղափարաց գոյութենէն :

1. Աստուծոյ գոյութեան ապացոյցը
կատարեալ էակի գաղափարով :

Արովհետեւ մարդս անգէտ է և կը խաբուի, չգիտնայն ու խաբուիլը անկատարութիւն է. ուրեմն մարդս կատարեալ էակ մը չէ. և ըստ որում անկատար՝ ինքնագոյ չկրնար ըլլալ, այլ իրմէ գուրս ինքնագոյ պատճառ մը ունի գոյութեանը, և այն պատճառը Աստուած է :

2. Աստուծոյ գոյութեան ասպացոյց՝ հարկաւոր էակի գաղափարով :

Անանկ էակներ կան, որ կրնային ալ չըլլալ, այսինքն ներընդունական էակներ, ինչպէս հող, կենդանի, և մարդն իսկ : Այրընդունական էակը՝ որ երեկ չըկար, և կարելի է որ վաղն ալ չըլլայ, ուրիշ մը կախում ունենալու և ստորնութեան անխորշելի վիճակի մէջ է, այսինքն անանկ պատճառի մը ենթակայ է, որմէ ինքն եղած է. վասն զի մարդ չընդունիր որ բան մը առանց պատճառի ըլլայ : Սակայն ներընդունական էակին պատճառը իրեն պատճառ ուր պիտի գտնէ, կրնանք իրարմէ գերագոյն էակներու շատ կամ քիչ կարգ մը երեւակայել, որոց ամեն մէկը իւր գորութեան համեմատ յառաջադէմ և կանոնաւոր արտադրութեան գործը կը

կատարեն . բայց միշտ հարկ է անկախ և
գերագոյն առաջին սրտածառի մը հասնիլ ,
որ իր սրտածառը իր մէջն ունենայ : Այս
թէ ոչ պիտի ընդունինք թէ առանց սրտ-
ածառի գործ մը կ'ըլլայ , որ անտեղի է :
Արդ այս անկախ և բացարձակ սրտածա-
ռը հարկաւոր էակը՝ որուն սրտածառը
իր մէջն է , Աստուած է : Անշուշտ մար-
դուս հանձարը այս գերագոյն սահմանը
հասնելով՝ կը ստակայ անոր յայտնած խո-
րին խորհուրդներէն , այլ նախ և առաջ
որքան զօրաւոր ալ է , ամենազօրին հետ
փորձի ելնելով՝ տկար գտնուելուն վրայ
չլարմանայ . և ոչ ալ որքան ընդարձակ ալ
է , ինքը անհունին հետ չափուած ատենը
սահմանափակ գտնուելուն վրայ : Իմաս-
տուն միայրը մէկ գիէն խորհրդաւորին՝ որ
մարդկային սահմանափակ մտաց աստուա-
ծային անհուն բանին հետ ունեցած հա-
մեմատութեանը բնական արդիւնքն է ,
մէկ գիէն ալ անտեղւոյն՝ որ սրտածառ-
չունեցող գործ կայ ըսելուն արդիւնքն է ,
մէջ տեղը գտնուելով՝ անտեղին կը մեր-
ժէ և խորհրդաւորը կ'ընդունի :

3. Ապացոյց գոյութեան Աստուծոյ

ընդհանրապէս գաղափարաց գոյութեանն առնուած :

Անանկ ընդհանուր հաստատու և անհերքելի գաղափարներ կան, որոնք աչխարհիս մէջ հասարակաց զգացումը և մարդկային գիտակցութիւնը կը յօրինեն առանց փոխուելու : Ասանաւորապէս ոչ մարդ, ոչ ազգ, և ոչ ալ ընդհանրապէս մարդկութիւնը ասկէ դուրս չեն, առածը ամեն տեղ իւր օրէնքը միշտ և միեւնոյն կերպով մարդոց վրայ կը դնէ, ինչպէս նաեւ գեղեցկին, բարւոյն և ճշմարտին և ասոնց հակառակներուն գաղափարները : Այս օրէնքը թէ հաճելի ըլլայ և թէ ոչ, պէտք է հնազանդիլ, արդ մէկն ալ իւր իմացականութեանը և գիտակցութեանը վրայ անանկ օրէնք մը չդնէր, որկէց խոյս տալը կարելի ըլլայ. ուրեմն ընդհանուր և հաստատուն և անյաղթելի գաղափարաց օրէնքը՝ որուն կը հնազանդի, ինքը դրած չէ. պէտք է որ ուրիշէ ընդունած ըլլայ : Թող որ այս օրէնքը վրան աստուածային բան մ'ալ ունի, և ինչպէս Աստուած անհուն է, ան ալ ընդհանուր է. ինչպէս Աստուած անփոփոխելի է, ան ալ

Հաստատուն է, և ինչպէս Աստուած հը-
ղօր է, ան ալ անընկճելի է : Այս բանե-
րէս կը հետեւցնենք թէ ընդհանուր, ան
փոփոխ և անընկճելի գաղափարաց օրէնքը
Աստուած տուած է. կամ մանաւանդ
ինչպէս Պօսիւէ և Պէնեւրն կը խորհին,
նոյն իսկ ինքն Աստուածն է, որ մարդուս
կը յայտնուի :

Աստուծոյ գոյութեանը բարոյական ապացոյց-
ները կ'առնուին աստուածութեան գաղա-
փարէն և զգացումէն, որ մարդոյս մըտ-
քին դիւրմբռնելի են, և ուղղակի անոր
սրտին կ'երթան. նաեւ կ'առնուին ժողո-
վըրդոց միաձայն հաւանութենէն :

Մարդուս բնական կ'երեւի Աստու-
ծոյ գաղափարը, անանկ որ քանի մը փիլի-
սոփայք իբրեւ բնածին սեպած գաղափա-
րաց առաջին կարգը դատած են : Ինչպէս
ալ մտածուին բնածին գաղափարները, աս
յայտնի է թէ՛ մանուկը դիւրաւ կ'ըմբռնէ
Աստուծոյ գաղափարը և յօժարակամ կը
յիշէ : Աս չէ միայն, սղայն մտքին ինք-
նեկ շարժմամբը՝ Աստուծոյ գաղափարը
կ'ընդլայնէ, ճշդութեամբ կիրառու-

Թիւններ կ'ընէ և կանոնաւոր հետեւանք
կը հանէ անոնցմէ : Այս ժողովուրդը՝ որ
իւր բնական յօժարութեանց հետեւելու
ազատ է, այս կէտիս վրայ միեւնոյն դիւ-
րութիւնը, հլութիւնը և ուղիղ դատու-
մը կը ցուցնէ, ինչպէս որ ճարտասան մը
ըսած է. «Աստուած բոլոր էակաց ընտա-
նեգոյնն է » : Իսկ կըթեալ մարդոց, միայն
թէ անկեղծութիւն և խելք ունենան,
Աստուծոյ գաղափարը որչափ ընտանի է
իւր յայտնի ճշմարտութեամբ և բաղմա-
թիւ կիրառութեամբ, այնքան ալ սրտ-
ուական է : Հանձարեղ մարդիկ Աստու-
ծոյ գաղափարով շատ հարցմանց սպասա-
խանը և խնդիրներու լուծումը կը գտնեն,
և իրենց խորին հասկացողութեանց և
վսեմ ներշնչութեանց գլխաւոր տարրը
սովորաբար անկէ կ'առնեն : Աթէ երբե-
մըն մարդ մը կամ ժողովուրդ մը կրից
կամ յեղափոխութեան յուզմանց մէջ, և
կամ գործոյ կամ կռիւներու յափշտակ-
ուելով, և կամ ծուլութեան և անձնասի-
րութեան անհոգութեամբ մտնայ դ՛ար-
տուած, երբ արտաքոյ կարգի սպասահար-
մը, կամ յաջողութիւն կամ ձախորդու-

Թիւն մը պատահի, շուտ մը կը զարթնուանոր մտայը մէջ Աստուծոյ գաղափարը : Աւ քանի որ կրօնասէր մարդկան և ժողովրդեան կը թելադրէ զինքը պաշտել և յարգել, և ամբարիշտը զինքը կը հայհոյէ և անկէ կը գանգաաի, տարբեր՝ բայց հաւատար զօրութեամբ կը յայանէ այս անկորնչելի վարդապետութեանս ընդհանրապէս և անյաղթելի կերպով հաստատուիլը :

Թող որ Աստուծոյ գաղափարը ամեն ժամանակ ազգաց մէջ կայ, և ամեն տեղ ամեն ժամանակ սեղան, զոհ, աղօթք և կրօնք մը կը գանուին : Վարդս կրցաւ Աստուծոյ նկատմամբ՝ անոր ընտրեանը և հաւատոյն և անոր մատուցանելու պաշտամանը կերպին վրայօք փոխուիլ . բայց Աստուծոյ գոյութեանը մասին ազգաց միակերոյ համաձայնութիւնը հեղինակութեան տեղ բռնելու համար բաւական է այս գաղափարիս ընդհանրապէս ընդունուած ըլլալը :

Այն որ աստուածութեան գաղափարին նկատմամբ ճշմարիտ է, անկէ նուազ ճշմարիտ չէ անոր վրայ եղած զգացման

նկատմամբ: Այս զգացումը ուղղակի թէ՛ մարդոց և թէ՛ ազգաց սիրտը կը ներգործի, որչափ որ ալ տարբեր ըլլայ անոնց հանձարը և կը թուլթուլեն, այս ճշմարտութիւնը ամեն տեղ և ամեն ստե՛ն կայ: Ա՛րեւելի թէ՛ մարդու սիրտը՝ որ չկշտանար բարի բաներով, և շատ անգամ իւր սլա տիր ցնորից զո՛հ կ'ըլլայ, մարդկութեան մէջ զինքը գոհացնող կամ ավտուղ բան մը փնտուելու տեղ, ուրիշ տեղ պէտք կ'ունենայ փնտուել:

Աստուծոյ գոյութեան վարդապետութեան դէմ ուրիշ երկու վարդապետութիւններ կը հանուին, այսինքն Այլիկիւրոսինը և Ալինսողայինը:

Այլի-կիւրոս աշխարհը դիպուածով եղած կը համարի, և կ'ըսէ թէ՛ հիւլէները միանալով եղած է: Ա՛սոց պէտք է նախ ըսել թէ՛ դիպուածով եղած բանը կանոնաւոր և յարմար չկրնար ըլլալ, ուրեմն կանոնաւոր և կարգաւոր աշխարհս՝ ուր ամեն բան ճշդութեամբ իրարու կը յարմարին, դիպուածով եղած չկրնար ըլլար: Արկրորդ՝ հիւլէները ինչպէս կը կե-

նան, եթէ ինքնակայ են, ուրեմն Աստու-
ած են, որ անտեղի է : թէ որ ինքնակայ
չեն, ուրեմն ուրիշ պատճառ մ' ունին իւ-
րենցմէ դուրս, և այս պատճառը Աս-
տուած է, ինչպէս որ ընդհանրապէս նիւ-
թոյ նկատմամբ ըսինք : Այց հիւլէնե-
րուն որկէ ըլլալը հոգ չընելով, կը մնայ
գիտնալ թէ ո՞վ տպաւորեց նախ և ա-
ռաջ անոնց շարժումը : Այլ եթէ ըստ ին-
քեան ունեցած են այս շարժումը, որ ան-
կարելի է, այս մշտնջենաւոր շարժմամբ
եթէ անոնց ամեն մէկը ուղիղ և զուգա-
հեռական գծի վրայ ընթացած են, չեն
կրցած իրարու հետ միանալ : Այլ եթէ
որ և է զօրութեամբ ուրիշ ուղղու-
թեան մէջ մտած են, այն անորոշ զու-
գադրութեանց ինչ ուժ ալ որ տրուի,
ի՛նչպէս կ'ըլլայ որ այդ զուգադրութիւն
ները՝ որ հարկաւ բազդովի են, կանոնա-
ւոր աշխարհս կազմեն, և ի՛նչպէս ա-
նոնք աշխարհ յօրինելու համար մէկ տեղ
բերող զօրութեան սկզբունքը զանոնք
հաղար անգամ իրարմէ չէ զատած, և չէ
աւրած զայն իրենց մշտնջենաւոր շարժ-
մանէն անդադար նորէնոր ծագած զու-

դադրու թիւններով :

Իսկ Սպիտակ միայն անսահման և միակ գոյութիւն մը կ'ընդունի՝ որ է Աստուած . և երկու էական մակդիր կուտայ անոր, տարածութիւն և խորհուրդ . միւս վախճանաւոր էակները, կ'ըսէ, սոյն միակ գոյութեան մասերն են կամ յայտնութիւնները, մարմինը անվախճան տարածութեան, և հոգին աստուածային խորհրդոյն եղանակներն են :

Այս դրութեանս վրայ զոր Ֆենեւնիւր Յաղափս Գոյո-թեան Աստուծոյ ճառովը ընդարձակօրէն հերքած է, բաւական է հոս ըսել թէ ,

1. Տիեզերքը բաղադրող մասերը Աստուծոյ վրայ ժողոված են ըսելը՝ յայտնի հակասութիւն է Աստուծոյ սթարզ ըլլալուն, որ անոր ստորոգելիներուն մէկն է :

2. Այն-թը կոսարաւոր , այլայլելի և հետեւաբար անկատար ըլլալով ինչ անունով ալ ըլլայ, չկրնար Աստուծոյ էութեանը հետ խառնուիլ, որ հարկաւորապէս կատարեալ, ուստի և անհուն և անայլայլելի է :

3. Զընդունուիլ նաև որ մարդուս

խորհուրդը իւր մոլորութիւններով և
թերութիւններով Աստուծոյ խնայակա-
նութեան էական մէկ տեսակն ըլլայ, վա-
սըն զի Աստուած հարկաւորապէս խնա-
տուն և անխալ է :

Վախախնամութիւնն երեք կերպով
կ'ապացուցուի. այսինքն՝ ֆիզիական, բնազան-
շական և Բարոյական ապացոյցներով. ըսել է
նոյն մեթոան է, զոր գործածեցինք Աս-
տուծոյ գոյութիւնը ապացուցնելու մա-
սին :

Վախ Վախախնամութիւնն բառը
հասկցնենք. այս բառը իր մէջ երկու
գաղափար կ'ամփոփէ, այսինքն՝ մէյմը նա-
խատեսելու, և մէյ մ' ալ հոգալ խնամե-
լու գաղափարները. անանկ որ Վախախնա-
մութիւն կայ ըսելը՝ անանկ զօրութիւն
մը կայ ըսել է, որ ամեն բան առաջուց
կը տեսնէ և ամեն բան կը հոգայ :

Վախախնամութեան ֆիզիական ապացոյցը :
Տիեզերքին տեսարանէն կ'առնուի Վա-
խախնամութեան ֆիզիքական ապացոյցը :
Տիեզերքը ինչ տեսութեամբ ալ որ մտա-

ծենք, իրարու հետ կապուած մասերու կանոնաւոր հաւաքումն է, որոնք այնպէս կարգով կանոնով շարուած են որ ներգաշնակաւոր ամբողջ մը կը կազմեն: Ա՛յն տեղ կը տեսնուին որոշ վախճաններու կատարելապէս համեմատ միջոցներ, եղանակաց կանոնաւոր կարգը, տունջեան և գիշերուան անսիրտիս յաջորդութիւնը, գետոց ընթացքը, երկնային մարմնոց շարժումը, կենդանեաց կազմութիւնը և անոնց բնական ազգամունքը, մարդուս կազմութիւնը և իւր բանավարութիւնը, խել մը տարբեր պէտքեր և զանոնք գոհ ընելու միջոցներ:

Ահա ասոնք են տիեզերաց տեսարանին մեզի ցուցրցած բաները, որոնք կը հաստատեն թէ կայ այնպիսի աստուածային զօրութիւն մը որ ամեն բան կը տեսնէ և կը հոգայ, այն է Այախանաւորութիւնը:

Այախանաւորութեան՝ ինչպէս որ Աստուծոյ գոյութեան ալ այս ֆիզիքական ապացոյցը Ֆենելոն բացատրած է Յաղագոյր-Իեան Աստուծոյ ճառին մէջ: Այս գիրքը փիլիսոփայական և գրագիտական նը

կատմամբ՝ այս տեսակ գրուածոց օրինակ
մ' է :

Նախախնամո-լիւան բնազանցական ապացոյցը :
Նստուծոց արուած մակդիրները Նախ
խախնամութեան բնազանցական ապա-
ցոյցն են :

Տիեզերաց մէջ ոչ միայն ամեն բան
նախատեսած և հոգացած է, այլ անանկ
ալ ըլլալու է : Նստուած աշխարհի արա-
րիչ ըլլալով՝ իր իմաստութեան անանկ
կը վայլեր որ ըստ գիւղաց և առանց կա-
նոնի բան չընէ : Նստուած իւր արդարու-
թեամբը ամեն միջոց՝ իւր նշանակած զա-
նազան վախճաններու պատշաճելու էր :
Նստուած իւր գթութեամբը իւր արա-
րածներուն մէկն ալ գոնէ իւր կողմէն տա-
ռասպանաց մէջ ձգելու չէր : Արջապէս
Նստուած իւր անհուն զօրութեամբը՝ իւր
իմաստութեան, արդարութեան և գթու-
թեան գործը կատարելու կերպը գտնելու
էր, այսինքն ամեն բան նախատեսելու, ամե-
նը հոգալու և այսպէս աշխարհիս նախա-
խնամող ըլլալու էր :

Նախախնամո-լիւան բարոյական ապացոյցը :

Ինչ առարկութիւն որ Մատուծոյ գոյութիւնը բարոյական փորձով ապացուցած ատեննիս տուինք, հոս ալ նոյնն է, միայն գոյութեան բառին տեղ նախախնամութիւն դնելու է: Այլ յիրաւի չկայ բան մը որ ուղղակի մարդուս սրտին և մտքին աղէկ տպաւորուի, որչափ մեր վրայ հակող գերագոյն և ողորմած զօրութեան գաղափարը և զգացումը, ուսկէ հրսարասէնք օգնութիւն և պաշտպանութիւն գտնել:

Մարդս քանի որ ուղղագատ խնայականութիւն և ուղիղ սիրտ ունի, կը վատահի առ Մատուած, յոյսը անոր վրայ կը դնէ, սուրբ հաւատքով մը կ'աղերսէ, և իւր ներքին խորհուրդը և սէրը գրեթէ բնապէս անոր կը վերաբերէ. իսկ երբ որ դժբաղգութիւն մը պատահի կամ յաջողութիւն, դարձեալ Մատուծոյ կ'աղերսէ կամ շնորհակալ կ'ըլլայ. հոս ալ թէ ամբարիշտը որ կը հայհոյէ թէ բարեպաշտը որ կ'երկրպագէ, թէպէտ այլ և այլ ձեւով, բայց հաւասարապէս Աստախնամութեան ճշմարտութիւնը կը խոստովանին:

Իսկ մարդկային ազգին վրայ խօսելով
անոր վկայութիւնը բանավարու թեան
վկայութեան հետ նոյն է :

Ամեն ատեն ամեն ժողովուրդ երգ ,
աղօթք , գոհութիւն , արարողութիւններ
և զոհ ունեցած են , կամ շնորհք խնդ
դրելու համար , և կամ իրենց ընդունած
շնորհաց համար շնորհակալ բլլալու : Ա-
տոնք չէին բլլար անշուշտ՝ եթէ ժողովը
դեան բարի զգացմունքը չհաւատար թէ
Աստուած մարդուս գործոց կը խառնուի :

Աստուծոյ՝ Ախտախնամութեան դէմ
չատ առարկութիւններ եղած են , անոնց
գլխաւորներէն երկուքը գնենք : 1. Ինչո՞ւ
Աստուած մէկուն շատ տուած է , և մէ-
կուն քիչ : 2. Ինչո՞ւ աշխարհիս մէջ ֆիզի-
քական և բարոյական չարիք կ'ըլլան :

Եւստի՞ն առարկութիւնն :

Եթէ անգամ մը մարդկային ընկե-
րութիւնը նկատելու ըլլանք , կը տեսնենք
որ բարիքն և չարիքը մարդուս հաւասա-
րապէսչեն բաշխուած : Աս ալ չէ բաւա-
կան , կրնանք դիտել որ շատ անգամ ա-
ռաքինիք դժբաղդ կ'ըլլան , երբ անգգա-

մը յաջողութեան մէջ է : Ինչպիսի կ'ըլլայ
 թէ նախախնամութեան մը տակ՝ որ բտել
 է նոյն իսկ Աստուծոյ տակ, իրաց պատէս
 վիճակ մը սրկէ կուգայ. և շուտ մը կըս-
 կանք Աստուծոյ իմաստութիւնը, արդա-
 բութիւնը, գթութիւնը և զօրութիւնը
 ամբաստանել : Ասոր համառօտիւ կը սա-
 տասխանենք. նախ, մարդս բարոյն և շա-
 բին վրայ ունեցած գաղափարովը շատ ան-
 գամ կը խաբուի, վասն զի բարին չար՝ և
 չարը բարի կ'անուանէ, երկրորդ, առաքինի
 մարդը չկրնար ըլլալ որ մեղք չգործէ .
 իւր կրօն տառապանքը իւր ըրած մեղքե-
 րուն պատիժն է, միանգամայն և առաքի-
 նութիւնն ալ կը փորձուի. վասն զի շու-
 փորձուած առաքինութիւնը իւր վրայ
 վասակ չկրնար ըլլալ. երրորդ, չարը ան-
 շուշա ծառայութիւն մը կամ բարի գործ
 մ'ունի. այս բարեաց փոխարէն ահա յա-
 ջարութիւն գտած է : Աստուած այս յա-
 ջարութիւնը երբ կուտայ, զանի երախ-
 տագիտութեամբ առաքինութեան հրա-
 ւիրելու միջոց մ' է :

Իսկ երկրորդ առաքիլութեան գալով, Ֆի-
 ղիքական շար ըսածնիս շար չէ, այլ մեր

անկատար գաղափարները և սահմանա-
ւոր իմացականութիւնը այնպէս դատած
են: Ինտութեան մէջ շատ իրեր կային, ու
բոնք գէշ սեպուած էին երկար ատեն,
բայց ետքը անոնց օգտակարութիւնը
ճանչուեցաւ. թող որ ֆիզիքական չարի-
քը մարդուս պակասութենէն և անխոհե-
մութենէն կը պատճառի: Շատ անգամ
մտքին և սրտին ցաւերը առաջ կուգան
իմացականութիւնը և կամքը գէշ գործա-
ծելէն, օրինաւոր յօժարութիւնները ան-
կարգ բանեցրնելէն, և մոլի կրից անու-
լէն: Կսկ բարոյական չարին պատճառը
Նստուած չէ. և շատ անգամ մարդոյս
ազատութեանը համար կը ներէ որ ասոնք
ըլան: Թող որ բարոյական վիշար առա-
քինութեան հարկաւոր պայմանն է. և
մէկ մ'ալ, որ քիչ կը սրտասհի բարոյ-
ական չարիքէն բարի չելնէ: Կսկէ զատ
անտանելի և իրական չարիքը՝ որ թէ ֆի-
զիքական և թէ բարոյական զգայմամբ
կ'ըլայ, վերը ըսածնուս կը յարմարին,
ուր ըսինք թէ վիշտերը մեզի գալը կան՝
մեր մեղացը համար է և կան՝ առաքինու-
թիւններնուս նախախնամական փորձն է:

Վերջապէս ներկայ կեանաց նկատմամբ
ինչ որ անբացատրելի կ'երեւայ այս ծանր
խնդրոյն մէջ, հանդերձեալ կենաց վար-
դապետութիւնը կատարելապէս և օրի-
նաւորապէս կը լուծէ զայն :

Գ Լ Ո Ւ Խ ԺԹ.

Թէ ի՞նչ մեթոտ բռնելու, է որ բարոյական
օրէնքը եւ անոր զանազան վնիւնները ա-
պացուցանենք :

Բարոյական օրէնքը այն կանոնն է,
որ մեր սպարտը և իրաւունքը՝ որոնք նոյն
օրէնքէն կը ծագին, կ'որոշէ :

Իրաւունք կ'ըսուի այն բանը, զոր օ-
րինաւորապէս կրնանք պահանջել :

Պարտք կ'ըսուի այն բանը, որ օրինա-
ւոր կանոնի մը համեմատ կը կատարուի :

Այս բարոյական օրէնք մը, այսինքն
անանկ օրէնք մը որ մարդուս սպարտը և
իրաւունքը կը հաստատէ, անոր հիմը և
սկզբունքը բանավարութեան մէջ է, և

Ֆարդոց կը յայտնուի բնական օրէնք աւ
տունով հասարակ զբացման և մարդկային
բխտակցութեան աւանդութիւններով :

Ինչ հանգամանք որ միւս օրէնքնե-
րն ունին, նոյնը բարոյական օրէնքն ալ
ունի, վասն զի ամենուն հիմն ալ աս օ-
րէնքն է :

Հոս հարկ է քննել թէ ընդհանուր
առմամբ ինչ է օրէնքը, և որո՞նք են ամեն
օրինաց հանգամանքը :

() օրէնքը՝ օրինաւոր իշխանութենէ
մ' ելած կանոնն է, և հետեւաբար ար-
դարութիւնը անոր հարկաւոր հիմն է :

() օրէնքը պէտք է որ ըլլայ ծանօթ, գոր-
ծարէիք, յիշերայ, հասարակուն և վճռուած :

() օրէնքը պէտք է որ ծանօթ ըլլայ, ինչ
պէս որ այս բարոյական առածը կ'ըսէ .
« Վարդ իր չգիտցածին չպարտաւորիր » :
Վարդկային օրէնքը հրատարակուելով ծա-
նօթ կ'ըլլայ, այսինքն հասարակաց յայտա-
րարութեամբ, որուն ձեւերը և կերպե-
րը ժամանակին և տեղին նայելով կը փո-
խուին :

Ամեն օրէնք պէտք է որ գործարէիք

ըլլայ, այսինքն գործադրուելու է, ինչպէս կ'ըսէ առածը. « Ենկարելիին մարդ չպարտաւորիր » :

() րէնքը՝ Բաբելոն, այսինքն ամենուէն համար հաւատար պիտի ըլլայ : Այլ յիրաւի օրէնքն արդարութեան բացասութիւնն ըլլալով անոր համեմատելու է . ոչ յատկօրինութիւն ճանչելու է, ոչ բացառութիւն, և ոչ անիրաւ աչառութիւն : Ասանկ որ ըլլայ, իր սրբազան հանգամանքը կը կորսունցընէ և ինքնակամ հաճոյք կ'ըլլայ :

() րէնքը կոստատուն պէտք է որ ըլլայ, այսինքն անփոփոխելի, քանի որ հաստատող սրտածառները միեւնոյնը կը մնան, սպա թէ ոչ իւր բոլոր զօրութիւնը կը կորսնցընէ, և ոչ ալ յարգանքի մը իրաւունք կ'ունենայ, այսօր բան մը կը հրամայէ կամ կ'արգելու, գուցէ վաղը իր ուղածին պէս զայն կը դարձընէ :

() րէնքը պէտք է որ լճոտանք ըլլայ : Վճիռ օրինաց կ'ըսուի օրէնքին գործադրութիւնը սպահովցընելու համար մտածուած միջոցներուն հաւաքումը, այս միջոցները որ մարդոյս տկարութեանը համար հար-

կաւոր եղած են, պատժոց և վարձուց
մէջ կը բովանդակին :

Ան ընդհանուր օրինաց հանգամանքը
բարոյական օրէնքին շշդիւ կը պատկանի :
Այլ յիրաւի բարոյական օրէնքը պէտք է ծա-
նօթ ըլլայ, ամեն մարդ իր խղճմտանքին մէջ
ունի :

Բարոյական օրէնքը գործադրելի է .
նոյն իսկ Աստուծոյ կը ծագի, որ անհնա-
րին բան մը չհրատայեր. թող որ մարդ-
կային գիտակցութիւնը զօրութեանց օ-
րինաւոր չափէն դուրս ելածը չընդունիր :

Բարոյական օրէնքը մտախրայ է . որչափ
որ շատ առընչութիւններ ունենայ, բա-
նի մը մասնաւոր կերպերու ստակ կը մտ-
նէ . բայց իրեն հիմ եզրող մեծ սկզբուն-
քը անխափր ամեն մարդ կը պարտաւորէ .
ստիկա փորձով խնայուած բան մ' է :


Բարոյական օրէնքը հասարակօրէն է, վա-
սըն զի ամենեւեմ հակասութիւն չունի,
ոչ ինքնահաճութիւն և ոչ թերութիւն .
նոյնն է ինչ որ էր Վեներանի ստեն, ինչ որ
էր Սոկրատոս ստեն, ինչ որ էր նահապե-
տաց վրաններուն տակը, և ինչ որ էր աշ-

խարհի առաջին օրերը :

Բարոյական օրէնքը երկու լճի ունի, մարդկային և աստուածային :

Արդիային լճի շրջան է, մէկ կողմէն նիւթական, և միւս կողմէն բարոյական : Արդիային այն ապահով յաջողութիւնն է, զոր վաճառականութեան կամ որ և է գործառնութեանց մէջ աշխատասէրը և խելացին աւելի կ'ունենայ՝ քան թէ անխոհմը և կոպտոր : Իսկ բարոյականն է այն յարգանքը վստահութիւնը և համակրութիւնը զորս բարի մարդ մը կ'ունենայ, և որոնց հակադարձը այսինքն հակակրութիւն անվստահութիւն և անարգանք չարը կ'ունենայ թէ ուշ և թէ կանուխ, և որ ասոնցմէ աւելի է, մասնաւորապէս ձախորդութեան անխորշելի օրերուն մէջ անոր ունեցած խղճմտանքին վկայութիւնը :

Աստուածային լճի շրջան հանդերձեալին մէջ մեզի խոստացուած սրտի թը կամ վարձատրութիւնն է :



Գ Լ Ո Ի Խ Ի .

Մարդուս վախճանական վիճակը եւ հոգւոյն
անմահութիւնը :

Մարդոս վախճանական վիճակ մ'ունի, այս-
ինքն՝ բազմութիւնն այս աշխարհիս մէջ դրու-
ուած չէ :

Մարդոս գերազանցապէս կատարեալ
էակի մը ձեռաց գործն է : Արդ Աստուած
իւր իմաստութեամբը նպատակ մը պէտք
էր ցուցնել մարդուս, և նոյն նպատա-
կին հասնելու համար միջոցներ ալ տա-
լու էր իւր արդարութեամբը, այս ամե-
նուն բաւական ըլլալու միջոցները իւր
կարողութեան մէջ կը գտնէր : Աւրեմն
մարդոս վախճանական վիճակ մ'ունի,
բայց ո՞րն է սյս :

Աստուած իւր գերագոյն և բացար-
ձակ անկախութեամբը ինքնաբաւ է, և
իր ամեն գործերը իրեն կը վերաբերէ :
Աստուած մարդոս երբ ստեղծեց, իւր գե-
րագոյն բնութեան այս օրէնքը պահեց .
բայց իւր անվախճան գիծութեամբը ու-
ղեց իւր արարածներուն մեծամեծ բարիք

ընել: Արդ Ատուծոյ առաջարկելիք աւ
մենամեծ բարիքը նոյն խակ ինքն է. Ատու
ուած ինչպէս որ մարդուս սկիզբն է, ա
նանկ ալ վախճանն է. բայց սակայն Ատ
տուծոյ անբաւ կատարելութիւնը չոր և
անմարութ բանի մը հետ չմիաբանիր. Ը
սել է թէ մարդս Ատուծոյ հետեւելու
համար գոնէ իւր բնութեան կրցածին
չափ կատարեալ ըլլալու պիտի աշխատի.
այս է ահա առարկիւթիւնը: Աւրեմն՝

Սարդուս վախճանական վիճակն է ստացինոս
Բեամբ արժանի ըլլալ Գառնալ առ Ապրիլիս,
որ իւր սկիզբն և վախճանն է: Այս վախճա
նական վիճակը մարդոց նկատմամբ ներ
կայ կենաց փորձանքներէն ետքը կը կա
տարուի, վասն զի հոգին անմահ է:

Հոգւոյն անմահութիւնը կը հաս
տատուի. 1. հոգւոյն պարզութեամբը. 2. Ատուծոյ արդարութեամբը. 3. ազգաց
միաձայն վկայութեամբը. 4. հոգւոյն
առ անհունութիւնն ունեցած տենչովը:

1. Ապացոյց անմահութեան հոգւոյ
իւր պարզութենէն: Սահը կենդանի էակ
մը բաղկացրնող մասանց իրարմէ բաժնը

ւերուն արդիւնքն է : Արդ որովհետեւ
հոգին աննիւթ ըլլալով՝ պարզ և անբա-
ժանելի է , («էս գլ ժե . ») այս քակու-
ման օրէնքին տակ շմաներ . այսու ամե-
նայնիւ այս փաստիս գէմ կրնայ առար-
կուիլ թէ՛ Աստուծոյ կարողութիւնը սահ-
մանի տակ առած կ'ըլլայ : Այլ ստուգիւ-
նոյն Աստուածը որ մարդս ստեղծած է ,
կրնայ ուրիշ միջոցով և նշ թէ անոր մա-
սունքը բաժնելով՝ մարդուս տուած կեան-
քը սանել :

2 . Ապացոյց անմահութեան հոգւոյ
Աստուծոյ արդարութենէն : Կենաց սովա-
րական ընթացքին մէջ կը տեսնենք՝ որ
բարիքն ու չարիքը հաւասարաբաժին տըր-
ուած չեն մարդոյս . ասիկա արդար Աս-
տուծոյ մը իշխանութեան տակ անկար-
գութիւն մ' եղած կ'ըլլար , եթէ Աստու-
ած հանգերձեալ կենաց մը մէջ իւրա-
քանչիւր մարդիկ լատ իւր գործոյ դա-
տելը իրեն յասկացուցած չըլլար :

3 . Ապացոյց հոգւոյ անմահութեան
ազգայ համաժող հաւանութենէն :

Ամեն լուսաւորեալ ազգ հոգւոյ ան-
մահութեան վարդապետութիւնը ըն-

դուռնած է . ամեն ժամանակի փիլիսոփա-
ներ ասոր վրայ վիճած են : Վ՛մեն պատմա-
գիր զայն կ'ընդունի և կամ կ'ենթադրէ .
բանաստեղծք երգած են , և ուրիշ բան
մը չկայ զոր ճարտասանք ասոր չափ հռչա-
կած ըլլան : Վ՛մեն ազգ կրօնական մեռե-
լաթաղ ունեցած են , և վայրենի ժողովը
դոց իրենց հիւղիկին վրայ ունեցած սի-
րոյն պատճառը նախնեաց սրբազան յի-
շատակութիւնն է կ'ըսեն շատերը : Վ՛զ-
գաց ասանկ մեծ խնդրի մը վրայ միաձայն
հաւանութիւնը պատկառելի հեղինա-
կութիւն մը կը կազմէ , և ստուգութիւնն
ապացուցանելու բաւական է :

4 . Վարացոյց անմահութեան հոգւոյ
մարդուս առ անհունն ունեցած տենե-
չանքէն :


Սարգս բնականաբար անհունու-
թեան կը տենչայ , իւր խմայականութեան
բոլոր ուժովը անոր ետեւէն կ'ըլլայ , ջերմ
փախաբով կը խնդրէ , և ստուգիւ անհու-
նութիւն կ'ուզէ գիտութեան մէջ , ան-
հունութիւն սիրայ մէջ և անհունութիւն
երջանկութեան մէջ . մարգս բնաւ բա-
ւական համարիր տեսածը լսածը և սոր-

վածք. որչափ գիանայ, այնչափ գիանալ
կ'ուզէ, և կենացը վերջն անգամ հասնի՝
դարձեալ բան կը հարցընէ : Թող որ
մարդն ստեղծուած է որ սիրէ և սիրուի,
և իւր սիրած յօժարութիւնները անոնք
են, որոնք ընդարձակ ասպարէզ մը կը
բանան անձնանուիրութեան : Անձնանը-
ւէր սիրաւ սձիր մը գործած կ'ըլլայ, երբ կը
հաշուէ այն վայրկեանը ուր ետ սխախ քաշ-
ուի, և եթէ սիրտ մը մեղի նուիրուելով՝
նշանակէ այն օրը երբ մեղմէ ետ սխախ առ-
նուի, սկիզբէն կը մերժենք զայն, այնքան
ճշմարիտ է թէ մեր սիրոյն պէտք է անհու-
նութեան հրապոյրը : Այսպէս է երջան-
կութեան համար ալ, կ'ուզեմ բնէ սոյն ցը-
նորքին՝ որ անգագար կը խաբուի և անգա-
գար կը նորոգուի բոլոր մեր կենացը մէջ :

Վայց տկար և սահմանաւոր էակի
մը մէջ սով կարողացեր է ասանկ առոյգ
և անընկճելի բան մը դնել, ասիկա մար-
դուն գործը չէ : Մարդս չի կրնար իւր
իշխանութեան տակ շեղածը ինքն իրեն
առնուլ, և անհունութեան գաղափարը
զգացմունքը և տենչը նոյն իսկ անհուն
էակին ձեռքով մեղի կը ներշնչուին :

Այդ Աստուած իւր խնամտութեամբ
բը, արդարութեամբը և գթութեամբը
իւր արարածոցը վրայ նայելով չպիտի զը-
ւարձանար, եթէ իւր տուած ակնկալու-
թիւնները ստեր և ի գերեւ հաներ. և
իւր ամենակարողութեամբը կը գտնէ այն
գաղափարը զգացումը և պէտքը արդիւ-
նաւորող միջոցը, զորոնք մեր կութեան
խորը գրած է :

Վ Ե Ր Զ



- Սլառուին Տրամաբանութեան : 1
- ԳԼՈՒԽ Ա • Տրամաբանութեան նպատակը, ու բիշ
դիտութեանց հետ անոր ունեցած վերաբերու-
թիւնները : 5
- ԳԼՈՒԽ Բ • Հստակ խորհրդութեանց, զգայու-
նութեան (Sensibilité), իմացականութեան
(Entendement) և կամաց (Volonté) վրայ : 8
- ԳԼՈՒԽ Գ • Զգայունութեան, (Sensibilité),
Զգայականութեան (Sensation) և Զգացմանց
(Sentiment) վրայ : 12
- ԳԼՈՒԽ Դ • Իմացականութեան գործողութիւն-
ները, մտադրութիւն (Attention), բաղդատու-
թիւն (Comparaison), դատում (Jugement)
և արամտահոհութիւն, կամ իմաստասիրութիւն
(Raisonnement) : 19
- ԳԼՈՒԽ Ե • Ընդհանուր գաղափարաց, անանց
ծագմանը, զանազան հանդամանացը, սեռականաց,
նշանաց և նախնական ճշմարտութեանց վրայ : 25
- ԳԼՈՒԽ Զ • Յիշողութիւն, գաղափարաց յարակ-
ցութիւն, և երեւակայութիւն : 34
- ԳԼՈՒԽ Է • Ընդհանրապէս նշանաց և մասնաւո-
րաբար լեզուին վրայ : Գաղափարաց կազմու-
թեան վրայ նշանաց ունեցած ազդեցութիւնը :
Ճանօթութիւնը ընդհանուր բնականութեան
41
- ԳԼՈՒԽ Ը • Մեթոտի վրայ ընդհանրապէս, և եր-
լուծութիւն և Բաղադրութիւն (Synthèse),
Ֆիզիքական և Բնական գիտութիւն, Գիտու-
ղութիւն, Վարձ, Դասակարգութիւն (դասա-
կարգութիւն բնական, դասակարգութիւն ար-
ուեստական) : 48

ԳԼՈՒԽ Թ. Համեմատութիւն, Մակածութիւն.
Ենթացութիւն : 36

ԳԼՈՒԽ Ժ. Ճ՛շդ գիտութեանց մէջ դորձածուած մեթոտը. Առած (axiome), Մահման, Արարչութիւն և Յայանութիւն : 60

ԳԼՈՒԽ ԺԱ. Հաւարարանութիւն. անոր ձեւերը և կանոնները, Հաւարարանութեան դորձածութիւնը և զեղծուծը : 67

ԳԼՈՒԽ ԺԲ. Բարոյական գիտութեանց մէջ բռնուած մեթոտը : 80

ԳԼՈՒԽ ԺԳ. Մարդկային վկայութեան հեղեանակութիւնը : Կանոնք պատմական քննադատութեան : 84

ԳԼՈՒԽ ԺԴ. Թէ ի՞նչ է ստուգութիւնը (Certitude) ընդհանրապէս, և քանի՛ կերպ է : Թէ ի՞նչ է մեր մտքութեանց պատճառը, և ի՞նչպէս դարձան տանելու է : 96

ԳԼՈՒԽ ԺԵ. Թէ ի՞նչ է կամքը (volonté) : 106

ԳԼՈՒԽ ԺԶ. Թէ ի՞նչ է գիտակցութիւնը (Conscience) և բարոյական զգացումները : 116

ԳԼՈՒԽ ԺԷ. Թէ ի՞նչ մեթոտի կանոններ կը դորձածուին հոգւոյն աննիւթականութիւնն և աղատութիւնը բացատրելու համար : 119

ԳԼՈՒԽ ԺԸ. Թէ ի՞նչպէս պիտի դորձածենք մեթոտները, որ Աստուծոյ գոյութիւնը և նախաինամութիւնը ստացուցանենք : 129

ԳԼՈՒԽ ԺԹ. Թէ ի՞նչ մեթոտ բռնելու է որ բարոյական օրէնքը և անոր զանազան վճիռները ստացուցանենք : 148

ԳԼՈՒԽ Ի. Մարդու վախճանական վիճակը և հոգւոյն անմահութիւնը : 154

